3-15

1897

ԹԻԻ Զ· ՅՈՒՆԻՍ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ՀՐԱՄԱՅԵՑԵԻ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄԻՐԱՉՆԱԴՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՅԽԻ Լ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ՎԵՑՑԵՐՈՐԴ | ՅՈՒՆԻՍ 1897 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԿԵՆՍԱՏՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ.

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն:

Սաղմ. ԿԱ:

Կրօնը աղբերի գոյութեան խարիսխն է: Նա է մեր երկրաւոր կեանքին բովանդակութիւն տուող զօրութիւնը: Ուր կրօն չկայ, այնտեղ և ճշմարիտ կեանք չկայ: Որովհետև նա է այն սրբազան աւազանը, որտեղից կեանքի աղբիւրներ են հոսում: Նա է ցոյց տալիս այն բարձրագոյն նպատակը, առանց որին մեր կեանքը կենդանականից ոչնչով չէր որոշուի: Առանց նորան մեր կեանքը անվերջ մոլութիւնների մի շղթայ կլինէր միայն:

Կրօնի հայրենիքը մեր հոգևոր աշխարհն է կեդրոնն է, մեր նեղքին աշխարհի սրբութիւն սրբոցը: Այնտեղ է սկզբնաւորուում և զարգանում այն յարաբերութիւնը, որ մենք ունինք դէպի Աստուած և դէպի մեր ընկերը: Դա աստուածութեան բնակարանն է մարդու հոգու մէջ, և նորա շունչը սրբում մաքրում է կրօնական անձնաւորութեան նեղքին աշխարհը և այնտեղից բղխող արտաքին գործողութիւնները: Նա զարկ է տալիս, որ մեր երկրաւոր կեանքն էլ սրբազան և նուիրական

զաղափարների իրականութիւն լինի: Այսպիսով կրօնական անձնաւորութեան մէջ մարմնանում են և բարոյական կատարելութեան պահանջները: Արդարև իրական կեանքն էլ ցոյց է տալիս, որ կրօնական անձնաւորութեան բարոյականութիւնը աւելի վսեմահելի է և հաստատուն: Յատկապէս քրիստոնէութեան մէջ կրօնն ու բարոյականութիւնն ամենասերտ միութիւն են կազմում: Մինչև իսկ կրօնի հակառակորդներից շատերն ընդունում են, որ ազգերն առանց կրօնի բարոյական լինել չեն կարող, թէև բացատում են մի և նոյնը անհատների համար: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ բարոյական կեանքը ծագել է կրօնական հողի վերայ. կրօնի անկման հետ՝ սկսուում է և ազգերի բարոյական անկման շրջանը: Իրրև փաստ բաւական է յիշել հռոմէական կայսրութեան և Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակները: Սորանով մենք չենք ժխտում քրիստոնեայի մեղանչականութիւնը. բայց ուրիշ է գայթակղութիւնը և ուրիշ գիտակցական յանցանքը, իսկ վատթարագոյնն է, երբ գիտակցական կատարուած մեղքը այլևս ջնաս չէ համարուում: Նոյն իսկ եկեղեցու պատմութեան մէջ մեծ սուլերներ կան, ինչպէս սիմոնականութիւնը կամ հաւատաքննութեան հետ կապուած չարիքները, բայց դորա համար քրիստոնէական կրօնը մեղադրելն առնուազն մեծ սխալ է: Կատարեալ կրօնական անձնաւորութեան համար բարոյական պատուէրներն ու օրէնքները այլ ևս կարևոր չեն. նորա կեանքն ամբողջապէս բարոյականութիւն է: Երբ աստուածային և մարդկային կամքերի մէջ ներդաշնակութիւն է տիրում, այնտեղ այլ ևս օրէնքը ոյժ չունի, որովհետև կրօնական մարդու ներսից արդէն ինքնըստինքեան բղխում են ամենակատարեալ բարոյական օրէնքների պահանջները: Կրօնական անձնաւորութեան հնազանդութիւնն առ Աստուած անձնուիրութեան է առաջնորդում նորան և ընկերոջ համար: Այս ճշմարտութեան համար մենք կենդանի օրինակ ունինք մեր Փրկչի անձնաւորութիւնը: Նորա խաչելութեան ճանապարհը Գեթսեմանի պարտիզից է սկսուում: Նորա կրօնականութիւնն ու բարոյականութիւնը, պարտքի զգացումն ու մարդասիրութիւնը՝ ներդաշնակ միութիւն էին կազմում: Նորա ամբողջ կեանքը Աստուծոյ կամքի կատարումն էր, բայց մի և նոյն ժամանակ սէր դէպի մարդիկ: Քրիստոս ինքն էլ բարոյականութեան և կրօնի մէջ խորութիւն չէ դնում. քրիստոնէութեան երկու մեծ պատուիրանները՝ սէր առ Աստուած և առ ընկերն՝ նորա անձի, գործունէութեան և վարդապետութեան մէջ անխզելի միութիւն են կազմում:

Բայց այսպէս է ոչ միայն անհատի, այլ և ամբողջ ազգութեան համար. անհատի փրկութեան ճանապարհը ազգերի փրկութեան ճանապարհն է: Պատմութիւնը վկայում է, թէ մարդկութիւնն ինչ որ դեղեցիկ և ազնիւ բան է արտադրել՝ կրօնից է բղխել կամ նորա հետ է կապուած: Մարդկային հոգու ամենահին յիշատակարանները կրօնական յիշատակարաններն են. կրօնն է մարդկային քաղաքակրթութեան մայրը, նորանից է ծագում ուսել և զարգացել քաղաքակրթութիւնը իւր բոլոր ճիւղերով: Հնդկաստանում, Ասորեստանում և Եգիպտոսում քաղաքակրթութիւնն ամենասերտ առընչութեամբ կապուած էր կրօնի հետ: Եգիպտացւոց քրմերը մի և նոյն ժամանակ նոցա դիտնականներն էին: Բաբելացւոց կրօնի հետ էր կապուած աստղագիտութիւնը: Քրմերն էին նոյնպէս և ազգերի մատենագիրներն ու պատմաբանները: Արուեստի ամենահին և դեղեցիկ յիշատակարանները բացառապէս կրօնական են: Հելլենական աստուածների տաճարները ճարտարապետութեան ամենագեղեցիկ արգիւնքներն են եղել: Արձանագործութիւնը նոյն ընթացքով է զարգացել. աստուածների ու աստուածուհիների արձաններն էին այդ արուեստի ամենագեղեցիկ արտադրութիւնները: Հրէական մատենադրութիւնն ամբողջապէս կրօնական է:

Բայց ինչ որ ասացինք հեթանոսական քաղաքակրթութեան համար, նոյնը կարող ենք ասել և քրիստոնէութեան համար աւելի հաստատութեամբ: Կանհետանար հին քաղաքակրթութիւնը, եթէ քրիստոնէութիւնը չիբացնէր և յետագայ սերունդներին չյանձնէր նորան: Քրիստոնէական առաքելութեան հետ սկսուում է և եւ-

ըոպական ազգերի քաղաքակրթութիւնը. քրիստոնէութեան մուտքի հետ սկսուում է շատ ազգերի դէրն ու գրականութիւնը: Շատ հեռու կտանէր մեզ, եթէ մենք մանրամասնութեան վերայ կանգ առնէինք, կարճ այսքանս կասենք, որ արդի քաղաքակրթութիւնը զարդացել է ամբողջապէս քրիստոնէական հողի վերայ նոր տարրեր աւելացնելով՝ կամ հինը մշակելով և նոր ազգերին տալով: Միջին դարու գիտութեան բոլոր մշակները բացառապէս եկեղեցականներ են: Նկեղեցական ճարտարապետութիւնը յաւիտենական փառքի կոթող է այդ արուեստի պատմութեան համար: Նկարչութեան ոսկեդարը ծաղկել է եկեղեցու մէջ. այնտեղ է զարգացել նաև երաժշտութիւնը իւր ճիւղերով:

Սորանով ի հարկէ մենք չենք ուզում ասել, որ արդի քաղաքակրթութիւնն ամբողջապէս քրիստոնէական է, և ոչ էլ ուզում ենք ասել, որ նա բացառապէս կրօնական պէտք է լինի. ժամանակի ընթացքում զարգանում է քաղաքակրթութիւնը և անկախ դիրք ստանում: Դա բնական է և անհրաժեշտ. որովհետև որքան և նոքա արմատով միացած լինեն, տարբեր պահանջների են ծառայում: բայց որքան հարկաւոր է այդ անկախութիւնը, այնքան և անհրաժեշտ է այն ներդաշնակութիւնը, որով քաղաքակրթութեան համար մի վեմ և յաւիտենական նպատակ է որոշուում: Նրբ խախտուում է քաղաքակրթութեան և կրօնի մէջ եղած ներդաշնակութիւնը, չորանում են կեանքի ամենահոտաւէտ ծաղիկները: Կրօնին թշնամի քաղաքակրթութիւնը մարդկութեան կեանք տալ չէ կարող, այլ հեռզհեռէ հինից նորա բարոյական անկման որորանը կդառնայ: Կրօնի անկումը ժողովրդի անկման ամենահաստատուն նշանն է: Այս է ապացուցանում մեզ քաղաքակրթութեան երկու մեծ ներկայացուցիչ ազգերի, յունաց և հռովմայեցւոց, պատմութիւնը:

Կրօնի հիմքը մարդու հնազանդութիւնն է Աստուծոյ կամքի առաջ և այդ հնազանդութիւնից միայն պէտք է փրկութիւն սպասել:

«Բայց միայն Աստուծոյ հնազանդ լիր, անձն իմ պի ի նմանի է ինձ փրկութիւն»:

Գարեգին Սարկաւագ:

ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ
ԸՂՁԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ.

(Շարունակութիւն) *

Բաղցեայ՝ եւ եսուք ինձ ուտիլ, ծարաւեցի՝ եւ արբուցիք ինձ. օտար էի՝ եւ ժողովեցիք զիս. մերկ՝ եւ զգեցուցիք զիս. հիւանդ էի եւ տեսէք զիս՝ ի բանտի էի, եւ ելիք առ իս:

Մատթ. ԻԵ. 35—36:

Բարեգործութեան ընդհանուր սկզբունքները նոր կտակարանի մէջ ցոյց տալուց յետոյ՝ աշխատենք համառօտ տեսութեամբ նկարագրել, թէ ինչ զարգացում և կազմակերպութիւն է ստանում աղքատների խնամատարութեան գործը մինչև Կոստանդին:

Այս շրջանում էլ սկզբը ծաղկում էր, ինչպէս և առաքեալների ժամանակ: Հաւատացեալները պատրաստ էին ամեն տեսակ զոհաբերութիւններ անելու, ինչպէս երևում է առաքեալական հայրերի գրուածքներից: «Մենք բաժին ենք հանում ամենքի համար և տալիս ենք ամեն կարօտեալի», գրում է Ցուստինոս: Նոյն միտքը արտայայտում է նաև Կղեմէս Աղէքսանդրացին: Հաւատացեալները տալիս են առանց որևէ վարձատրութիւն սպասելու. նրբին, կենդանի սէրն է, որ նորանց սիրտում է օգնութեան հասնել կարօտեալին: Նոքա աչքի առաջ ունէին այն անձնուրացութեան սէրը, որ նոցա մէջ նոր կեանք էր ստեղծել: Համայնքների սիրոյ գործունէութեան եռանդը այնքան վառ է, որ մինչև իսկ կարողութիւնից աւելի զոհաբերութիւններ են անում: Մինչև Կոստանդին կազմակերպւում է միմիայն աղքատների համայնա-

* Տես Աբրահամ համար Ե. երես 195:

կան խնամատարութիւնը։ Հաստատութիւնները, ինչպէս հիւանդանոցները, հիւրանոցները, որբանոցները ևլն, յատուկ են Կոստանդնից յետոյ եկող ժամանակին։

Հալածանքների հետ սերոյ գործունէութեան նորանոր հանգամանքներ են յառաջ գալիս. բանդարկեալները, հալածանքի պատճառով իրենց ստացուածքից զրկուածները, մարտիրոսների որբերն ու այրիները վայելում են համայնքի խնամատարութիւնը։ Սուրբ եռանդ, քրիստոնէական լրջմտութիւն, մաքուր կեանք, ամենայն զոհաբերութեան պատրաստ սէր այն նեղքին դէնքերն են, որոնցով պաշտպանուած է եկեղեցին հեթանոսութեան մղած կատաղի մարտի դէմ։ Նկեղեցին հարստութիւն չունի, ինչպէս քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալուց յետոյ՝ բայց նա ունի այն բարոյական զօրութիւնը, որ աւելի մեծ է քան հարստութիւնը։ Նկեղեցին հոգում է, որ իւր անդամներից ոչ ոք կարիք չունենայ. կարօտեալը օգնութիւն է ստանում անմիջապէս։ Բայց ինչպէս որ իւրաքանչիւր հաւատացեալ պարտաւոր էր իւր հոգը վստակել, այնպէս և աղքատը։ Նկեղեցին օգնութեան է հասնում երբ նորա աղքատութեան պատճառը ծուլութիւնը, դատարկաշրջութիւնը կամ շռայլ կեանքը չէ։ Նկեղեցին օգնութեան է հասնում երբ իւր հօտի անդամներից որևէ մէկը անկարող է աշխատել։ «Աշխատանքի ընդունակին գործ, անընդունակին օգնութիւն» ընդհանուր կանոն էր այս շրջանի բարեգործութեան համար։

Արդարև, ճշմարիտ բարեգործութիւնն այն է, երբ աշխատանքը այսպիսի բարոյական արժէք ունի, երբ սեպհականութեան գաղափարը նուիրական է։ Այն ժամանակ բարեգործութիւնը սերոյ պտուղ է, որ բարեգործի և ստացողի համար հաւասարապէս կրթիչ է և բարձրացնող։ Վանմ գաղափար չէ երախտագիտութեան զգացմունքը, ինչ կլինէր մեր կրօնականութիւնը, եթէ երախտագիտութեան զգացմունք չունենայինք դէպի Աստուած նորա անհուն բարերարութիւնների համար։ Ստացողը երախտագէտ է դէպի Աստուած, որ իւր բարերարի ձեռքով նուէրն է ուղարկում, բարեգործը երախտագէտ է, որ Աստուած օրհնել է իւր վաստակը, որից և չքաւոր եղբօր համար ևս բաժին կարող է հանել։ Քրիստոնէական եկեղեցու համար միշտ նուիրական է եղել սեպհականութեան գաղափարը, բայց նոյն եկեղեցին էլ մաքառել է վաշխառութեան, ագահութեան և առհասարակ անարդար միջոցներով հարստութիւն դիզելու դէմ։ Երբ աշխատանքը, սեպհականութիւնը նուիրական գաղափարներ են և քրիստոնէական սէրը կենդանի է մարդկանց մէջ՝ այն ժամանակ ինքնըստինքեան առաջ կգայ այն վիճակը, որ Յերտուղիանոս ասել կարող էր «Քրիստոնեաներիս համար ամեն ինչ հասարակաց է, բայց կանանցից»։ Այս սկզբունքը ընդհանուր է առաքելական հայրերի գրուածքի մէջ։

Չափաւորութիւնն ևս այս շրջանի առաքինութիւններից մէկն է և սերտ կապուած բարեգործութեան հետ։ Վայելքի չափաւորութիւն են քարոզում առաքելական հայրերը, և այս մի այնպիսի ժամանակ, երբ շռայլութիւնն ու զեղխութիւնը հռովմէական կայսրութեան մէջ ծայրահեղութեան էր հասել։ Բայց այդ չափաւորութիւնը մեր աչքում աւելի յարգ է ստանում այն պատճառով, որ չափաւորութեամբ ձեռք բերած խնայողութիւնը աղքատների համար պիտի գործածուէր։ Մինչև իսկ պահեցողութիւնը բացի աստուածպաշտութիւնից՝ խնայողութեան միջոց էր աղքատներին օգնելու համար։* Նոյն չափաւորութիւնը, աշխատասիրութիւնն ու բարեգործութիւնը քարոզում է և քրիստոնեայ կանանց. Տերտուղիանոսի նկարագրած քրիստոնեայ կնոջ բարեգործութեան, աղքատների խնամատարութեան, հաւատացեալների հիւրասիրութեան պատկերը օրինակ կարող է լինել ամեն ժամանակի քրիստոնեայ կնոջ համար։

Բայց ամենից գործնականին այս շրջանի հասմայնական կեանքն է, որ միանգամայն ընտանեկան բնաւորութիւն ունի։ Եպիսկոպոսը համայնքի հայրն է և ճանաչում է անձամբ բոլո-

* Karl Müller. Kirchengeschichte I. 1892 եր. 108.

րին։ Հաւատացեալները միմեանց քոյր և եղբայր են անուանում և նոցա կեանքը իրօք այդպէս մտերմական է։ Անհատը համայնական կեանքից դուրս կեանք չունի, ուստի և աղքատների խնամատարութեան գործը համայնական կեանքի մի մասն է կազմում։ Համայնական կեանքի հետ ծագում և կանոնաւորւում է աղքատների խնամատարութեան գործը։ Ինչպէս ամեն գործում համայնքի ներկայացուցիչը եպիսկոպոսն է, այնպէս էլ աղքատների խնամատարութեան գործը նորա և օգնական երէցների և սարկաւագների ձեռքումն է. համայնքը միայն նիւթականն է հոգում։*

Քրիստոնէութեան առաջին դարերի պատմութեան իւրաքանչիւր էջը սիրոյ հրաշքներով է զարդարուած, նոյն ոգին է իշխում և աղքատների խնամատարութեան գործում։ Բայց եթէ եկեղեցին այնպիսի մեծ գործեր է կատարում պատճառը իսկապէս համայնքի մշտապատրաստ սիրոյ տուրքերը չեն, այլ աղքատների խնամատարութեան լաւ կազմակերպութիւնը։ Սկզբում այս գործի վարչութեան պլուխը երէցների ժողովն էր, իսկ յետոյ եպիսկոպոսը։** Պօղիկարպոսի թղթից տեղեկանում ենք, որ այրիների և որբերի խնամատարութիւնը երէցների պարտքն է, բայց եպիսկոպոսի ձեռքն անցնելով եկեղեցու վարչութեան գլխի, աղքատների խնամատարութիւնն էլ պէտք է նորանից կախում ունենար։ Առաքելական սահմանադրութիւնը, երրորդ դարի վերջերում գրուած,*** որոշում է եպիսկոպոսի պարտքը աղքատների խնամատարութեան վերաբերութեամբ։ Նա պէտք է հոգայ բոլոր ճշմարիտ կարօտեալների կարիքը, որբերին հայր և այրիներին խնամակալ պէտք է լինի. նորա պարտքն է անդործների համար աշխատանք գտնել, անընդունակներին դրամ տալ, պանդուխտներին ընդունել, քաղցածներին կերակուր հոգալ, բանտարկեալներին օգնութիւն և հիւանդներին խնամք հասցնել։ Նա պէտք է զբաղած և պատրաստակամ լինի, ինչպէս բարի սպասաւոր։ Նորա ձեռքն է աղքատների խնամատարութեան գանձարանը, որի համար նա միայն Աստծուն է պատասխանատու, բայց պարտաւոր է խղճմտանքով կատարել այդ գործը։

Աղքատների խնամատարութեան այսպիսի կենդրոնացումը կարող էր միայն այն ժամանակ բարերար հետևանք ունենալ, եթէ եպիսկոպոսը ընտիր օգնականներ ունենար։ Նա գործերով այնքան էր ծանրաբեռնուած, որ դժուարով զբաղուել չէր կարող։ Եպիսկոպոսը աղքատների խնամատարութեան ոգին, ուղղութիւն տուողն էր և ոչ գործնական խնամողը։ Այս վերջին մասը սարկաւագների պաշտօնն էր։ Նոքա են աղքատների հետ գործ ունեցողները և նրանց իսկական խնամատարները։ Նոքա մտնում են տուն տուն աղքատների վիճակը անձամբ քննում և եպիսկոպոսին տեղեկութիւն տալուց յետոյ՝ նպաստները տեղ հասցնում։ Կիպրիանոս, երբ հալածանքի պատճառով հեռացել էր Կարթագինէից, սարկաւագներին էր յանձնել աղքատների գանձարանը, որպէս զի նոքա իրենց բարեհայեցողութեան համեմատ՝ խնամեն աղքատներին։ Նոյնն ենք տեսնում և Հռոմում Դեկիոսի հալածանքների ժամանակ (250 թ)։ Հռոմի Փաբիան եպիսկոպոսը աղքատների խնամատարութեան գործը բաժանում է 7 սարկաւագների և նրանց օգնական կիսասարկաւագների մէջ. իւրաքանչիւրը պէտք մի մի թաղ խնամէ։* Թէև սարկաւագներն են աղքատների իսկական խնամատարները, բայց առանց եպիսկոպոսի գիտութեան որևէ ծանրակշիռ գործ չեն կատարում։ Նոքա իրաւունք ունին առանց եպիսկոպոսի հրամանի միայն թեթև նպաստներ տալ, որոնց մասին կիւրակի օրը տեղեկութիւն պիտի տան իրենց գործունէութեան մասին ընդհանրապէս հաշիւ տալու ժամանակ։ Եպիսկոպոսը հայրն է և սարկաւագները որդիք, բայց առաքելական սահմանադրութիւնը. ինչպէս որդին

* K. Müller. Kg. եր. 109.

** Dr. Emil Friedberg-Lehrbuch des katholischen und evangelischen Kirchenrechts. 1880 § 5.

*** Friedberg, եր. 93.

* Karl v. Hase. Kirchengeschichte *I* եր. 419. Համ. Müller եր. 123.

առանց հօր դիտութեան ոչինչ չէ գործում այնպէս էլ պէտք է լինեն սարկաւագները։ Սարկաւագների և եպիսկոպոսի յարաբերութիւնը, ինչպէս և սարկաւագների ցոյց տուած անձնուիրութիւնը պարզելու համար՝ մէջ բերենք այն աւանդութիւնը, որ կազմուել է Լաւրենտիոս սարկաւագի անձնաւորութեան մասին։ Նա Սիքստոս Բ-ի (257-258) սարկաւագն էր և նորա ձեռքով էր բաժանուած աղքատներին եպիսկոպոսի բոլոր հարստութիւնը։ Քաղաքի կառավարիչը կալանաւորում է նորան և սպառնալիքներով պահանջում է յանձնել եկեղեցու գանձերը։ Նա յանձն է առնում և մի քանի կառք է խնդրում գանձերը բերելու համար։ Նշանակուած ժամանակին գալիս է նա բազմաթիւ կառքերով անդամալոյծներով և հիւանդներով լիքը։ Երբ կառավարիչը հարցնում է՝ ինչու համար է այդ մուրացկաններին բերել, ո՞ւր են խոստացուած գանձերը։ «Սրանք են մեր գանձերը, պատասխանում է, սարկաւագը, որ մեր աղքատութեամբ մինչև այժմ կերակրել ենք։» Սարկաւագը նահատակւում է։*

Սարկաւագների պարտքն էր աղքատների ցուցակ պահել, ուր նկատողութիւնները էին գրում նոցա վիճակի և ստացած նպաստների քանակութեան մասին. այդ ցուցակները մեծ նշանակութիւն ունէին աղքատներին եղած օգնութիւնը կանոնաւորելու համար։ Սարկաւագն ապաստանում է թոյլերին, ծերերին, օտարականներին, իսկ որբերի և այրիների համար, ինչպէս հայր պիտի լինի։ Նա այցելում է աղքատների տները և անձամբ քընում է, արդեօք կարօտութիւն ունին, թէ խնամքի կարօտ հիւանդ կայ ընտանիքում։ Նա այցելում է պանդոխները տեսնելու օգնութեան կարօտ աղքատներ կամ հիւանդներ և անմիջական օգնութիւն է հասցնում եպիսկոպոսին յայտնելուց յետոյ։ Ուշադրութեան արժանի է մանաւանդ այն կէտը, որ սարկաւագի պարտքն է նոյնպէս աղքատին օգնել, որ նա կրկին գործել կարողանայ և անձամբ իւր ապրուստն աշխատէ։ Այս կազմակերպութեան լաւ կողմերն են խիստ կեդրոնացնում բայց մի և նոյն ժամանակ անհատական խնամատարութիւն։ Մանաւանդ վերջին կէտը անհրաժեշտ է աղքատների խնամատարութիւնը բարոյական և առողջ հիմունքների վերայ հաստատելու համար։ Օգնութեան բարոյական օգուտը, չափն ու լաւ գործադրութիւնը պայմանաւորուած է անհատական խնամատարութեամբ։ Եթէ նիւթական օգնութիւնը իւր իսկական նպատակին պիտի ծառայէր, անհրաժեշտ էր, որ անհատական լինէր այդ խնամատարութիւնը։ Սարկաւագն անձամբ ճանաչելով նպաստ ստացողին, նորա ընտանեկան հանգամանքները, դորա համեմատ էլ կաշխատէր կատարել իւր պարտքը։ Ի՞նչ բարեգործութիւն կլինի օրինակ այն ողորմութիւնը, երբ արբեցողն ստանում և դինետունն է վազում՝ ընտանիքը վերջին ծայր նեղութեան մէջ թողնելով։ Երբ աղքատների խնամատարութեան գործը կազմակերպուած է, խնամքն անհատական է, այսպիսի դէպքեր պատահել չեն կարող։

Բացի սարկաւագներից կային և կանայք, մանաւանդ այրիներ, կամ սարկաւագուհիներ, որոնք մօտաւորապէս նոյն պաշտօնն էին կատարում, ինչ որ սարկաւագները, միայն իրենց սեռի շրջանում։ Առաքելական շրջանում ծառայում էին, թէ այրիները, ինչպէս տեսանք, Ա· Տիմ· Ե· 10, և թէ սարկաւագուհիները Հռոմ· ԺԶ· 1· բայց բազմաթիւ են նաև ապատակամ սպասաւորող կանայք Գործք Թ· 36· ԺԶ· 14, 40· Հռոմ· ԺԶ· 3· 6։ Այնուհետև սարկաւագուհիների գոյութեան մասին տեղեկանում ենք Պլինիուսի Տրայան կայսեր գրած (112 թ·) նամակից։ Սարկաւագուհիները եկեղեցու պաշտօնէութեան մէջ սկսում են առանձին տեղ բռնել երրորդ դարու վերջերում։ Նոքա խնամում էին բանտարկեալներին՝ նոցա համար կերակուր պատրաստելով և ուրիշ կարիքները հոգալով։ Նոքա խնամում էին և որբերին։ Եթէ եպիսկոպոսը կամ եկեղեցու միւս պաշտօնեաներից մէկը այցելում էր որ և է կնոջ հոգևոր խնամքի կամ հոգեշահութեան նպատակով՝ սարկաւագուհիներից մէկը ուղեկցում էր նորան. նոյնն էր անում եթէ մի կին պիտի այցելէր եպիսկոպոսին։ Սարկաւագուհիները

* Hase· եր· 429·

էին խնամում իրենց սեռի աղքատներին և հիւանդներին։

Յիշեցինք, որ աղքատների խնամատարութեան գործը համայնական կեանքի մի մասն էր կազմում և նորա կազմակերպութիւնը սերտ կապ ունէր համայնական ամբողջ կեանքի կազմակերպութեան հետ։ Այս հանգամանքը շատ լաւ նկատելի է մանաւանդ հաղորդութեան հետ միացած սիրոյ ճաշերի նկարագրութիւնից։ Սիրոյ ճաշերի սովորութիւնն սկսուած էր առաքելական շրջանից. գործք առաքելոցը պատմում է, որ դա կատարւում էր ամենայն օր, բայց հետզհետէ սահմանափակւում է այդ ճաշերի թիւը և միայն կիւրակի օրերն էին կատարւում։ Այդ ճաշերի համար համայնքի անդամները կերակուր էին բերում և ամենքը միասին հարուստ կամ աղքատ ուտում էին։ Ա. կորնթ. ԺԱ. 20—34 տեղեկանում ենք, որ անկարգութիւններ էլ էին պատահում ճաշերի ժամանակ, որի համար առաքեալը յանդիմանում է. «եթէ կերեցաւն Աստուծոյ արհամարհէք, և յամօթ առնէք զչքաւորսն։» Պօղոս առաքեալի խօսքերից էլ երևում է, որ սիրոյ ճաշը հաղորդութեան խորհրդից յետոյ էր կատարւում։ Ահա այս սիրոյ ճաշերը համայնական կեանքի և աղքատների խնամատարութեան ամենալաւ միջոցներից մէկին դառնում հետևեալ դարերում։ Սիրոյ ճաշերի հետ կապուած էր oblatio կոչուած ուրքը՝ սիրոյ ճաշի համար նիւթեր, հաց, գինի, պաշտային բերքեր։ Սարկաւագները ճաշի համար հարկաւոր մասը գնում էին սեղանի վերայ, իսկ մնացածը պահում էին եկեղեցու պաշտօնեաների և աղքատների համար։ Ինքնատինքեան հասկանալի է, որ աղքատներն էս մասնակցում էին սիրոյ ճաշերին և ամենից մեծ ուշադրութեան նոքա արժանանում։ Այս սովորութիւնը աղքատների խնամատարութեան ամենալաւ ժամանակն է ներկայացնում։ Հաղորդութեան խորհրդի ժամանակ հաւատացեալները լսում էին ոչ միայն Քրիստոսի ցոյց տուած և քարոզած սիրոյ մասին, այլ և գործով ապացուցանում են, որ սիրոյ վարդապետի աշակերտ են՝ խնամելով իրենց աղքատներին և կարօտեալներին։ Հետևեալ ժամանակներում թէև սիրոյ ճաշերը բաժանուած էին հաղորդութեան խորհրդից, բայց շարունակում էին դարձեալ կատարել, և այդ ճաշերը համայնքի անդամների համար եղբայրական սիրոյ և հաւատարմութեան լաւ կապ էր։ Ցերտուղիանոս իւր ջատագովութեան մէջ նկարագրում է սիրոյ ճաշը։ Հեթանոսները շռայլութիւն էին համարում այդ, որոնց դէմ մեքառում է նա՝ ցոյց տալով, որ այդ ճաշերի շարժառիթը սէրն է և աղքատներին բարիք անելը։ «Ինչպէս այդ ճաշերի շարժառիթները պատուաւոր են, շարունակում է նա, դորանով էլ կարող էք չափել մեր մնացած նիստ ու կացի կարգաւորութիւնը, համապատասխան մեր կրօնական պարտաւորութիւններին, ուր ոչինչ անվայել, և աւելորդ չի թոյլատրւում։ Մենք աղօթելուց առաջ սեղանի չենք նստում։ Մենք այնքան ենք ուտում, որքան հարկաւոր է քաղցը յագեցնելու համար։ Մենք ճաշակում ենք մտածելով, թէ գիշերն էլ պէտք է աղօթենք Աստծուն։ Մենք խօսում ենք այն գիտակցութեամբ, թէ Տէրը լսում է մեզ։ Ձեռքներս լուանալուց և ձրագները վառելուց յետոյ՝ հրաւիրւում ենք Աստծուն փառաբանելու, իսկ ով սուրբ գրքից կամ իւր սրտից բան ունի յայտնելու, խօսում է։ Աղօթքով վերջանում է ժողովը և մենք միմեանցից չենք բաժանւում փողոցում անկարգութիւններ անելու, այլ մեր բարոյական կրթութիւնը շարունակելու, որովհետև մենք գիւնխուռումներից չենք գալիս, այլ *դատաստանակութեան և ազնուութեան վարժոցից*։» Ցետագայ ժամանակներում սիրոյ ճաշը միմիայն աղքատների ճաշ էր դարձել, որ համայնքի հարուստներից մէկը իրրև զոհ տալիս էր աղքատներին։

Այսպէս ուրեմն աղքատներին օգնելը ատուածպաշտութեան մի մասն էր կազմում մանաւանդ նախնական ժամանակներում։ Քրիստոսի պատուիրաները՝ ողորմելով՝ համայնքն էլ պատուիրագ է մատուցանում իւր ստացուածքից։ Հարուստի պարտաւորութիւնը Աստծոյ շնորհած պարգևն է, աղքատի կերածն ու ստացածն էլ նոյնպէս իրրև ատուածային շնորհք է նկատւում։ Հարուստն էլ, աղքատն էլ միասին ճաշակում են Աստծոյ սեղանին նուիրուած պարագրութիւնից։ Ոչ հարուստն

է հպարտանում դրանով և ոչ աղքատը ձնշւում: Մի գաղափարական պատկեր է ներկայանում մեզ այդ ժամանակուայ համայնական կեանքը, եկեղեցին աղօթում է իւր աղքատների, անանկների համար. այս սովորութիւնը նկատելի է արդէն Հռովմայեցու գրքից: Եկեղեցին յիշում է իւր որբերին և այրիներին, ինչպէս և յիշում է նուիրատուներին իւրաքանչիւր նուիրատուութիւնից յետոյ: Ցիշւում են և նոքա, որոնք կկամենային տալ, բայց կարողութիւն չունէին. եթէ աղքատը սիրով լի սիրտ ունի, այդ էս Աստուծոյ համար հաճելի է:

Ուրբան և գաղափարական կողմեր լինէին աղքատների համայնական խնամատարութեան մէջ, բայց և այնպէս անհրաժեշտ էր որոշ սկզբունք, կանոնաւորութիւն մտցնել աղքատների խնամատարութեան գործի մէջ: Մենք արդէն տեսանք աղքատների խնամող պաշտօնէութեան կազմակերպութիւնը. մինչև այժմ ասածների վերայ մի քանի խօսք էլ ասենք այն սկզբունքների մասին, որոնցով առաջնորդւում էին սարկաւագները:

Ընդհանուր սկզբունք էր միմիայն ճշմարիտ կարօտեալներին օգնել, այն էլ անհրաժեշտ կարիքների համար: Ծոյլերը, դատարկաշրջիկները, շռայլ և անկանոն կեանք վարելու պատճառով աղքատացողները օգնութիւն ստացողների ցուցակի մէջ չեն մանում: Նոքա մինչև իսկ արժանի չեն համայնքի անդամ լինելու, ինչպէս որոշում է առաքելական սահմանադրութիւնը: Օգնութիւն են ստանում և բազմանդամ ընտանիքները. երբ հայրը իւր աշխատանքով կերակրել չի կարողանում. եպիսկոպոսը այդպիսիների համար ամեական նպաստ է նշանակում սարկաւագների հաղորդած տեղեկութիւնների հիման վերայ: Առաքելական սահմանադրութիւնը վայ է կարդում այնպիսիների գլխին, որոնք ապրուստի միջոց ունենալով հանդերձ, դարձեալ կեղծաւորութեամբ նպաստ են ստանում, վայ և նրանց գլխին, որոնք աշխատել կարող են, բայց և այնպէս ուրիշներից ողորմութիւն են ստանում, այդպիսիները պատասխանատու կլինեն Տիրոջ դատաստանի ժամանակ: Նոյն միտքն է արտայայտում և Կղեմէս Աղէքսանդրացին: Որովհետև ով աշխատել կարող է, բայց դարձեալ ողորմութիւն է խնդրում յափշտակում է Ճշմարիտ աղքատների հացը: Միայն Ճշմարիտ աղքատները՝ աշխատանքի անընդունակ ծերունիները, հիւանդները պէտք է օգնութիւն ստանան, դրանց համար անպատուութիւն չէ եկեղեցու տուած նպաստները վայելել: Նոքա պարտաւոր են միայն երախտապարտ սրտով Աստծուն փառաբանել և իրանց երախտաւորների համար աղօթել: Հետաքրքրական է առաքելական սահմանադրութեան մի կէտը, որ որոշում է, թէ ինչպէս այրիներից մէկը հաղուստ, կերակուր կամ դրամ ստանալուց յետոյ՝ միւս այրիներն էլ նորա հետ փառք պիտի տան Աստծուն և նորա օրհնութիւնը խնդրեն նուիրատուի համար: Նոքա Աստուծոյ օրհնութիւնն են հայցում և եպիսկոպոսի համար, որ սովորեցնում է ժամանակին ողորմութիւն հասցնել այրիներին: Եկեղեցին իւր պարտքն է համարում աղքատների կարիքները հոգալ, բայց և նրանց մէջ այն զգացմունքն է զարթեցնում, թէ պահանջելու իրաւունք չունին և թէ բաժանուած նպաստները ազատ սիրոյ պտուղ են: Նա աղքատներին խնամելու պատրաստակամութեան հետ ամենայն լրջմտութեամբ խուզափում է աղքատների դասակարգ կազմել, դատարկաշրջիկների և ծոյլերի կեանքը քաղցրացնել: Ընդհակառակ աղքատների խնամատարութեան գործը դասախարակչական դպրոց է համայնքի հարուստ և աղքատ անդամների համար:

Եկեղեցու առանձին խնամքն են վայելում մանաւանդ որբերը. Նրանք կրթւում են եպիսկոպոսի հոգածողութեամբ և մի մի արհեստ են սովորում ապագայում իրենց հացն աշխատելու համար: Աղջիկ որբերը չափահաս դառնալուց յետոյ՝ եպիսկոպոսի ջանքերով պսակւում են քրիստոնեայ երիտասարդների հետ: Շատ ընտանիքներ էլ մի-մի որբ են վերցնում և իրենց զաւակների հետ կրթում: Որբերի խնամատարութիւնը որքան և կինասական լինի մեր այս ժամանակի համար, մենք ստիպուած ենք տեղի սղութեան պատճառով այսպէս հարևանցի անցնել, յուսալով մի ուրիշ առիթ դառնալ այս խնդրին:

Հիւանդները նոյնպէս խնամքի առարկայ են եկեղեցու վարչութեան համար։ այս շրջանում պէտ ևս հիւանդանոցներ չկան։ ուստի և հիւանդներն էլ իրենց աներումն են խընամեում։ Սարկաւագների և երէցների պարտքըն է այցելել հիւանդներին։ այցելում է երբեմն մինչև իսկ եպիսկոպոսը մի սարկաւագի ուղեկցութեամբ։ Սարկաւագը քննում է, թէ արդեօք հիւանդը նիւթական կարիք ունի, և հոգում է, ինչ որ անհրաժեշտ է նորա բժշկութեան համար։ Յատուկ դիմների, եկեղեցական հայրերի դրուածքների մէջ հիւանդների խնամատարութեան բազմաթիւ օրինակներ կան, մանաւանդ համաճարակների ժամանակ. բաւականանք միայն մի նկարագրութեամբ, որ վերցնում ենք Ալեքսանդրիայի Դիոնեսիոս եպիսկոպոսի մի թղթից։* «Ես իբրև սուղ մի ժամանակ ոդի առնուլ համարեաք և մենք և նոքա (հեթանոսները), և ահա եկն ի վերայ ախտս այս ժանտ, քան զամենայն վիշտս վտանգի երկիւղալի նոցա և ահագին. որ ըստ բանի մատենագրի ուրուճն ի նոցանէ, քան զամենայն կարծիս ակնկալութեան առաւելեալ։ Բայց ոչ այսպիսի է և մեզ, այլ վարժոց լմնի կրթութեան լինէր այն մեզ և փորձ հանդիսի, զի թէպէտ և առաւել ի հեթանոս անդ ընդարձակէր, այլ և ոչ ի մէնջ ինչ խորշէր մահն։ Քանզի բազում յեղբարց մերոց առ բազում զթոյն և սիրոյ ընտանութեան, ոչ անխայելով անձանց, ձեռն միմեանց տալով յայց հիւանդաց շրջէին անխտիր, լիաբար զպատս հոգալով և բժշկութիւնս կատարելով ի Քրիստոս, խնդութեամբ ախտակից և մահակից ընդ նոսա լինէին, զվիշտս ընկերին յանձինս իւրեանց լսացուցեալ, և առ ի նոցանէ զախտս և զցաւս ի մարմինս իւրեանց բառնալով։ Ես բազում ի խնամս հիւանդութեան և ի փրկութիւն մերձաւորին ինքեանք մահացան, զմահ նոցա ինքեանս փոխադրեալ. և զառաքինական բանն, որ սիրակատարութեան միայն ցոյցն թուէր ցայնժամ արդեամբք արդ լցին փարելի լեալ վասն նոցա՝ չուեցին յատափ կենացս։ Զի ընտրեալքն յեղբարց մերոց, երիցունք իսկ և սարկաւագունք, և որք կարի իսկ գովելիք էին առ ժողովուրդն, այս օրինակ մահուամբ ելին յաշխարհէ, զոր և առ բազում աստուածապաշտութեան նոցա և հաստատուն հաւատոց ոչինչ պակաս համարիմ քան զնահատակութիւն մարտիրոսութեան։ Զի որք զմարմինս սրբոց բակօք խոնարհելով ի ծոցս իւրեանց ընկալան և զաչս նոցա և բերանս կափուցին, և ընդդըրկեալ և բարձեալ յուս իւրեանց տարան, և լուացմամբ և հանդերձիւք զարդարեցին, և յետ սակաւուց և ինքեանք զնոյն սպաս ծառայութեան յայլոց ընկալան, զի որք կենդանիքն էին, զօրինակն զնացելոցն ընթանային միշտ զհետ։ Իսկ հեթանոսք սոցին հակառակ ամենևին. զխօթացեալս մերժէին ի բնակութենէն, և ի սիրելեաց իւրեանց փախուցանէլ խոյս տային, և կիսամահս զնոսա ի վերայ ճանապարհաց ընկենուին, և զմեռեալս անթաղս ամային ի բացօթեայս, զահի հարեալք ի կցորդութենէ մահուան, զի զուցէ ի նոսա փոխանցեսցի այն. և թէպէտ զամենայն հնարըս հնարէին, սակայն ի նմանէ փախչել ոչ կարէին»։

Քրիստոսի խօսքի համաձայն «ի բանի էի և եկիք առ»։ բանդարկեալներն էլ եկեղեցու հոգածութեան առարկայ էին։ Բանդարկեալները շատ բազմաթիւ էին հռովմէական կայսրութեան ժամանակները. ոչ միայն կրօնի համար հալածուած քրիստոնեաներն էին բանդարկուում, այլ և պարտապաններըն, հարկեր վճարելու անկարողները և վերջապէս գերիները, որոնք ամենքն էլ վայելում էին եկեղեցու խնամքը։ Եկեղեցին էր նաև գժբաղդ սարուկների բարեկամը. մեզ շատ հեռու կասենէր, եթէ մենք այս ամենը նկարագրել կամենայինք։ Մի այն այսքանը կասենք. ուր օգնելու կարիք կար, եկեղեցին այնտեղ օգնութեան էր հասնում։ Բայց եպիսկոպոսը խնամում ամենքին էր ոչ միայն իւր սեպհական հօտի անդամներին, այլ և իւր հօտից դուրս։ Երբ Նուբիայի եպիսկոպոսները Նիպլիանոսին օգնութեան դիմեցին պատերազմի ժամանակ գերի ընկած քրիստոնեաներին ազատելու համար, վերջինս ժողովարարութիւն սկսեց Սարթապուխէի համայնքի մէջ և 100000 սիս-

* Նսեքիոսի Եկեղեցւոյ պատմութիւն Եկեղեցւոյ. Դպրութիւն Եօթնեորդ. գլ. ԻՒ.

տերցիուս (մօտ 8500 ր.) հաւաքեց և ուղարկեց Հռովմի Դիոնիսիոս եպիսկոպոսը (259—269) կեսարիայի եկեղեցուն մխիթարական թուղթ և փող է ուղարկում պատերազմի ժամանակ գերուածներին ազատելու համար:

Այսքան բարեգործութիւններ անելու համար պատմական մեծ միջոց էր հարկաւոր, եկեղեցին թէև այնպիսի հաստատ և մեծ եկամուտներ, արտօնութիւններ չունէր այս շրջանում ինչպէս Կոստանդնից յետոյ, բայց ուր սէր, հոգի կայ, այնտեղ նիւթական դժուարութիւնները չկան: «Սէրը աւելի ոյժ ունի, քան մամոնան»: Եկեղեցու բարեգործութիւնների համար գործադրած նիւթերն ու գումարները բոլորը կամաւոր նուէրներ էին՝ իրեւ ամսական տուրք, սիրոյ ճաշերի հետ կապուած աննպատ նիւթերի նուէրներ, ննջեցեալների յիշատակին կատարուած զոհաբերութիւններ, կամ արտաքոյ կարգի օգնութեան համար ժողովարարութիւններ: Նրբեմն անհատներ ևս, ինչպէս առաքելական շրջանում էր պատահում իրենց կարողութիւնը ծախում և եկեղեցուն էին նուիրում օրինակ Կիպրիանոս, բայց եկեղեցու իսկական եկամուտը հաւատացեալների երեսի քրտինքով աշխատած կամաւոր նուէրներն էին: Հարուստ չէին առհասարակ առաջին դարերի քրիստոնեաները, մեծ մասով չքաւոր դասին էին էին պատկանում, բայց հարուստն էլ, աղքատն էլ իրենց կարողութիւնից աւելի էին զոհում որովհետև զօրեղ էր ներքին սէրը: Ճիշդ տեղեկութիւններ չունինք իւրաքանչիւր անդամի տուած փողի քանակութիւնը որոշելու համար, բայց Հռովմի համայնքի համար կարելի է մօտաւոր դաղափար տալ: Հռոմի Կոռնելիոս եպիսկոպոսի (251—253) մի նամակից տեղեկանում ենք, որ իւր ժամանակ Հռովմում բացի իրենից «քառասուն վեց երիցուներ են, եւթն սարկաւագունք, եւթն կիսասարկաւագունք, քառասուն երկու ջահընկալք, երդմնեցուցիչք, ընթերցողք և դռնապանք՝ յիսուն և երկու, այրիք և վշտակիրք, ամենեքեան աւելի քան զհազար եւ հինգ հարիւր եւ զամենեսեան զսոսա շնորհը եւ մարդասիրութիւն Տեառն մերոյ կերակրէ»:*

* Եւսեբիոս եկեղ. պատմ. Դպր. Զ. գլ. 43.

Ուլհորն իւրաքանչիւրին 50 մարկ է նշանակում ամբողջ տարուայ ստացած ցորենի համար, իսկ 1500-ի համար 75000 մարկ:*

Եկեղեցու ոյժը սիրոյ գործունէութեան այս գեղեցիկ կազմակերպութեան մէջն էր: Հեթանոսների վերայ ազդում էին ոչ միայն մարտիրոսների քաջ նահատակութիւնը, այլ և քրիստոնեաների մէջ թագաւորող եղբայրական և սիրոյ կեանքը, որ նկատելի էր մանաւանդ աղքատների խնամատարութեան գործում: Քրիստոնէութեան կատաղի թշնամիներն իսկ ստիպուած էին խոստովանել նորա այդ բարոյական ոյժը: Տերտուղիանոսի ասելով հեթանոսները զարմանում էին և ասում: «տեսէք, ինչպէս սիրում են նոքա միմեանց»: Փոքրիկ հօտի յաղթութեան գէնքը հաւատն ու սէրն էր, որ խորտակելով հռովմէական ահեղ պետութեան շէնքը՝ նորա աւերակների վերայ կեանքի մի նոր տաճար կանգնեց:

Այստեղ արծարծուած մտքերը հետեւեալ կէտերի մէջ կարելի է ամփոփել:

1. Աղքատների խնամատարութիւնը զուտ քրիստոնէական երեւոյթ է. նա հաստատուած է քրիստոնէական — բարոյական հիմունքների վերայ և նորա նպատակն է նպաստել աղքատի նիւթական և բարոյական շինութեան:

2. Եկեղեցու և քրիստոնեայի պարտքն է օգնել աղքատներին, բայց միմիայն ճշմարիտ կարօտեալներին. օգնութեան միշտ պատրաստ, բայց խուսափում է նա քաջալերել ձրիակերութիւնն ու պատարկաշրջիկ կեանքը:

3. Եկեղեցու համար աշխատանքը նուիրական է և նա ձգտում է հաւատացեալների մէջ սէր զարթեցնել դէպի աշխատանքը, և անգործների համար գործ գտնել:

---

* Die Christliche Liebesthätigkeit I. եր. 122. Այստեղ հարկ ենք համարում յիշել, որ յօդուածի ընթացքում յիշուած աղբիւրներից զատ, մենք օգտուում ենք գլխաւորապէս Ուլհորնի երեք հատորից քաղկացած յիշեալ պատուական գրքից եւ Schäfer-ի Leitfaden der inneren Mission. Hamnburg. 1893.

4· Աղքատների խնամատարութեան լաւ կազմակերպութեան համար անհրաժեշտ են ա) վարչութեան կեդրոնացում անհատական խնամքի հետ միացած, բ) անձնուէր և ձեռնհաս պաշտօնեաներ։

(Կը շարունակուի)

Դարեգին Սարկաւագ։

ՏԻՄՈԹԷՈՍ ԷԼՈՒՐՈՍԻ

ՆՈՐԱԳԻՒՏ ԵՐԿԸ

Ե Ի

ՆՈՐԱ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ,

ՆԱԽՆԻ ՀԱՅՐԵՐԻՑ ԱՌԱԾ։

Մայր Աթոռի Մատենադարանի Հ· 1955 ձեռագրից արտատպելով Արարատի նախորդ համարում Իրենէոսի անուամբ զրաւած երեք հատուածները՝ մենք անուանել էինք այդ ձեռագիրը «վկայութիւնների մի ընդարձակ ժողովածու» և մէջ էինք բերել այն հատուածը, որ նորա սկիզբն է կազմում՝ նշանակելով, թէ դա միակ ծանօթութիւնն է, որից կարելի է մի գաղափար կազմել ամբողջ ժողովածուի մասին։ Սակայն աւելի ուշադրութեամբ քննելով նոյն ձեռագիրը՝ մենք նկատեցինք, որ վկայութիւնների առաջին խումբից յետոյ, Պրոկղի գլուածներից յառաջ բերած մի վկայութեան՝ երկրորդ շաար աւելի ընդարձակ ծանօթութիւն կայ կցուած ժողովածուի հեղինակի կողմից, որ առաջին անդամ հարևանցի կերպով թերթելիս իբրև Պրոկղի գրածի շարունակութիւն էինք ընդունել։ Նա խօսում է այստեղ առհասարակ երկու ընութեանց վարդապետութեան դէմ և երբ խօսքը Նփեսոսի Բ· ժողովին է գալիս, ասում է· «Պետաւորելով այսմիկ երիցս երանելոյ հաւր մերոյ և եպիսկոպոսապետի և խոստովանողի Դիոսկորոսի, ընդ որում առընթեր եաք յայնժամ ես իսկ և երանելի իմ եղբայրն Անատոլիոս երէց»· ապա դառնալով Քաղկեդոնի ժողովականներին՝ նա աւելացնում է· «Քանզի ոչ հաւատացեալք ձըշմարտապէս քահանայապետին Քրիստոսի, երանելում հաւրն մերում Դեոսկորի, այդ ընդդիմացալք նմա կրկնակի մեռան· քանզի երկուս եւ չարութիւնս եարարին՝ զՏէրն իւրեանց ներդրաբար ուրացան, զաղբիւրն կենդանութեան, եւ զընթեանս նզովեցին· սակս որոյ եւ բացափրիրն վայրենութեամբն, հալածելով զՔրիստոսի հաւատոն, զյանդիմանիչս վնոսա եւ զասաւղոն· Որո՞մ առորագրութեան ձերում հաւատասցուք՝ Յվթեսոսին, եթէ, ի Քաղկեդոնին։ Եւ վասն զի ընթեանք ներդրաբար ուրացան զՏէրն մեր եւ զԱստուած Յիսուս Քրիստոս եւ Թուին խաղաղութեամբ վարել, ոչ ուրուք նոցա հակաբանելով թեպէտ եւ զքրիստոսի խաղաղութիւնն ոչ ունին և ոչ սգան ընդ անապատութիւն երեւելագունից քաղաքացն՝ վասն այսորիկ, որպէս զրեալ է, գոչելով, եւ հս արուսս ուղղափառաց եպիսկոպոսացն Տիմոթէոս առ Աստուածն իրաց հալածեաց զիս նախանձ տան քոյ ···· Զի լքին զՆա եկեղեցեաց առաջնորդք եւ մռայլուղ եղեն պատուիրանացն նորա լի մարդիկ ընդ Աստուծոյ փոխադրեցին զյոյս եւ քաջալերեալք կառաւք եւ ձիովք, որովք եւ պատերազմին զհաւատս Տեառն, եւ զուղղափառն ի քրիստոսասէր քաղաքին Աղեքսանդրի եւ յամենայն Եգիպտոսի, Եւղիպդէ, եւ ի Պաղիսաւինէ եւ յայլս քաղաքս սպանին եւ սպանանեն մինչև այժմ եւ հալածեն· եւ զղոհարանն հոգեկան [ան]պարշտութեանն բեկին եւ մանրեցին բազում անգամ եւ պատրաստել արարին, առ ի յոչ կամել զուղղափառ. զժողովուրդս հաւանել նոցայն ամպարշտութեան· եւ խնդրեն զանձն իմ զվիրքոս եւ զանպիտան ծառայիս Քրիստոսի, եւ ոչ պատահեն, մինչ եթե Տէրն իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս թողացուսցէ զայս լինել ըստ ինքեան կամաց, առնելով եւ այսուիկ ուղղմութիւն մեծ ընդ իս անարժանիս· քանզի ոչ հաւան կ[ա]ցի յերկիր առանց Աստուծոյ, ըստ Նորին Տեառնն Բանի· վասն այսորիկ եւ ոչ ասեն—* երկուցեալ զառժամանակեանս սպառնալիս թշնամեացն Աստուծոյ, քաջալերեալ ի բարեխաւսութիւնս սրբոցն եւ ուղ-

* Մի բառ չի կարդացուում։

զափառաց իմոյ հարանց, ներդրաբար եւ ես խորհեալ եմ դարձեալ ընդդէմ ասել նոցայն ամպարշտութեան, քաջայոյս ելով ի զաւրութիւն Տեառն իմոյ եւ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. ասացին ուղղափառի ամենայնի»:

Այս խօսքերն արդէն պարզ ցոյց են տալիս, որ մեր վկայութիւնների ժողովածուի հեղինակն է Տիմոթէոս Էլուրոս* Աղեքսանդրիայ նշանաւոր պատրիարքը: Սա երեց էր Աղեքսանդրիայում եւ պարագլուխ այն մեծ կուսակցութեան, որ Քաղկեդոնի ժողովից յետոյ գլուխ բարձրացրեց կառավարութեան դէմ եւ ոչ այդ ժողովի պաշտօնութիւնն էր ընդունել կամենում, ոչ նոյն ժողովի վճռով զահընկեց եղած Դիոսկորոսի յաջորդ Պրէտորիոս պատրիարքին: 457 թ.-ին, երբ վախճանեց Քաղկեդոնի ժողովի ղօրեղ պաշտպան Մարկիանոս կայսրը՝ Տիմոթէոս իւր կուսակցութեան կողմից պատրիարք ընտրուեցաւ, իբրեւ իսկական յաջորդ Դիոսկորոսի, և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, մինչդեռ Պրէտորիոս սպանուեցաւ այս առթիւ ծագած խռովութեան միջոցին: Այնուհետեւ նա երեք տարի հաստատուն մնաց պատրիարքական աթոռի վերայ, մինչեւ որ Լեւոն կայսրը սակաւուած եղաւ քաղկեդոնականների պահանջը կատարել և Տիմոթէոս ղօրավարի ձեռքով նորան ձերբակալել տալ ուղարկել: Սակայն երբ 475 թ.-ին Բազիլիսկոս Բռնաւորը, Զենոն կայսեր գահընկեց անելով և նորա փոխարէն գահ բարձրանալով՝ Քաղկեդոնի ժողովը մերժեց և նորա հակառակորդների կողմը բռնեց, Տիմոթէոս եւս վերադարձաւ աքսորից և կրկին պատրիարք եղաւ մինչեւ 577 թ.-ը, երբ վախճանեց և յաջորդ թողեց իւր գլխաւոր աջակից Պետրոս Մոնդոսին: Կարելի է ասել, նա վերջին աչքի ընկնող ներկայացուցիչն է Աղեքսանդրիայ պատրիարքական աթոռի, որ այնուհետեւ կորցնում է շատ շուտ իւր, մանաւանդ Տիմոթէոսի անմիջական նախորդների օրով ունեցած, մեծ նշանակութիւնը:

Որ Տիմոթէոս Էլուրոս Քաղկեդոնի ժողովի դէմ մի վիճաբանական ընդարձակ գրուածք է թողել՝ այդ մասին, ինչքան գիտենք, յայտնի էին մինչեւ այժմ միայն մի քանի եկեղեցական մատենագիրների յիշատակութիւններ և նոցա պահած աննշան հատուածներ: Նոցանից մէկը, Ե. դարի վերջերին ապրող Գեննադիոս, այդ գրուածքը նոյն իսկ լատիներէն է թարգմանել, ինչպէս ինքն է յիշում: բայց թէ նորա թարգմանութիւնը և թէ յունարէն բնագիրը կորած յիշատակարանների շարքում են դեռ: Մեր մատենադարանի ձեռագիրը ներկայացնում է ահա այդ կորած յիշատակարանի ամբողջական հայերէն թարգմանութիւնը, որի սկզբից և վերջից աննշան մի մաս միայն ընկած պէտք է լինի: Այդ յիշատակարանի մի հատուածը* մեզ արդէն յայտնի էր Մ. Աթոռի մատենադարանի մի ուրիշ ձեռագրից, որի մէջ գտնուում է նաև մի հատուած Դիոսկորոսի թղթերից. բայց որովհետեւ այդ ձեռագիրը խիստ աղաւաղեալ գրութիւն է, հրատարակելու համար սպասում ենք մինչեւ աւելի լաւ օրինակ գտնուի, և դուր սպասած չեղանք: Նոր գտնուած երկը առաջնակարգ կարեւորութիւն ունի ոչ միայն այն պատճառաւ, որ ինչպէս նախորդ յօդուածով ակնարկել էինք, նորա մէջ բազմաթիւ, բոլորովին անծանօթ, կամ միայն ուրիշ լեզուներով ծանօթ, հատուածներ կան նախնի հայրերից գրուածներից՝ նաև մի քանի այնպիսի գրուածներից, որոնց անունն անգամ յայտնի չէր—այլեւ որ նա ինքն, իւր ամբողջական խմբագրութեամբ, մեծ լոյս սփռել կարող է գաւանանքների պատմութեան մի շատ կարեւոր, բայց և շատ կէտերում դեռ մութ մնացած, շրջանի վերայ: Ինդիրն այն է, որ Քաղկեդոնի ժողովի անմիջական՝ եկեղեցւոյ պատմական համար այնպիսի օրհասական նշանակութիւն ունեցող հեւանքները յայտնի են եղել միայն ժողովի պաշտպան ուղղափառ հայրերի գրուածներից. թէ, ինչ գաւանաբանական հայեացքներ են ունեցել նոցա հակառակորդները՝ Դիո-

* Էլուրոս յունարէն բառը կատու է նշանակում. որոշ յայտնի չէ, թէ ինչու նորան այդ մականունն են տուել: Մենք նախընթաց, գուցէ աւելի իրաւացի կերպով, կուզ են թարգմանել այդ բառը:

* Երանելոյն Տիմոթէոսի եպիսկոպոսի աղեքսանդրացոց ի հակաճառութենէ առաջին գլխոյն Լեւոնի հայհոյութեան ...:

ոսկորոս, Տիմոթէոս և այլք, այդ մասին ուղիղ դաղափար կազմելու համար դրեթէ ոչ մի աչքի ընկնող անմիջական աղբիւր չկայ, այնպէս որ նոյն իսկ անաչառ քննադատները ստիպուած էին համակերպել թշնամական ոգւով լցուած ժամանակակիցների կարծիքներին և թոյլ տալ, որ մինչև այժմ հաստատուն մնան և տարածուին այնպիսի նախապաշարումներ, ինչպէս օրինակ, թէ Քադկեդոնի ժողովի հակառակորդները կամ մի ընութեան պաշտպանները եւտիքական են եղել։ Ընդհակառակը սակայն գրուածքը լցուցանում է ահա այս կէտում զգացուող թերութեան մի նշանաւոր մասը։ *

Արարատի ներկայ համարում մենք բաւականանում են հանգիս բերելով մի քանիսը այն վկայութիւններից, որոնք հետևում են անմիջապէս արդէն լոյս տեսած նախաբանին։ Վկայութիւնների այս ստուար ժողովածուից յետոյ, որ վերջանում է մեր վերև յիշատակած ծանօթութիւնով, կարդում ենք հետևեալ վերնագիրը. «Հակաճառութիւն երկրորդ դատմէն Ղեւոնդի եւ սահմանն Քադկեդոնի եղելոյ ժողովոյն, խնդրելով մեր եւ այլ օրինակ»։ և այսպէս կարգաւ յառաջ են բերած 14 գլուխ հայհոյութեանց, այսինքն նախադասութիւնները Լևոնի թղթերից, որոնց հետևում են իւրաքանչիւր անգամ սիսառոութիւնք հերձուածողաց, այսինքն քաղուածները Նեստորի և նորա համախոհների ** գրուածներից՝ սոցա համերաշխութիւնը Լևոնի թղթի հետ ցոյց տալու նպատակով. ապա մի մի ընդարձակ հակաճառութիւն հերինակի կողմից, որ կրկին իւր հայեացքները հաստատում է հայրերի վկայութիւններով։ Սկզբից պակասում է ուրեմն միայն Ա. գլուխ հայհոյութեանց իւր սիսառոութիւններով և հակաճառութեան մի մասը։ Այդ կորուստն առանձնապէս զգալի չպէտք է համարել մանաւանդ նորա համար, որ շատ փոստեր այստեղ մի քանի անգամ կրկնուած են՝ նոյն իսկ վերկայութիւնների ամբողջ հատուածները, ինչպէս օր. այս անգամ լոյս տեսնող ա. հատուածը, որ բ. հակաճառութեան մէջ կրկնուած է։ *

Սակայն այդ 14 գլուխներով ամբողջ գրուածքը չի վերջանում. այլ ԺԴ. գլխից յետոյ մի կից պատմական կից վիճաբանական ծանօթութիւն կայ «ի ժողովն Քադկեդոնէ», որին հետևում են կրկին 5 գլուխ հայհոյութեանց, սիսառոութիւնք և հակաճառութիւն՝ վկայութիւններով, ** ընդհանրապէս Քադկեդոնի ժողովին վերաբերեալ. և այս աւելից յետոյ մի բաւական ընդարձակ, բայց թերի մնացած, վերջաբան, ուր հեղինակը իւր և իւր կողմնակիցների կրած հալածանքների մասին խօսելով և յորդորներ կարդալով, առում է ի միջի այլոց. «Ե[և այս]*** ուհետև Տիմոթեոսի [Նուա]տադեւնի աւենայն մայ[ր]ի յարատեւահմանութեան պարապաւղի սակս ոչ ուրանալ ինձ զուղիղն հաւատս, եւ պատրաստակս ունելով միս մեռանել վասն Տեառն մերոյ եւ Աստուծոյ Քիստոսի Քրիստոսի, ե[բա]զ զիմն միտս ինքն Քիստոս եւ զործակցեաց ինձ, եւ շարագրեցի նախայսորիկ մատեան Աստուծոյն բայից, որպէս ուսայ ի սրբոյն աւետարանչաց, եւ ի սրբոյ առաքելոց, եւ ի սրբոյ մարգարէից, եւ ի սրբոյ եւ ուղղափառաց եպիսկոպոսապետաց, թերեւս լսելով նոցա մոլորեալքն յուղղափառ հաւատոյն եւ ներգրաւել ուրացեալք զՏէրն եւ բառաժանել զնա յերկուս բնութիւնս, եւ որք հաւատարեցին նոցայն ամպարշտութեան, զարձցին եւ ապաշաւեսցին Աստուծոյ, եւ փախցին զառ ի յԱստուծոյն նոցա ի վերայն կացեալ բարկութեանն»։

Այսպէս ուրեմն մեր առաջը գրած է բազմակողմանի պատմական կարևորութիւն ունեցող մի յիշատակարան, որ արժէր և պէտք էր ամբողջապէս ի լոյս ընծայել։ Թէև նորա հրատարակութիւնը դժուարին և մեծ աշխա-

---

* Ի դէպ կարելի է յիշել, որ նա բովանդակում է ի մէջի այլոց եւ մի քանի խոշոր հատուածներ Դիոսկորոսի Թղթերից։

** Սոցա մէջ կարեւոր պատմական արժէք ունին մանաւանդ Պօղոս Սամոսատացուն եւ Դիոդորը Տարսոնացուն վերագրածները։

* Տարբերութիւնները ցոյց են տուած ծանօթութեանց մէջ։

** Այս մասի Դ. խումբ վկայութիւններից էին առնուած Իրենէոսի հատուածները։

*** Պատռուած։

տանք պահանջող գործ է, որովհետև արդէն ինքնըստինքեան դժուարընթեռնլի երկաթագիրը շատ տեղ մաշուած և ծակոտուած մագաղաթի վրայից մանրադնին հետազօտութեամբ և ենթադրութիւններով միայն ըստ մասին վերարտադրել կարելի է. սակայն մենք սիրով յանձն կառնենք այդ աշխատութիւնը նոյն իսկ առաջիկայ սեպտեմբերից, եթէ միայն, որ մի բարեբար անձն գտնուէր տպագրութեան ծախքը հոգալու համար, և Մայր Աթոռի տպարանի վերայ չծանրանար այն:

Այս անգամ լոյս տեսնող հատուածներից առաջինը Հռոմի Փիլիկոս կամ Փելիքս Ա. եպիսկոպոսի (259—274 թ.) անունով յայտնի է Եփեսոսի ժողովի գործերից* և յիշուած կամ մէջ է բերուած նաև մի քանի եկեղեցական հայրերի գրուածներում: Ապացուցուած է համարուում, որ նա կեղծուած է Ապողինարեանների ձեռքով: Բ. հատուածը հաւանականաբար նոյն այդ կեղծ թղթից է առած, բայց մենք միջոց չունինք ստուգելու, թէ յունարէն բնագրի կամ ասորերէն և արաբերէն թարգմանութեանց մէջ ա. հատուածը որչափ մեծութիւն ունի և արդեօք է՞ր նորա շարունակութիւնն է, կամ ոչ: Յամենայն դէպս հայերէն թարգմանութեամբ երկուսն էս առաջին անգամ են լոյս տեսնում:

Որքա Եփեսոսի ժողովի գործերից առնուած, թէև այժմ այդ գործերի մէջ չէ գտնուում՝ յայտնի է նաև գ. հատուածը, ասորերէն թարգմանութեամբ միայն,** որ կըրում է Աղեքսանդրիոյ նշանաւոր եպիսկոպոս և յայտնի վկայ Պետրոսի անունը (300—310): Այդ հատուածը, ինչպէս նաև Պետրոս Աղեքսանդրացու անունով մնացած ուրիշ հայերէն 4 հատուածները, իւր ժողովածուի մէջ է առել Պետրա Ծիլանաւորը: Յաջորդ երկու հատուածները, որոնց համար դժբաղդաբար չի ասած թէ, Պետրոս եպիսկոպոսի՞ր երկասիրութիւնից են առնուած, բայց որ աւելի հարուստ բովանդակութիւն ունին և վաւերականութեան դրոշմ են կրում՝ դեռ ոչ մի լեզուով յայտնի չեն եղել, որչափ մենք ստուգել կարող ենք, և լոյս են տեսնում այստեղ առաջին անգամ: Վերջին հատուածը նոյն պէտք է լինի Յաղագս յարութեան» գրքից ասորերէն լեզուով մնացած 7 հատուածներից մէկի հետ, որոնք լոյս են տեսել Պետրա Ծիլանաւորի ժողովածուի մէջ:*

Բոլոր յիշածներից թէ իրենց հնութեամբ և թէ ներքին արժէքով գերազանցում են այն հատուածները, որոնք Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս եպիսկոպոսի անունն են կրում: Վերջինս իւր ժամանակի եկեղեցական հայրերի մէջ ամենից աչքի ընկնող անձնաւորութիւնն է, երրորդ նշանաւոր ուսուցիչը Աղեքսանդրիոյ «Երախայից դպրոցի»: Նա խիստ եռանդուն գործունէութիւն է ցոյց տուել Աղեքսանդրիոյ եպիսկոպոսական աթոռի վերայ (247—264 կամ 265 թ.) այնպիսի մի ժամանակում, երբ եկեղեցին բազմաթիւ արտաքին և ներքին թշնամիների դէմ կռիւ վարելով՝ օրէցօր աճող ու բազմապատկուող ազանդներն ու մոլար սովորութիւնները ճրնշելով՝ իւր համար որոշ դաւանութիւն, որոշ եկեղեցական կարգ ու կանոն պէտք է կազմակերպէր, և այդ մեծ գործի մէջ կարևոր դեր է խաղացել Դիոնեսիոս, բոլոր խնդիրների մէջ խառնուել է և նոցա մասին բազմաթիւ թղթեր է գրել: Այդ թղթերից շատերը յիշում է Եւսեբիոս իւր պատմութեան մէջ, ի թիւս այլոց նաև այն երեք թղթերը, որոնց հատուածները լոյս են տեսնում այստեղ առաջին անգամ:** Նոցա առաջինից միայն մի և երրորդից երեք փոքր հատուածներ մէջ է բերել Եւսեբիոս իւր յիշատակութեան հետ, իսկ ամբողջ թղթերն, ինչպէս և առհասարակ Դիոնեսիոսի բոլոր գրականական գործերը, ի բաց առեալ սակաւաթիւ բեկորներ, անյայտ են մնում: այնպէս որ մեր յառաջ բերած հատուածները, յոյս ունինք, առանձին ուշադրութեան պիտ արժանանան պատմագէտների կող-

* Ceschichte d. altchr. Litteratur.—A. Harnack. p. 659.

** Harnack. l. c. p. 445.

* Նոյն 446.

** Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ. Գլխ. Է. գլ. Դ. եւ Ե. գլ. Թ:

միջ։ * Մինչև այժմ նորա անունով յայտնի են եղել Հայերէն 5 աննշան հատուածներ, որոնք առնուած են Պիտրա Ծիրանաւորի ժողովածուի մէջ և կեղծ են համարուում։ — Ի գէպ է յիշել, որ Դիոնեսիոս Աղեքսանդրացին, ըստ Եւսեբիոսի, ** գրել է նոյնպէս մի թուղթ առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մեհրուժան։ Օտար մատենագրութեան մէջ սա ամենահին յիշատակութիւնն է Հայոց Եկեղեցւոյ պետութեան մասին։

Կ. Վ.

Վկայութիւնք սրբոց Հարանցն մերոց։ — Սրբոյն Փիղիկոսի եպիսկոպոսի Հռոմայ եւ մարտիրոսի ի Թղթոյն որ առ Մամխիոս եպիսկոպոս և առ վիճակեալ պաշտաւնեայս, և եկեղեցւոյն Աղեքսանդրիոյ։ [1]

Բայց [2] յաղագս մարմնաւորութեան Բանին եւ հաւատոյ, հաւատամք [3] ի Տէրն [4] մեր Յիսուս Քրիստոս, ի կուսէն Մարիամայ ծնեալ. [5] զի ինքն է Աստուծոյ [6] մշտնջենաւոր Որդին [7] եւ Բան, եւ ոչ մարդ յԱստուծոյ ընկալեալ, [8] որպէս զի այլ իցէ [9] առ նովաւ. քանզի ոչ [10] զմարդ եառ Որդին Աստուծոյ, [11] զի եղիցի այր ումն առ ինքեանք, [12] այր Աստուած կատարեալ [13] էութեամբն եղեւ միանգամայն եւ մարդ կատարեալ, մարմնացեալ ի կուսէ.

Ե— այլ Լա՝ նոքին.

Հաւատամք ի Քրիստոս Յիսուս, Աստուած խոստովանելով զնա աստուածային բնութեամբն եւ ոչ ըստ կցորդութեան աստուածութեան. քանզի ինքն է, յորմէ կցորդութիւն առնումք՝ աստուածարար փչեցեալ յաշակերտան զսուրբ Հոգին. եւ ինքն է, որ մեռաւ մարմնով վասն մեղաց մերոց, որ եւ ապրեցոյց ի մեղաց զնաւատուացեալս ի նա։ Քանզի ոչ մարդ ըստ մեզ Տէրն ընկալեալ եղեւ յԱստուծոյ, այլ Աստուած շնորհաւ, զմարդիկ ընդունելով ըստ զրելոցն, ընդունի զնեզս Տէր։ Իսկ Տէր է որ ի Մարիամայն ծնեալ, որով ամենայն, ըստ Պաւղոսի բանին, եւ ինքն է Աստուծոյ Բանն։ Եւ նզովեմք չարչարելի զաստուածութիւնն առացողս եւ մարդ զհաւհեցեալն Քրիստոս առացողս, եւ ոչ ամենայն էութեամբն Աստուած։

Արքայն Պետրոսի աղէքսանդրացւոյ էպիսկոպոսի և մարտիրոսի յորմէ յաղագս աստուածութեանն ասացեալ։

Վասն որոյ եւ որ ծնանելոցն է, ասէ, սուրբ է, կոչեցի Որդի Աստուծոյ. որպէս զի ծնեալն ի մարմնի մարմին է։ Վասն զի եւ Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ, զմի եւ զնոյն էն, այլ ոչ զայլ ումն եւ զայլ. քանզի մի՛ լիցի։ Քանզի ճշմարտութեամբ ասեմք Տէր զՅիսուս, առաւել հաւատալով, թէ Յիսուս է Որդի Աստուծոյ, եւ եթէ Յիսուս է նոյն իսկ ինքն Քրիստոս, ըստ որում եւ Առաքելոյ զինի վերանալոյն ինքն Յիսուս երեւեցաւ։

Ե— այլ Լա՝ նոքին։

Զայսոսիկ եւ զնմանան այսոցիկ ամենայն ուրեք զրոց վերագրելով ցուցանեմն, եթէ եղեւ Բանն մարմին, եւ երեւեցաւ մարդկան Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, որպէս եւ ամենայն մարդիկ, ըստ նմանութեան, առանց մեղաց. քանզի եթէ ըստ նմանութեան եղեալ էր Բանն մարմին, ըստ որում եւ մարդիկ՝ ոչինչ մեծ, եւ ոչ աւտար եւ զարմանալի այդ ինչ կամել լինել զԲանն մարմին ի մերմէ տկարութենէս։ Իսկ եթէ ըստ խորհրդին Աստուծոյ եւ հաւն ամենեցուն յաղագս մերոյ փրկութեան եղեւ մարմին Աստուածն Բան, թերի ի պատուոյ, այս շնորհ Աստուծոյ եւ առաւել կարողութիւն ի նմա աստուածայնին, ծնիցելոյն յաղագս մեր մարդոյ, որով խոստովանիմք եւ զնա կցորդութիւն ունել տկարութեանս մարդկութեան, զԱստուածն Բան. զէութեամբ Որդի Աստուծոյ փառաւորեմք, եւ զոհանամք, խոստովանելով զիշխանութիւն ամենեցուն տուեալ նմա ի Հաւրէ. եւ շնոր-

---

* Մի քանի ուրիշ բաւական խոշոր հատուածներ եւս կան դեռ մեր ձեռագրի մէջ Դիոնեսիոսի անունով։

** Տես. Զ. գլ. ԽԶ։

1. Ներանելոյ Փեղիկայ եպիսկապոսապետի Հռոմայ եւ վկայի։

2. Իսկ. 3. Հաւատամ. 4. ի Տէր. 5. զի սրբոյ կուսէն Մարեմայ ծնիցեալն. 6. Աստուծոյն. 7. Որդի. 8. առեալ. 9. զի այլ իցէ քան զնա։

10. Եւ ոչ. 11. Աստուծոյն Որդի. 12. զի այր իցէ քան զինքն. 13. ելով կատարեալ եղեւ համանգամայն։

հել նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն, ըստ գրելոյն. զի յանուն նորա ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց եւ սանդարամետականաց, եւ ամենայն լեզու խոստովանեսցէ, զի Տէր է Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հաւր։ Քանզի եւ վասն այնորիկ, ասէ, «ետ նման Աստուած դատաստան առնել, զի Որդի մարդոյ է»։ Իսկ մարդոյ այժմ՝ վասն կուսին Մարիամայ. քանզի մարդ է եւ էգն, որպէս եւ գրեալ է. «Եւ արար Աստուած զմարդն՝ արու եւ էգ արար զնոսա»։

Եւ այլ Եւ նորին.

Զայսոսիկ եւ զնմանս նոցա [1] նշանսն ամենայն զոր արար եւ զաւրութիւնսն ցուցանեն զնա եղեալ [2] Աստուած մարդացեալ. երկոքումբք [3] այժմուքս ցուցանի զի Աստուած էր եւ եղեւ մարդ. «Քանզի մարդ է, ասէ, եւ ո՞ ծանիցէ զնա» եւ դարձեալ. «Ես եմ Աստուած եւ ոչ մարդ» ի քեզ Սուրբս. եւ դարձեալ. «Զի զիս խնդրէք սպանանել զմարդ, որ զճշմարտութիւնն խօսեցայ, զոր լուա ի Հաւրէ»։ Սա Աստուած եւ մարդ Յիսուս Քրիստոս ճշմարտութեամբ շարչարեցաւ վասն մեր. ըստ որում եւ նախընտիր առաքելոյն յաղագս նորա ասէ. «Զգուշութեամբ այսուհետեւ վիճասցէ ամենայն տունդ Իսրայէլի, զի եւ Տէր զնա եւ աւծեալ Աստուած արար, զայս Յիսուս, զոր դուքն խաչեցէք»։

Նորին յորմէ յաղագս յոյս-ընծան բանէն։

Յառաջայայտ է, զի եւ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս փոխեալ այդակերպեցաւ ի լերինն, ոչ այդ ընդ այդոյ մարմին եւառ, այլ էր ինքն [4] որպէս ունէրն յազգէն Դաւթի, յեւանելն ընդ աշակերտսն։

Երանելոյն Դիոնէսիոսի Եպիսկոպոսի աղեքսանդրացւոց ի Թղթոյն, որ առ Պափեքանոս Եպիսկոպոս Հռովմայ։ — Քանզի որպէս իմաստութիւնն ըստ ազգս յանձինս սուրբս փոփոխեալ, սիրելիս [5] Աստուծոյ եւ մարգարէս կազմէ, [6] այսպէս [1] ընդդիմադարձարար հարութիւնն, յանձինս անսուրբս փոխադրեալ, [2] թշնամիս Աստուծոյ եւ սուտ մարգարէս բացերեւեցոյց։ [3] Որպիսի, [4] մի, շուրջ փակեաց զայսոսիկ սովորութիւն. քանզի սովորութեան ամենայն իրաւք մի է ժամանակ, իսկ զանազանք ախորժակացն [5] հատակք, եւ պարտ նախէանալ ամենապէս ազգացն սովորութեանցն, եւ զմարդկայնոցն աւրինաց պատճառս. վասն զի Աստուած իբրեւ զի միայն գիտելով զամենայն նախընկնելութեան նոցա, արժանապէս կարէ եւ հատանել նոցա, յառաջագոյն զայսոսիկ աւրինադրելով։ Իսկ մարդիկ յորժամ նախ առաջին տեսին լինէ, եւ յորժամ կարծիս [6] յառաջ պատահմանց ոմանց առին, յայնժամ կամ աւրէնս եղին [7] եւ կամ սովորութեանց սկիզբն արարին։ Իսկ [8] եթէ յառաքելոցն այս սովորութիւն, որպէս ասացաք, սկիզբն եւառ, հարկաւոր է առուղղել մեզ, որք են որք ըստ նոսա երեւեալքն եւ յորոց զայս գործեցին. զի ըստ նոցունց եւ մեք զնոյն պահեսցուք։ Զի [9] որք զնոսին գրեալքն, եւ մինչեւ ցայժմ որ տակաւին գտանին, անգիտացեալք ի մէնջ, եւ անգիտացին որք որ եւ իցեն։ Զիարդ կարասցեն ընդ սովորութեամբք հնոցն անկանիլ, եւ քնաւ [10] իսկ գյաղագս այսոցիկ աւելի խաւսս ոմանս եւ կամ փոյթ դնել յոյժ խնդնայական [11] եւ ընդունայն համարեցա. զի որպէս զնոսա ասէ պարտ յետ միոյ եւ [12] երկրորդի խրատութեան ի բաց հրաժարիլ, [13] այսպէս եւ մեզ արժան է յիշել եւ խաւսել յաղագս նոցա, եւ յետ սուղ ինչ յիշմանն [14] եւ զուգաբանութեան [15] ի բաց կալ. իսկ տիրապետնիցն եւ մեծագունիցն պիտի ի վերայ կալ պարտ է։ Քանզի եթէ որ ամենարիշտ ինչ բարբառէ յաղագս Աստուծոյ, որպէս որք աւետն զնա անտղորմ կամ աստուածոց որ աւտարաց ի ներքս ածն զպաշտաման, քարկոծել զայնպիսին հրամայեցին աւրէնքն։ Իսկ

---

1. *Այս եւ սոցին նմանք (լուսանց քում)։* 2. *գոլ.* 3. *երկախտումբն։*
4. *այն.* 5. *քարեկամս (?).* 6. *վերաստարծակի.*

4. *կազմեաց (?).* 2. — *կաց.* 3. — *այայտէ։ Իսկ որ ... (անվերծանելի մի պարբերութիւն).* 4. *եւ պարտ է նախընտրանել ամենայն իրաւք սովորութեանց, զսովորութեանցսն։* 5. *հերձուածոցն.* 6. *թուլութիւն.* 7. *աւրինադրեցին.* 8. *Արդ.* 9. *Իսկ յետոյ գտեալքն։*
10. *ամենեւին.* 11. *ամբոխական.* 12. *կամ.* 13. *հեռանալ.* 14. *յիշողութեան.* 15. *հասարակ.* —

մեք աշխատիլք հատատող մերոց բանիւք զսուտ բարկոծեացուք, եթէ ոչ մերձ առ Քրիստոսի խորհուրդն գայցեն,[1] կամ փոխագործէ եւ սպանանէ, կամ ոչ Աստուած, կամ ոչ մարդ եղեալ, կամ ոչ մեռանիլ եւ ոչ յառնել, կամ զոլ ոչ զգալն դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ կամ այլ ինչ աւետարանելով, ըստ որում՝ աւետարանեցաքն, նզովեալ եղիցի, ասէ Պաւղոս: Իսկ եթէ գյաղագս յարութեան որ անարգէ բան, այսպիսին ընդ մեռեալս առնա կարգեցի. յաղագս այսոցիկ, զի ճշմարտագոյնս ունիցիմք, եկեղեցիք առ եկեղեցիս եւ եպիսկոպոսք առ եպիսկոպոսս, եւ երիցունք առ երիցունս, խնամածութեամբ խառնիցիմք: Իսկ յաղագս ըստ միջէջն դատաստանաց եւ գործոց, թէ որպէս զարտաքոյն մերձ եկեալս վայել է ընդունել, եւ որպէս զի ներքոյն դիտաւորել, ըստ տեղեացն առաջնորդաց հրամայեմք, որք ըստ աստուածային ձեռնադրութեանն ի հարկաւորութիւնս յայս կարգեցան, զի զարտաւորութիւնս գորս եւ գործիցեն, ընդ ամենայնի հատուցանիցեն Տեառն:

Նորին յաղագս ընդունելոյ զայն՝ որ առ հերձուածս եպիսկոպոսէն հեռացեալ:

Քանզի գրեցեր այսպէս, զաստուածասէր աւրինաւորութիւնն արտադրելով, որում առեալ առեալ պատահելով առնա եւ յիշողութեամբ[2] ունիմք, բաւական եղիցի միայն ձեռնադրութիւն այնոցիկ, որք խոստովանեացին, եթէ պատճառանաւք եւ եթէ ծիծմարտութեամբ, զԱստուած Ամենակալ, եւ Քրիստոս եւ զՀոգին սուրբ ի միութեան: Իսկ յորոց վերայ[3] ոչ կոչեցաւ անունն՝ ոչ Հաւր եւ ոչ Որդւոյ, եւ ոչ Սրբոյ Հոգւոյն, զայնոսիկ արժան է միւրոնել, եւ ոչ վերստին միւրոնել: Այս հատատուն եւ անշարժ վարդապետութիւն եւ առաքելութիւն,[4] սկսեալ ի Տեառնէ մերմէ, յետ ի մեռելոցն յարութենէ, պատուիրելով աշակերտացն. Գնացէ՛ք աշակերտեցէք զամենայն ազգս, միւրոնելով զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. իսկ պահեցեալ եւ լցեալ[5] ի փոխանորդաց նորա, երանելեաց առաքելոցն, եւ հանգուցեալ ի սրբում՝ եկեղեցւոջ Աստուծոյ, եւ քահանայակցեալ ամենեցուն նախ քան զմեզ եպիսկոպոսաց, որպէս գրեցաւ,[1] եւ մինչ ի մեզ ժամանեալ, իբր զի քան զամենայն աշխարհ հատատունագոյն[2] է. քանզի Երկինք, ասէ, եւ երկիր անցցեն, իսկ Բանք իմ՝ ոչ անցցեն:

Նորին առ նոյն յեպիսկոպոսէ ընդունելոյն:

Իսկ եթէ զնախանձ ունել Աստուծոյ եւ ի բոլոր սրտէ զնա սիրել հատատ զմեզ յորդորէ, եւ միայնա պիղծս վարկանել պարտ որք զարդարն մի եւ զմիայնն արհամարհեն Աստուած, եւ զերկինի եւ զերկրի եւ զամենայնցն Արարիչ եւ Տէր նուաստագոյն ուրումն այդոյ եւ անարգագոյն զոլ ասելով, եւ յամենապարսաւսն չարութիւն առյարեն, եւ կամ ոչ զսիրելին նորա զՔրկիչն մեր Յիսուս Քրիստոս որ զինչ է հատատան, այդ զգանձեալ տնաւրէնութիւնն եւ մեծ խորհուրդն լուժանելով, զոմանս ոչ Աստուած եւ ոչ Որդի զոլ հատատալով Աստուծոյ, իսկ զայդս ոչ մարդ եղանել եւ կամ մարմնով եկեալ, այդ երեւոյթ եւ ստուեր զոլ ասելով, զայսոսիկ զամենեսեան բարւոք Յովհաննէս ի ձեռն թղթոյն[3] ներհնա կոչեաց: Եւ եւս առ նովաւ յաղագս սոցա եւ մարգարէն վկայեաց ասելով. «Զատեցիս Քո, Տէր, ասեցի, եւ ի վերայ թշնամեաց Քոց մաշեցա. կատարեալ ատելութիւն ատեցի զնոսա, ի թշնամիս եղեն ինձ»: Եւ այսոքիկ են ամենեքեան, որք զհերձուածողական մակծայնութիւն[4] առ մեզ ունին: Իսկ եթէ ասիցեն առ փոքր մի թողացուցուք[5] եւ առկողմնացուք նոցա, ոչ եւս ի բոլորն սրտէ զԱստուած սիրելն ամբողջ պահեացի, որ ի մեզ ածել եւ առաւելուլ միշտ վայել է:

---

1. (լուսանցքի ծանօթութիւններն եղծուած են այս էջում):
2. յիշատակաւ. 3. առ որս. 4. աւանդութիւն.
5. կատարեալ.

1. իբրեւ զնկարագիրը եղեալ. 2. հեռ:
3. լուսանցքում թ ղ թ — շարունակութիւնը կորուած: է, երեւի թ ղ թ ո ց ն պիտ լինէր. 4. կոչո — (երեւի կոչումն)
5. թոյլ տուեա(ցուք):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ·

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ·

—

— Կաթոլիկ եկեղեցին մեծ յառաջադիմութիւն է անում Նորվեգիայում, ինչպես պաշտօնական աղբիւրները ցոյց են տալիս· Կաթոլիկ եկեղեցին Նորվեգիայում ունի արդէն 2 միլիոն քրոնի արժողութեամբ գեղեցիկ, Նորվեգիոյ Քրիստիանա մայրաքաղաքում հրաշալագեղ մի կաթոլիկ շաբաթաթերթ· Կաթոլիկութեան այս ջանքերը շատ ժամանակ չէ, որ թափում են այս երկրի վերայ· գլխաւոր գործունեայ գեր կատարողն է 1892-ից ի վեր Փալլիոյ եպիսկոպոսը· Սա իւր նպատակի իրագործման համար նպաստներ է ստանում Ֆրանսիոյ և Գերմանիոյ կաթոլիկներից·

—Կաթոլիկ եկեղեցու տեսակէտով քրիստոնեայ եկեղեցին այն ժամանակ կենդանի է համարուում, երբ տարիների ընթացքում նորանոր մարդիկ սրբոց կարգը կանցնեն իրենց առաքինի գործերի պատճառով· Այս սրբացման համար կարգել է նոյն իսկ աստիճաններ և ոչ թէ մի անգամից է կատարուում·

Սրբացուն նախ կոչուում է Աստուծոյ ծառայ, երկրորդ աստիճանն է յարգելի, երրորդը՝ երանելի, և ի վերջոյ սուրբ· Այս ներկայ 19 դարուս ընթացքում 40 անձինք անցել են այդ աստիճանները և հարստացրել սրբոց բանակը·

Կաթոլիկ եկեղեցին սրբացման հանդէսը իրեն յատուկ շքով էր կատարում միշտ ս· Պօղոսի և Պետրոսի մայր տաճարում· Բայց երբ 1870-ին Հռոմը Իտալիոյ թագաւորութեան մայրաքաղաք հրատարակուեց, իբր ցոյց այդ յափշտակութեան դէմ՝ սկսեցին սրբացման հանդէսը Վատիկանում կատարել· Սակայն ներկայ տարուայ մայիսի 13-ին հանդէսը կատարուեց տաճարում·

Կաթոլիկ աշխարհների ամեն կողմերից անհամար բազմութիւն էր թափուել· սակայն մուտքը տոմսակով էր և միայն հրաւիրեալները, թուով մօտ 30·000, կարողացան մասնակից լինել հանդիսին· Բայց այժեալ 30·000-ը՝ համեմատելով ուխտաւորների բազմութեան հետ՝ մի չնչին թիւ էր·

Այս անգամ սրբոց կարգը դասուեցան Անտոն Զաքարիա, որ ժողովրդի կրթութեան համար հիմնել էր մի եղբայրութիւն 17-րդ դարում և Պետրոս Փուրէի, որ Լոտարինգիայի առաքեալ անունն է կրելիս եղել·

Սրբացման իրաւունքը յատկապէս վերապահուած է Պապին սկսած 10-րդ դարուց· Կաթոլիկ եկեղեցու քրոնիկոնը ցարդ 195 սրբացեալների հաշիւ է ներկայացնում· Սրբացման հանդէսները Վատիկանից կրկին ս· տաճար վերափոխելը եկեղեցական և քաղաքական իշխանութեանց մէջ հաշտութեան նշան են համարում շատերը·

— Յիսուսեան կարգ· — Կաթոլիկ եկեղեցու պատմութեան մէջ մեծ դեր է խաղացել և այժմ էլ խաղում է Յիսուսեան կամ Եզուիտ կոչուած կարգը· Վերջերս կազմած մի ճիշդ վիճակագրական տեղեկութիւն ցոյց է տալիս, որ այդ կարգը բարգաւաճ վիճակի մէջ է և գնալով աճում է· Մինչդեռ 1844-ին նոցա թիւը հասնում էր 11·203-ի, այժմ արդէն դառել է 14·251·

Կրօնական ոչ մի եղբայրութիւն այդքան բազմաթիւ անդամներ չունի· իսկ եթէ աչքի առաջ ունենանք, որ նոքա բոլորն էլ մի խիստ կարգ ու կանոնի են ենթարկուած, մի անձն գլուխ ու առաջնորդ է ճանաչուում, որի հրամանը ոչ ոք չի համարձակիլ մերժել, այն ժամանակ գժուար թէ կարողանանք երևակայել նոցա ոյժի չափը· Այս տեղեկութիւնները հաղորդող „Недѣля“ շաբաթաթերթը հիացած է նոցա գերազանց կազմակերպութեամբ·

Ամեն մի վանք ենթակայ է մի որոշ շրջանի վարչութեան· շրջաններից կազմուում է մի խորհուրդ՝ գլուխ ունենալով իրանցից ընտրուած մի մի պատգամաւոր, որը գտնուում է Յիսուսեան կարգի գեներալի մօտ, իբր ներկայացուցիչ իւր շրջանի և պաշտպանում է իւր շրջանի շահերն ու յայտնում կարիքները·

Խորհուրդներ հինգ են, հետևեալ հինգ պետութեանց մէջ· 1) Իտալիայում, 2) Գերմանիայում, 3) Ֆրանսիայում, 4) Իսպանիայում և 5) Անգլիայում· Այս պետութեանց մէջ շրջաններ 26 են·

Յիսուսեան կարգի գեներալն ընտրուում է ցմահ ձայների մեծամասնութեամբ· Գեներալի օգնական համարուում են յիշեալ խորհրդի պատգամաւորները, որոնք միշտ նորա մօտ են մնում· գեներալը ունենում է իւր մօտ և մի խորհրդական, որ մի անքուն լրտես է, նոյն իսկ գեներալի քայլերն ու ձեռք առած միջոցները արձանագրութեամբ հսկող մի անձն, որ իրաւունք ունի քննադատել, հաւանութիւն տալ կամ պախարակել նորա գործերը·

Մինչև Հռոմի առումը, այն է 1870 թիւը, գեներալի ամառանոցն էր յիշեալ քաղաքը· Յետոյ երբ այդ յաւիտենական քաղաքը դառաւ Իտալական մայրաքաղաք, նա տեղափոխուեց Ֆիեզոլէ, որ և ցարդ համարուում է նորա պաշտօնատեղին, թէև այժմ տարուայ մեծ մասը էլի Հռոմմումն է անցկացնում·

Ներկայումս յիշեալ միաբանութեան գեներալն է Մարտին Իսպանացին· Միաբանութեան բոլոր գործերը կատարուում են միայն կրօնաւորների ձեռքով, իսկ աշակերտները և ուխտաւորները՝ մինչև որ չհասնեն կրօնաւորութեան աստիճանին՝ իրաւունք չունին ոչ մի գործի մասնակցել· վերջիններն միայն

երեար նախապատրաստական ու փորձութեան շրջաններից անցնելուց յետոյ արժանանում են կրօնաւորական աստիճանին եւ այդ պահանջում է մեծ տոկունութիւն եւ համբերութիւն:

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Մայիսի 29-ին Ռուսաց եկեղեցւոյ զաւակները և համայն Ռուսիոյ բազմալեզու հպատակները առանձին ոգեւորութեամբ ընդունեցին Ն. Կ. Բ. Մեծ իշխանուհւոյ Տատիանա Նիկոլայեվնայի՝ Նոցին Կայսերական Մեծութեանց երկրորդ Դստեր, ծնընդեան աւետիքը, վերստաքելով ջերմաջերմ մտաքանները առ Բարձրեալն վասն կենաց Նորածին Իշխանուհւոյ և բարօրութեան Օգոստափառ Տան սիրեցեալ Թագաւոր Կայսեր և Թագուհւոյ Կայսրուհւոյ:

— Վօլինի Թեմում սովորութիւն էր մտել Թաղել սրբազնագործ պաշտօնեաներին երեսը դէպի արեւմուտք դարձրած: Թեմական Առաջնորդի հարցին՝ այս սովորութեան խորհրդի մասին, գիտակ անձինք յայտնել են, որ այդ սովորութիւնը շատ հին է և բացատրւում է այսպէս, թէ հովիւը իւր մահից յետոյ էլ իբր շարունակում է խրատել իւր հօտը. նոյն սովորութիւնը ունիատներն էլ ունին և նոքա բացատրում են այնպէս, թէ ունիատ քահանաները իւրեանց մահից յետոյ էլ հոգւով և մարմնով դէպի Հռոմ են նայում: Սորա դէմ Ս. Առաջնորդը տնօրինել է, որ գործակալ քահանաները հետեւեն այդ սխալը ուղղելու և թէ՛ աշխարհականներին և թէ՛ հոգեւորականներին թաղեն երեսները դէպի արեւելք դարձրած՝ համաձայն հնաւանդ սովորութեան և կանոնաց քրիստոնէական եկեղեցւոյ:

— Եկեղեցական քարոզի խնդիրը շատ է զբաղեցնում Ռուսաց հոգեւոր իշխանութեանը և ամեն տեղ մեծ ջանքեր են գործ դնում գրաւելու ժողովրդի սէրը դէպի հոգեւոր խրատը. սակայն ամեն տեղից մեծ տրտունջներ կան, որ քարոզի խնդիրը Ռուսաստանում դեռ շատ պակասաւոր կողմեր ունի, որոնց մասին Церк. Вѣст. շարաճաճութիւնը հոգեւոր Վարչութեան առանձին ուշադրութիւն է հրաւիրում:

— Երբ 1887 թուականին ռուս կառավարութիւնը Բալթեան ասպետութիւնից պահանջեց, որ իրենց հիմնած և պահպանած ժողովրդական ուսուցչական դպրոցներում ռուսերէնը մտցնեն իբրև միակ դասաւանդութեան լեզու և դպրոցներն էլ կազմակերպեն, այն ժամանակ այդ դպրոցների մեծ մասը փակուեցաւ և մնաց միայն 2 դպրոց: Կուրլանդիոյ դպրոցն (Իրմլաուի մէջ) այդ երկուսից մինն էր, որին կառավարութիւնն իրաւունք տուեց շարունակել մինչև 1894—95 թուականը, որպէս զի արդէն ընդունուած սանները կարողանան աւարտել:

Երբ 1895 Կուրլանդիոյ ասպետները յայտնեցին, որ պատրաստ են ռուսերէնը դասաւանդութեան լեզու ընդունել, կառավարութիւնը մերժից ասպետութեան ներկայացուցած կանոնները հաստատել, որովհետև գոհացուցիչ չէին եղել և պահանջել է ի միջի այլոց, որ գերմաներէնն ապագայում մինչև իսկ դասաւանդութեան առարկայ չլինի, «որովհետև այդ լեզուն ժողովրդական ուսուցիչների համար բոլորովին անօգուտ է»: Ցարակուսելի է, ասում է Evang.—Luth. Kirchenzeitung-ը, որ ասպետները շարունակեն դպրանոցը պահպանել:

— Ռուսաստանից վաղուց ի վեր առատութեամբ նուէրներ գնում են Ցունաց մի քանի վանքեր, մանաւանդ Աթոսի լերան ճգնաւորներին: Վերջիններս շատ յաճախ ուղարկում են նուիրակներ, որոնք ջերմեռանդ ժողովրդի տուրքերը տարեց տարի տանում են իրր այդ սրբավայրերը: Դեռ անցեալներում յայտնուեց, որ այդ սուրբ կոչուած տուտ ճգնաւորներից ոմանք ժողովրդի տուրքերով փառաւոր կեանք են անցկացնում Կ. Պօլսոյ մէջ, ոմանք նոյն իսկ տան և ընտանիքի տէրեր են:

Մի ժամանակ նուէրները զգալի կերպով նուազել էին դէպի յիշեալ ճգնարանները. այժմ կրկին զարթնել է ժողովրդի մէջ նուիրատուութեան տարածած եռանդը: Իսկ Ռ. սինոդը միջոցներ է ձեռք առել, որ գոնէ այդ նուէրները իրենց տեղերը հասնեն, ուստի հրատարակում է ի գիտութիւն բոլոր Ռուսաց ժողովրդին, որ միայն այն նուէրները իրենց տեղը կը հասնին, որոնց հաւաքողները իրաւունք են ստացել ս. Սինոդից:

— „Спб. Вѣдомости"-ի ասելով Նակուտի շրջանում նոր աղանդ է յայտնուել, որ կոչուում է «Սուրբորդներիկով», որ եղած աղանդներից շատ տարբեր չէ. Երբ աղանդապետին ձերբակալեցին, վերջինս յանձնեց պրոկուրորի օգնականին մի մեծ տետրակ (մօտ 150 թերթ), որ բովանդակում էր այդ աղանդաւորների գլխաւոր դաւանաբանական կէտերը: Այս աղանդաւորների մէջ մի բան աչքի է զարնում, որ չեն ուզում ճանաչել ներկայումս տիրող քաղաքական կարգերը. Դատախազի օգնականի աչքի առաջ աղանդապետը և իր ընկերները պատառոտում էին դրամները ինչան իրենց արհամարհանաց. Ցանցաւորները բանտում հրաժարուում էին օրական իրենց համար նշանակեալ հացն ընդունել, այլ ապրում էին փշրանքներով, որ բանտարկեալները իրր ողորմութիւն տալիս էին նոցա. Այս վերջին գէպքերը լրագրի կարծիքով պարզ խելագարութեան նշաններ պիտի ընդունել:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ·

Աստուածաշունչի ամբողջական թարգմանութիւնները ցարդ եղել են և հրատարակուել 40 եւրոպական լեզուներով և բարբառներով, 41 ասիական, 14 աֆրիկեան, 10 աւստրալեան և ովկիանեան և 3 ամերիկեան, ինչպէս հաշուել է բրիտանական արտասահմանեան աստուածաշունչի քարտուղար Վ. Ատտը։ Ասիական Աստուածաշունչի հրատարակութիւնից մեծ մասը այս գարումն է եղել միսիոնարների ջանքերով. մտադրութիւն կայ դեռ ասիական շատ այլ լեզուներով թարգմանելու։ Աֆրիկեան և ովկիանեան հրատարակութիւնները բոլորը մեր գարումն են կատարուել, որ հետզհետէ բազմանալու վերայ են. իսկ մնանական թարգմանութիւնները եթէ ի հաշիւ առնենք, վերոյիշեալ թիւը կը քառապատկուի։

ՐՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ·

Լեպսիուսը եւ նորա «Քրիստոնեայ արեւելք» ամսագիրը։— Ընդելով որ գերմանական պետութեան քաղաքականութիւնը շատ թրքամոլ է և Գերմանեան է բոլոր պետութեանց մէջ, որ մարդասպանին օգնութեան ձեռք է կարկառում քրիստոնեաներին ճնշելու, չաղթահարելու և կոտորելու, այնուամենայնիւ չկրցաւ չհոռթել գերմանական պետութեան անարդար վարմունքը գերմանացի ժողովրդի զգացմանց հետ։ Արարատի ընթերցողներին արդէն յայտնի է թէ Բեռլինում, Գրանկֆուրտում ընկերութիւններ կազմուեցան, կոտորածից պրծած և դառն աղքատութեան մէջ ընկած և սովի վտանգի մատնուած տառապեալ և բազմաչարչար հայերին օգնելու։ Այդ ընկերութիւնները միացան և այժմ իրենց բազմաթիւ ճիւղերն ունին Գերմանիոյ զանազան տէրութեանց քաղաքներում և գիւղերում։ Ընկերութիւնը արդէն հաւաքել է մօտ 700,000 մարկ և ուղարկել է իւր ներկայացուցիչը Պարսկահայաստանում որբանոցներ բանալու տաճկահայ որբերին խնամելու համար։

Այս շարժման ոգին է եղել և է հոչակաւոր Լեպսիուս գիտնականի որդին Յովհաննէս Լեպսիուս, որ անօրինակ, քրիստոնէի վայել անձնուիրութեամբ գոհ բերեց իւր պաշտօնը հայոց այս գործին։ Անձամբ ճանապարհորդեց Փոքր-Ասիա և ազդու գրչով նկարագրեց Հայոց կոտորածը իւր բոլոր արհաւիրներով ու սարսափով։ Նորա գրքի Ե. տպագրութիւնն է արդէն լոյս տեսել մինչև այս տարուայ յունուար ամիսը և 13000 օրինակ տարածուել։

Այս չափով գոհ չմնալով Յովհաննէս Լեպսիուսը այս տարի յունուարից Բեռլինում հրատարակում է մի ամսագիր «Քրիստոնեայ արեւելք» (der Christliche orient) անունով, ուր թէպետև ընդհանրապէս բոլոր արեւելեան քրիստոնեաների գատն է պաշտպանում առաքինի գիտնականը, բայց՝ ինչպէս մեզ հասած յունուարի, փետրուարի, մարտի և ապրիլի համարներից երևում է՝ շատ մեծ տեղ է բռնում հայոց դատը։ Արարատի ընթերցողներին մի գաղափար տալու համար յառաջ ենք բերում այս չորս համարի մէջ տպագրուած հայոց վերաբերեալ յօդուածների վերնագիրները։

№ 1. Լիւթերի ժամանակից մի հրաւէր առ բեւեռեան քրիստոնեաների համար. Ռրապկերի առաքեան բաղանիսը. Բողոքական եկեղեցու սկզբնաւորութիւնը Հայաստանում 1813—1850։ Ընկերութիւն բողոքական հայոց համար Բեռլինում 1863 թուականից։ Լուրեր հայոց նպաստելու գործի մասին։

№ 2. Էջմիածին (Կարապետ վ.)։ Ամերիկեան քարոզիչներ Թուրքիայում, նոցա ջանքն ու աղքեցութիւնը. դեսպանական վաւերագիրներ հայոց խնդրի։ Նամակներ Թումանիայից և Բուլղարիայից (Ամիրխանեանց)։ Տեղեկութիւններ հայոց նպաստող դաշնակցութեան։ Հաշիւ Արզրումի նպաստող մասնաժողովի մասին։

№ 3. Այստեղ, ինչպէս և հետևեալ Պ. Համարում հայոց մասին եղած մի քանի յօդուածները շարունակուում են, այլև կայ «Տեղեկութիւն հայոց միջազգային օգնութեան մասին»։

№ 4. Դեսպանական վաւերագրեր հայոց խնդրի։ «Արապկերի, Ակնի և Մալաթիոյ» կոտորածները և «Թումայեան ու Պրուսսիոյ կառավարութիւնը»։ Թողնելով որ Արարատի ընթերցողներից նոքա, որոնք գերմաներէնին տեղեակ են, իրենք ձեռք բերեն այս հետաքրքրական ամսագիրը, մենք այստեղ յառաջ ենք բերում վերջին յօդուածն ամբողջապէս։

Պրուսիոյ լանդտագում՝ Լրեստիոխան պաստօր Շտեօկկերը, որ երբեմն գրան երէց էր և յայտնի հակասեմական է, այս տարուայ 11 նիսանին փետրուարի 30 կառավարութեան դիմից հետևեալ բանախօսութեամբ։

«Իմ խօսք խնդրելու պատճառը մի առանձին դէպք է, որ անցեալ տարի այստեղ Բեռլինում է տեղի ունեցել։ Բանն այն է, որ երբ այստեղ աւետարանական հոգևորականները հայոց յայտնի ուսուցչապետ Թումայեանին հրաւիրեցին խօսելու, նորան այդ արգելեցին, սպառնալով արտաքսել։ Այլև նորան արգելեցին բան տպագրելու, որով անդէն են գարձուցել նորան։ Արդ այն ժողովների, որ ոչ միայն աւետարանական, այլև կաթոլիկ եկեղեցու սահմաններում տեղ էին ունենում, գիտաւորութիւնն էր բարեգործութիւնը։ Մարդիկ կամենում էին շուտ Հայաստանի կէս միլիոնին,

Թրքաց սարսափների զոհերի համար ողորմութիւն ժողովել։ Բնական է, մարդկանց այդ գործի կողմը շահելու համար, պէտքէր գործին տեղեկացնել, ո՛րովհետև մեր մամուլը, գոնեա սորա ամենամեծ մասը, անհասկանալի պատճառով Հայաստանի կոտորածների մասին բոլորովին լռութիւն էր պահպանել։ Այս մի ապացոյց է, թէ որպիսի անվստահելի ձեռքերում է մեր հասարակաց կարծիքը։ * Ես կուզէի պ. Ռիկկերտին ևս այս մի անգամ էլ ասել, երևակայենք, թէ Թուրքիայում հէնց միայն 10 հրէայ սպանուած լինէր. ինչպիսի անլուր մի գոռում-գոչում կըբարձրանար ամբողջ Եւրոպայում և քանի ամիսներ կըտևէր։ Որ այստեղ խնդիրը 100000 քրիստոնեայ հայերի մասին էր, ամենևին ի նկատի չառնուեցաւ, այդ կարելի էր զանց անել և օրակարգին անցնել։ (Շատ ճիշտ է. աջակողմ)։ Ահա տեսնում է, թէ ինչ թշուառ ճակատագիր է, երբ մամուլը և հասարակաց կարծիքը կեղծ ձեռքերում է։ (Շատ ճիշտ է, աջակողմ)։ Այսպէս ուրեմն պ. Թումայեանին սպառնացին, որ այլևս չխօսէ (հայոց մասին), այլապէս նա կարտաքսուի։

Բայց այս հրամանը դեռ Թումայեանին չհասած, նա միքանի անգամ արդէն խօսել էր։ Ես կարող եմ միայն ասել, որ նա շատ չափաւոր եւ վայելուչ կերպով խօսեց։ Ամենից առաջ նա իւր երկրի հանգամանքները բացատրեց, հայաձանքները նկարագրեց և պաշտպանեց իւր ազգը այն մեղադրանքներից, որ իբրև թէ յեղափոխականներից և անիշխանականներից էր կազմուած։ Ապա այնուհետև նորա գլխին նախատինքներ էին թափում, թէ նա իւր խօսքը չէ պահել, որովհետև իբրև թէ նա սուլթանից ներում ստանալով սորան խոստացել է Թուրքիոյ դէմ չդործելու։ Վերջին ժամանակ նորան բամբասում են, որ իբրև թէ նա անաղնիւ և շահամոլ է։ Այս բոլորը բացէ իրաց անճիշդ է։ Ուրեմն, պարոնայք, Թումայեանին աստեղ ոչմիայն արգելել են խօսելու իւր մեծ, արդար և ալնիւ գործի մասին, այլև բացի այդ մամուլի միջոցով, այն մամուլի որ կիսապաշտօնական է կոչւում՝ անարգել են։ Ես չեմ կարող ուրանալ, որ այս մարդուն մեղնում իւր ազգի գլխին եկած սարսափելի ոճրագործութեանց մասին խօսել արգելելը ես ստորացումն եմ համարել։ Նա անարգել խօսում է Զուիցերիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Անգլիայում, ինչո՞ւ ոչ մեղնում։ Մի՞թէ մենք առանձին առիթ ունինք Բարձրագոյն Դռնից վախենալու կամ ընդդիմութիւն յարուցանելով չմոդնենք, որ մարդիկ խօսքով իրենց պաշտպանեն այս ահռելի, անազորոյն գազանութիւններից։

Ես չեմ կամենում արտաքին քաղաքականութեան սահմանը մտնել, ես այստեղ կամենում եմ միայն այն ասել, ինչոր այժմ համարեա ամեն մէկը գիտէ և ինչոր բոլորովին ամեն կողմից փաստերով հաստատուած է։ Մենք գիտենք, որ Հայաստանում քրիստոնեաները հալածանքի, արիւնռուչտ գազանութեանց և անլուր ոճրագործութեանց են մատնուած և այն էլ այն աստիճանի, որ երբէք եղած չէ։

Նոյն իսկ Հռովմայեցւոց կայսրների հալածանքները ոչ թուով և ոչ էլ գազանութեամբ կըհամանին Թուրքերի ոճրագործութեանց։ Եթէ մէկը կամենար այս մասին վէճի մտնել, ես կարող էի դեսպանների անցեալ տարուայ հաղորդագրութիւններից հատուածներ կարդալ ձեր առաջ, որ կըհաստատէին իմ ասածը։ Այս դեսպանական հաղորդագրութեանց մէջ առանձնակի շեշտուում է այն, որ պետութեան պաշտօնեաները և զինուորները մասնակցել են այս արհաւիրքներին. այնտեղ բացորոշ հաստատուում է, որ այս հալածանքներն սկսուած են մահմետական պրոպագանդայի, այդ հրոյ և սրոյ առաքելութեան շնորհիւ. պարզ ապացուցուած է, որ եթէ քրիստոնեաները մահմեդական դառնան, նոցա կենայեն։ Արդ այստեղ Պրուսիայում միայն՝ Թումայեանին արգելեցին իւր անբախտ և բազմաչարչար ազգի համար համակրանք յարուցանելու, սրտեր ջերմացնելու և կենդանացնելու։

Թերևս պ. նախարարը կարող է մի խօսքով պարզել գործը։ Այն քրիստոնեայ շրջանները, որոնց ես եմ պատկանում, այն ժամանակ շատ գըժկամակում էին Թումայեանի հետ այդպէս վարուելու համար, ես շնորհապարտ կըլինէի, եթէ նախարարական սեղանից մի խօսք ընկնէր, որ այս վըրդովմունքը խաղաղեցնել կարողանար։

Ներքին գործոց նախարար Ֆրայհերը Ռիկկէն պատասխանում է.

Պարոնայք, ճիշդ է որ Հայ ուսուցչապետ պաստոր Թումայեանին, որ Թուրքիոյ Հպատակ է, իմացուցել են, որ նա կամ դադարեցնէ իւր յուղիչ ճառախօսութիւնները, որ նա այստեղ զանազան ժողովներում արել է, կամ աչքի առաջ ունենայ որ երկրից կարտաքսուի։

Սորա հիմքը արտաքին քաղաքականութիւնն է։ Ուսուցչապետ Թումայեանը չի աշխատել միայն, ինչպէս պ. երեսփոխան Շտեօկկերը բացատրեց, հայոց համար սրտեր շահել, այլ նա մի այնպիսի եղանակով է արել, որ կոշտ ու կոպիտ կերպով անցել է ակնածութեան սահմանը, որ պէտք է պահէր դէպի իւր հայրենի տէրութիւնը և մանաւանդ ամեն բանից առաջ դէպի իւր պետը (այսինքն սուլթանը)։ Թումայեանի գործողութեանց երկար ականատես լինելը չէր կարող համապատասխանել այն բարեկամական յարաբերութեանց, որ մենք ունինք բար-

* Հեղինակն ակնարկում է հրէաներին, որոնց ձեռքին է համարեա ամբողջ գերմանական մամուլը։

ձըրագոյն Դրան և յատկապէս սորա բարձր պետի հետ։ Մնացեալ նորա բոլոր արտայայտութեանց դէմ Հայերի համար բարեացակամութիւն և համակրութիւն յարուցանելու համար ոչ մի կերպով արգելքներ չեն եղել։

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ։

— Անգլիայում 1880 թուականից իվեր մի միսիոնարական ընկերութիւն է հիմնուել Սենանների մէջ քրիստոնէութիւնը տարածելու նպատակով։ Այդ քարոզչական ընկերութիւնն այժմ Հընդկաստանում, Ցեյլոնում և Չինաստանում ունի 200-ից աւելի եւրոպացի կանայք (որոնց եօթը բժիշկ են և շատերը տեղեակ բժշկութեան առուեստին), որոնց գործին օգնում են 700 բնիկներ, որոնք ուսուցչուհիներ կամ աստուածաշունչ ընթերցող գպիրներ են։ Անցեալ տարի սորա այցելել են 6300 սենանների և բնակիչ կանանց աստուածաշունչ ուսուցել։ 7000-ից աւելի աղջիկներ յաճախում էին ցերեկօթիկ դպրոցները և 178000 կին ու աղջիկ խնամուում էին հիւանդանոցներում, դեղատներում կամ իրենց տներում։

Աֆրիկա։ Գերմանացիք տիրելով Կամերունին հետզհետէ քաղաքակրթում են այդ երկիրը և քրիստոնեայ դարձնում։ Այս երկրի կառավարիչը 2 հրովարտակ է հրատարակել. մէկով յայտնում է որ կանայք ուրիշների, մանաւանդ իրենց այր մարդու, յանցանքի պատճառով չպէտք է բանտարկուին, երաշխաւոր դառնան և կամ ծախուին. միւսով, որ տեղացի քրիստոնէի կին ու երեխաները չեն կարող մի ուրիշի սեփականութիւն համարուիլ, ինչպէս ցարդ կար ըստ հեթանոսական սովորութեան։

Ուգանդայում 57,000 տեղացիներ գտնուում են միսիոնարների աղդեցութեան տակ, որ կարդալ գրել գիտեն, ունին 321 մատուռ. բնիկներից կան ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Քրիստոնէութիւնն այնպէս արագ յառաջադիմում է Ուգանդայում, որի նման տեսնուած չէ միսսիոնարական գործում։

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ։

Հ. ԳԵԼՑԵՐ.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ։

(Abriss der byzantinischen kaisergeschichte)

«Ով երբ և իցէ պարապել է բիւզանդական անցեալի ասպարիզում, նա գիտէ թէ ինչքան զգալի և ցաւալի է, որ դեռ չկայ բիւզանդական պատմութեան համառօտ, վստահելի և գիտութեան նոր պահանջներին համապատասխան մի նկարագրութիւն։ Ահա այդ պակասը այժմ լրացել է. արքունական խորհրդական Պ. Հ. Գելցերը՝ Ենայի պատմութեան պրոֆեսորը՝ յանձնառու է եղել իմ խընդրերով տալ բիւզանդական պատմութեան նկարագրութիւնը, որ գրքիս յաւելուածն է կազմում էջ 911—1067։ Գրուածքի արժանիքի և թերութեան բացարձակ պատասխանատուն ինքը Պ. Հ. Գելցերն է»։ *

Այս խօսքերը գրողը Կարլ Կրումբախերն է իւր բիւզանդական մատենագրութեան պատմութեան յառաջաբանի մէջ։ Եթէ մինչև այսօր նոյն իսկ գերմաներէն լեզուով պակասել է բիւզանդական պատմութեան յարմար գործածելի ձեռնարկ, գա ունի իւր պատճառները։ Մինչդեռ յունական դասական անցեալի իւրաքանչիւր երևոյթ՝ գրական—պատմական, գեղարուեստական, փիլիսոփայական ևն սկսած միջին, մանաւանդ վերածնութեան դարերից քաղաքակրթ Եւրոպայի խորը և բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ էր և է, նոյն յունական կեանքի անմիջական ժառանգն ու շարունակողը՝ Բիւզանդիոնը իւր յայտնի արևելա—յունական քաղաքակրթութեամբ անուշադիր էր թողնուել և մինչև անգամ արհամարհուել. միայն վերջերս են զգացել այդ ընթացքի սխալը և մեծ եռանդով սկսել թերին լրացնել։ Նոր ուղղութեան ամենագործող զարկ տուողը եղաւ Միւնխէնի պրոֆեսոր Լիշեալ Կ. Կրումբախերը, որ 1890 թ. հրատարակեց առաջին անգամ բիւզանդական գրականութեան պատմութեան առաջին ձեռնարկը և հաստատ օրինակներով ապացուցեց, որ ոչ միայն արհամարհելի չէ, այլ և անհրաժեշտ է լաւ ուսումնասիրել բիւզանդական անցեալը մարդկային քաղաքակրթութեան կապն ու ընթացքը լաւ ըմբռնելու համար։ Նորա

* Տես. Karl Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897 էջ XI յառաջաբան։

զուտ գիտնական հիմունքների վրայ դրած գիրքը, թէև իրրև առաջին փորձ ոչ զուրկ թերութիւններից, մեծ յաջողութիւն ունեցաւ և ամենակարճ ժամանակում տարածուելով՝ վաստակեց բիւզանդական անցեալով հետաքրքրուող բաւական թուով բարեկամներ. երկու տարի անց՝ 1892 թ. նա սկսեց հրատարակել „Byzantinische Zeitschrift“—«բիւզանդական լրագիր» և յաջողեցրեց որ բավարական տերութիւնը Միւնխենի համալսարանում բիւզանդական առարկաների համար առանձին պրոֆեսորութիւն հաստատեց։ Օրինակը խրախուսեցուցիչ էր. նոյն առարկաների համար այս մի քանի տարուայ ընթացքում պրոֆեսորութիւններ են հաստատուել Ռուսաստան՝ Պետերբուրգում, Հոլանդիայ՝ Լեյդենում, Հունգարիա՝ Բուդապեստում. բացի այդ 1894 թուից սկսած Պետերբուրգի կայսերական ակադեմիան Վասիլեվսկու խմբագրութեամբ հրատարակում է «Византійскій Временникъ — բիւզանդական ժամանակագիր» թերթը. և ի վերջոյ Կրումբախերի գրքի առաջին հրատարակութիւնը ամենակարճ ժամանակում սպառուելով, նա 1896 թ. հրատարակել է նոյնը երկրորդ անգամ, որը առաջինի համեմատութեամբ առ նուազն երեք անգամ աւելացրած է, թէ թերի մասերի լրացումներով և թէ նոր գլուխների աւելանալով, որ չկային առաջինի մէջ. Որևէ հինգ վեց տարուայ սկսած և այդքան մեծ չափով ծաւալ ստացած բիւզանդական ուսումնասիրութեան գործը ամենից շատ մեզ հայերիս համար է մխիթարական և ամենից շատ մեզ պիտի հետաքրքրէ և ուրախացնէ։

Ո՞ւմ յայտնի չէ որ մեր պատմական համարեա ամբողջ անցեալը ամենասերտ կերպով միացած էր յունական և մանաւորապէս բիւզանդական կեանքի հետ. մանաւանդ սկսած այն ժամանակից, երբ Բիւզանդիոնում և Հայաստանում հաստատուեցաւ քրիստոնէութիւնը՝ երկու հարևան ազգերի մէջ աւելի ամրացան քաղաքական և մտաւորական կապերը. հայերը անընդհատ շփման մէջ էին յոյների հետ, երբեմն իրրև դաշնակից և բարեկամ, երբեմն իրրև թշնամի կամ հալածեալ և ընկճեալ. թէ հալածուած և թէ բարեկամ ժամանակ միշտ ընդունել ենք յոյներից ահագին քաղաքակրթական պաշար, փոխարէնը Բիւզանդիոնի գահին այնպիսի հայազն գահակալներ տալով, որոնց իշխանութեան ժամանակամիջոցը բիւզանդական կայսրութեան ամենափայլուն և ամենածաղկեալ շրջանն է համարուած, որոնք ազատել են բիւզանդական գահը ապահով կորստից, իսկ ընդհանուր մարդկութեան համար պահպանել դարերի քաղաքակրթութիւնը բարբարոսանալուց և անհետանալուց. Մինչև օրս այդ փոխադարձ յարաբերութիւնների մասին մեր ունեցածն ու գիտեցածը գլխաւորապէս, կամ համարեա բացառապէս, ծագել է հայկական աղբիւրներից, որը բացի այն որ բնականաբար միակողմանի է եղել, շատ մասերով էլ թերի էր. Մեզ համար շատ դժուար էր մտնել բիւզանդական գրականութեան ահագին և խիտ անտառը և այնտեղից անհրաժեշտ օգուտն ստանալ. իսկ այսօր շնորհիւ Եւրոպացի անխոնջ գիտնականների ջանքերին բացուած և դիւրացած են անտառի ճանապարհները. այսօր այլ ևս ներելի չէ, որ Հայոց պատմութեամբ և մատենագրութեամբ պարապելիք առանց ամեն քայլափոխում բիւզանդականի օգնութեանը դիմելու. Ահա այդ անհրաժեշտութիւնից առաջնորդուած թարգմանում ենք պրոֆեսոր Գելցերի աշխատութիւնը ամբողջովին, սկզբում մաս մաս տպելով Արարատում և ապա առանձին գրքով հրատարակելով։

Գելցերը յունական պատմութիւնը սկսում է 395 թ. և հասցնում մինչև 1453 թուականը՝ ինը շրջանների բաժանելով. համարեա հազար տարուայ զանազան անցքերով բազմահարուստ պատմութիւնը՝ գրքի ծաւալի պատճառաւ ստիպուած լինելով ընդամենը միայն 156 մեծագիր ութածալ էջերի մէջ ամփոփելու, չափազանց համառօտել է. բայց անկախ այդ հանգամանքից՝ նա կարողացել է մեծ վարպետութեամբ ոչ միայն քաղաքական այլ և կրօնական հարցերին և ժամանակակից հասարակական ամենից աւելի աչքի ընկնող երևոյթներին բաւական չափով տեղ տալ իւր նկարագրութեան մէջ. Թէ նա իրրև պատմաբան ինչ առաւելութիւններ ու թերութիւններ ունի, այդ մասին ոչինչ չենք կարող ասել. միայն նա հայկական տեսակէտից իւր դասակից մասնագէտներից այն բացարձակ առաւելութիւնն ունի, որ լաւ գիտէ Հայոց գրականութիւնն ու պատմութիւնը և Հայերի մասին կարծիքներ յայտնում է իւր ունեցած գիտութեան հիման վրայ՝ անկողմնապահ և անկանխակալ։ Նա պատմութեան ընթացքում շարունակ յիշում է բիւզանդականի հետ կապ ունեցող հայկական դէպքերը, որ հայերէն չիմացողի ուշադրութիւնից կարող էին վրիպել։ Նախընթացում յիշածի հետ այս հանգամանքն էլ բաւական կարևոր և դրդիչ էր, որ ես օգտակար համարեցի թարգմանել այս գործը։ Զափազանց համառօտութեան շնորհիւ ասացուածքների մէջ մեծ խրթնութիւններ և մինչև անգամ անորոշութիւններ կան, որ արտայայտուելու են նաև թարգմանութեան մէջ, որն այդ պատճառով սաստիկ դժուար էր։ Այս յայտնի լինելով, պահանջուում է ընթերցողի ուշադրութիւնը աւելի մեծ չափով։

Մեսրոպ Վարդապետ

1897 թ. Յունիս 24.
Ս. Էջմիածին.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ. *

«Առանց երեւակայութեան չէր կարող լինել իսկական սէր դէպի աշխատանքի, դէպի մտաւոր հարստութիւն, առանց նրան չկայ ճշմարիտ բարոյականութիւն, չկայ այն խորին այլոց վշտի կարեկցութիւնը, չկայ հպարտորէն եւ յարատեւ առանց նրանց շահերին նուիրուած»:

Գ ո ս ո ւ բ ի ն.

Մեզանից շատերին հաւանականաբար՝ պատահել է տեսնել, թէ ինչպէս կացնի հարուածների տակ ցած է գլորուել մի ծառ. բայց շատ քչերի վերայ թողել է այդ երեւոյթը այնպիսի տպաւորութիւն, որ զգում են նեարդային, հարուստ երեւակայութեամբ օժտուած, զգայուն անձինք. Մեզ համար ծառ կտրելը բաւականին սովորական երեւոյթ է, որ ոչ մի յոյզ չի յառաջացնում մեր մէջ. բանաստեղծի համար ծառի անկումը՝ կենդանի էակի սպանումն է, էակ, որ զգում ու տանջուում է՝ նորա համար կացնի իւրաքանչիւր հարուածը ցնցում է ծառը ամբողջ մարմնով, սարսափում, ամբողջ մարմնով դողդողում է, վրդովուած տերեւները իրար անցած սոսկումով համարում են կացնի ամեն մի հարուածը—վերջը գնալով մահացու է դառնում, վերջապէս անկենդան դիակը խուլ հեծեծանքով գլորուում է գետին. Մենք բոլորովին անվրդով նայում ենք կատարուած իրողութեան վերայ, որովհետեւ ծառի կեանքը մերինից տարբեր է, և հասկանալը մեզ համար շատ դժուար. Բանաստեղծը չի կարող մնալ անկարեկից. նորա երեւակայութիւնն այնքան ուժեղ է, որ մի քանի արտաքին նշաններից նա մի ամբողջ պատկեր է ստեղծում, մեզ մատչելի է դարձնում այդ նշանները, տալիս է նորան մարդկային բացատրութիւն և ստիպում է մեզ ընթերցողներիս զգալ այն հոգեկան վիճակը, որ ինքը կրում է. Ուրեմն պարզ է, որ երեւակայութիւնը մեծ դեր է կատարում ուրիշի հոգեկան վիճակը ըմբռնելու համար.

Ցիրաւի մեր սովորական յարաբերութեանց մէջ ուրիշի հոգեկան կեանքը երբէք անմիջապէս չենք կարող հասկանալ. Մենք շարունակ գործ ունինք որոշ նշանների հետ և այդ նշանների վերայ հիմնուած մեր երեւակայութիւնը պատկերացնում է համապատասխան վիճակ. Մտնել այլոց դգացմանց մէջ, պատկերացնել այդ զգացմունքները երեւակայութեան գործ է, որը այս դէպքում ծնեցնում է մեր մէջ համակրութեան զգացմունք. Այսպէս ուրեմն մեր երեւակայութիւնը մի յայտնի պատճառով պիտի սկսի լարուած գործել, տալ մեզ պատկերներ և տեսարաններ, որոնք և յառաջացնում են մեր մէջ յոյզ ու զգացմունք, վերջիններս էլ զարթեցնում և շարժում են մինչև այդ ժամանակ անտարբեր մնացողի երեւակայութիւնը և այդպիսով անմատչելին մատչելի դարձնում. Բայց այս դեռ բնդրի միայն մի կողմն է. լինում են դէպքեր, երբ մի անձնաւորութեան համակրական զգացմունքը արտայայտուում է շատ զօրեղ, բայց նորա հետեւանքը ոչ թէ քաջալերութեան՝ այլ կշտամբանքի է արժանի. Զոր օրինակ, վաշխառուն հարստի փարթամ կեանքի պատկերով յափշտակուած քերում ու կափում է իւր պարտատէրներին, դիմում է ամենանախիղճ միջոցների և ամենայն յամառութեամբ գործը գլուխ տանում. Թէև այստեղ էլ զօրեղ և լարուած երեւակայութիւնն է դէպի գործ մղողը, բայց ոչ ոք դորա վերայ չի նախանձում. Ուրեմն ակնյայտնի է, որ կանոնաւոր զարգացած երեւակայութիւնից պահանջուում է և մի այլ կողմն՝ կեանքի փորձ, որ կարենայ աւելի լայն հայեացք ունենալ կեանքի վերայ. կարողանայ պատկերացնել այն վիշտըն ու յուսահատութիւնը, որով համակուում են կողոպտուողները, զգայ նորանց տանջանքն ու ցաւը. և այն ժամանակ չէր թոյլ տայ իրեն ուրիշին կողոպտել. Ուստի մի կանոնաւոր զարգացած երեւակայութիւն, որ ընդունակ է համակրական յոյզեր զարթեցնել, ոչ միայն խորը և լարուած պիտի լինի, այլ և ունայն կեանքը լայն կերպով ըմբռնելու կարողութիւն. Մտաւոր զարգացումը այստեղ հասնում է օգնութեան. բայց է անում մարդու առաջ կեանքի նորանոր կողմեր և այսպիսով ծառայում է երեւակայութեան ընդարձակուելուն.

Այստեղից կարելի է մի քանի եզրակացութիւններ հանել. Եթէ մի հասարակութիւն մոռացութեան է տալիս այն հոգեւոր բարձր գաղափարները, որ նախնիք թողել են իրը ժառանգութիւն, և ընկել է նիւթականի ետեւից, գա պարզ ապացոյց է, որ այդ հասարակութեան մտաւոր հորիզոնը մի որ և է պատճառով չափազանց նեղացել է, որ նորա երեւակայութիւնը ուղղուած է դէպի այն կողմը, ուր կեանքը գաղափարի գատարկութիւն է ներկայացնում. (ինչ որ ասուեց հասարակութեան մասին, նոյնը կարելի է ասել և անհատի վերաբերմամբ), Դարձեալ եթէ մի ժողովրդի գրականութեան մէջ նկատուում է գաղափարական կեանքի ան-

* Քաղուած Բ-ից եւ „Образование“ ամսաթերթից:

կումն, անկումն ստեղծագործութեան, եթէ նշանաւոր երկերը կրում են իրենց վերայ յոռետեսութեան խոր կնիքը, դա ապացոյց է, որ կեանքը շատ է մանրացել, ուստի և բարոյական բնաւորութիւն ունեցող տպաւորութիւն է թողնում։ Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ տեսութիւնը, կարելի էր շատ և շատ երևոյթներ բացատրել և լինդիրներ լուծել. բայց արդէն իսկ բաւական հեռացանք այն վերնագրից, որ յօդուածի ճակատին էինք դրել, ուստի սահմանափակուենք միայն դպրոցական գործով։

Դպրոցը և կեանքը իրար հետ շատ սերտ կապուած են և փոխադարձաբար աղղում են միմեանց վերայ. եթէ ժամանակակից դպրոցը ճըշնում է իւր սանիկների համակրական զգացմունքները, պարզ է, որ այդպիսի դպրոցը կըպարգևէ հասարակութեան միայն եսամոլներ, ամբողջովին խորասուզուած անձնական յարմարութեանց լինդրի մէջ։ Այդպիսի եսամոլները կըտկարացնեն հասարակութեան կեանքի զարկերակը, որը կանդրադառնայ ի միջի այլոց և էլի դպրոցի վերայ։ Արդ ինչ վիճակի մէջ է մեր դպրոցներում երևակայութեան զարգացման գործը։

Ժամանակակից դպրոցական կեանքը շատ միատեսակ է. աշակերտների կարծիքով դասերին յաճախելը, դաս պատրաստելը, պատասխանելը տխուր անհրաժեշտութիւններ են, որից թէև կըցանկար, բայց չի կարող խոյս տալ։ Թէև դասաւանդութեանց նպատակը գնալով լաւանում է, դասագրքեր և այլ դպրոցական առարկաներ բազմանում ու բազմանում են, բայց մի բան անփոփոխ է մնում, որը և դըպրոցական գործի գլխաւոր մղիչն է։ Դպրոցի ամբողջ դրութիւնը հիմնուած է ստիպմունքի, բռնութեան վերայ։ Աչքաթող թողանք թուանշանները, վերցրէք քննութիւնները, և՝ որ գլխաւորն է՝ վերցրէք դպրոցի շնորհած արտօնութիւնները և դպրոցները կամայանան։ Հարկաւ մի աւելի բարձր նպատակ արդարացնում է և ստիպմունքը, բռնութիւնը, բայց այս ևս չի կարելի ուրանալ, որ բռնութեան հետևանքն է ղղուանք, ձանձրութիւն. միայն վատ թուանշանի երկիւղն է, որ ստիպում է ամեն բան ղսպել և համբերել, բայց և յաճախ գիմել ստախօսութեան և խարէութեան։

Բայց կարող էր և է երևակայութիւնը շատ բան անել դպրոցական կեանքը քաղցրացնելու համար. դա արդէն կախուած է դաստիարակի հըմտութիւնից. եթէ նա կարողանայ ամեն մի իրողութիւն այնպէս պատկերացնել աշակերտի առաջ, որ տպաւորութիւն և յոյզ յառաջանան վերջինիս մէջ, զարթեցնի աշակերտի երևակայութիւնը ցանկալի ուղղութեամբ, գործելու համար, նա արդէն կարողացաւ սիրելի դարձնել այն գործը, որից այլապէս պիտի ղղուէր աշակերտը։ Ցուէք նորան երևակայութեան նիւթ, խթեցէք նորա համակրական զգացմանց լարերին և դուք կըտեսնէք, թէ ինչպիսի աշխոյժով կսկսի գործել ուղեղը, կըլսէք, թէ ինչ ներդաշնակ հնչումներ դուրս կըգան այն հրաշալի գործիքից, որ մարդկային հոգի է կոչուում։

Հարկաւ դպրոցական առարկաները բազմաթիւ են, և նրանցից ոչ մէկը զուրկ չէ երևակայութեան զարկ տալու գործում. միայն համեմատական առաւելութիւն կարող է լինել։ Առարկաներից մի քանիսը շատ զօրեղ կերպով նպաստում են համակրութեան զգացմունքի զարգանալուն. զօր. գրականութիւն, պատմութիւն և մանաւանդ կրօնը շատ մեծ հետաքրքրութիւն և սեր պիտի յառաջացնեն ունկընդրի մէջ և մեծապէս զարկ տան համակրութեան զգացմունքին։

Շատ քչերը գուցէ չգիտեն, թէ ինչպիսի հետաքրքրութեամբ լսում էին մանկութեան հասակում այն պարզ և անպաճոյճ հեքիաթները, որ այնքան նիւթ էին մատակարարում երևակայութեան. հեքիաթի ընթացքում փոփոխակի տխրում ու ուրախանում, ատելութեամբ և սիրով տոգորուում հերոսի հետ. ինչո՞ւ, որովհետև մանում էին նորա վիճակի մէջ և նորա հետ ապրում. ինչո՞ւ նոյն վիճակը չպիտի ստեղծէր և դպրոցը։ Չէ՞ որ այնտեղ էլ նոյն բանն է կատարուում աւելի մատչելի կերպով, պատմութիւնը փոփոխակի գնում է ունկընդրի առաջ երջանկութեան, թշուառութեան նկարագրութիւններ, բարի և չար մարդիկ ու գործեր, այնտեղ էլ կան սխրագործութիւններ, բայց հեքիաթով ոգևորուող, լաց եղող կամ ծիծաղող պատանին յօրանջում է դպրոցում։ Գրականութիւնը նոյն վիճակին է դատապարտուած, այն ինչ՝ այնքան աղնիւ ու վեհ գաղափարներ, բարձր տիպարներ և աւելի հանճարեղ կերպով պատմուած, ըստ երևոյթին, շատ պիտի գրաւէին աշակերտներին, կրօնի համար եթէ աւելին չասենք, պակասը չենք ասիլ։

Քիչ չեն սրտաշարժ պատմութիւններ հին և նոր ուխտի մէջ. Յովսէփ գեղեցիկ պատմութիւնը տանը ժողովրդի բերնին շատ անգամ լսողի արտասուքն է շարժում. Քիչ սրտաշարժ չէ Մովսիսի պատմութիւնը. Եղիա, Եսայի և Երեմիա և սոցա նման շատ շատերը կան, որոնք բոլորը ճշմարտութեան համար հալածուած, անարգուած, բայց իրենց անդողդողդ բնաւորութեամբ, գործին իրենց անձն զոհելու պատրաստութեամբ այնպիսի պատկերներ են, որ շատ յոյզեր ու խորհրդածութիւններ պիտի յառաջացնէին աշակերտների մէջ. բայց հաղարից մինը այդ վիճակը չի տեսել, որովհետև ուսուցիչը շատ անգամ ցոյց է տուել պատրաստուելիք դասի սկիզբն և վերջը. դասը ասել է անտարբերութեամբ, աշակերտի ուշադրութիւնը չի գրաւել սովորական համարուած, բայց իսկապէս ուշադրութեան արժանի, նշանների վերայ, Եղիայի գործերը պատմելիս

աշակերտը կասի, որ 400 քուրմերին էլ կոտորեց, կամ երկնքից կրակ իջաւ և ուղարկած զինուորներին այրեց կամ լեռը, բայց... բայց այդ բառերը նորա մէջ ոչ մի պատկեր չեն զարթեցնում, նա չի պատկերացնում 400 սպանուած մարդ. իրանց մոլորութեան զոհ գնացած.....

Որպէս զի կրօնը հետաքրքիր լինի, ուսուցիչը պիտի գիտենայ կենդանացնել դասը, սիրէ իւր առարկան, ճանաչէ ունկնդիրների ըմբռնման չափն և եղանակը և կարողանայ մանկական զգայուն սրտի մէջ համակրական ջերմ սէր զարթեցնել դէպի այն մեծ ախոյեանները, որոնք կռուում են երկրիս վերայ Աստուծոյ արքայութիւնն հաստատելու համար։

Նոր Կտակարանը ևս առաւել նշանակութիւն ունի երևակայութեան ու համակրութեան զգացմանց զարգացնելու գործում. բայց այդ նպատակին հասնելու համար պէտք էր ազատել այն շրջանակից, որի մէջ նա դատապարտուած է մնալ։ Անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր աշակերտի երևակայութեան մէջ պարզ կանգնած լինէր Քրիստոսի մարդկային պատկերը, որ նա սիրէր Նրան, որ սովորեցրել է մեզ ուրիշի համար տանջուիլը մեծ երջանկութիւն համարել։ Այո՛ անհրաժեշտ է, որ աշակերտը մարդացեալ Աստուծոյ երկրաւոր գործերը պարզ ու որոշ պատկերացնի. նա ման է եկել այն երկրի վերայ, ուր այժմ մենք ման ենք գալիս, նոյն օդն ծծել, ենթարկուել կեանքի ծանր պատահարներին, ծիծաղել ու լաց եղել այլոց երջանկութեան կամ թշուառութեան համար։ Ուրեմն շատ մերձ ենք կանգնել նորա կեանքը երևակայելու և դէպի Մեծ Վարդապետը համակրական յոյզերով լեցուելու համար։ Նորա քարոզութիւնները, անկեալ ու մեղաւորին սիրելը, հոգեկան աշխարհին աւելի մեծ նշանակութիւն տալը, կեղծաւորին իւր անունով կոչելը, ճշմարտութիւնը ճակատին ասելու քաջութիւնը, այնպիսի հետաքրքիր պատկերների ու գործողութեանց մէջ պատկերացած են, որ՝ ըստ երևութին, շատ քիչ ջանք գործ պիտի դներ դաստատուն ունկնդրին շօշափելի և սիրագրգիռ դարձնելու, բայց դորանք կրկնում է անուշադիր կերպով, այդ ներքին իմաստին նոյնչափ անուշադիր ուսուցչի առաջ։ Մեզանից ո՞ր մէկը գիւղի եկեղեցում մատնութեան գիշերը չի լսել մթութեան մէջ հնձեձանք ու խորը յուզուած հոգու ձայներ. սակայն այդ միևնոյն պատմութիւնները աննկատելի կերպով սահում անցնում են գպրոցի սեղանի վերայ նստողների առաջից. աշակերտը առանց պատկերացնելու, համակրութեան նշոյլ անգամ ցոյց տալու և յուզուելու արտաբերում է՝ Յիսուսին բռնեցին, ապտակեցին, բռնցին, փշէ պսակ դրին, ծնծղացին, խաչը ուսին Golgotha տարան, խաչեցին եւլն.—գորանք նորա համար այնքան սովորական բաներ են կարծես, որ իրր թէ ասէր. նստաւ, վերկացաւ, գնաց, շուռ եկաւ ևլն, Բայց մի անգամ թող բաց անի կրօնուսոյցը Մեծ Վարդապետի կեանքի խորին խորհուրդը և աշակերտը սիրի Անմեղ Զարչարեալին, թող ըմբռնի թէ տանջանքը բաժին է նորանց, «որք ոչ են յայսմ աշխարհէ» նորա կեանքն էլ խորհուրդ կըստանայ, նսեմութեան փշերը կըթափուեն և մարդասիրութեան, ուրիշի համար գործելու, անկեալին օգնելու քաղցր լուծը սիրով յանձն կառնի. հեղութիւն, խոնարհութիւն և սէր դէպի մերձաւորը կըլեցնեն նորա հոգին, որը լաւ կազմուած ու լարուած գործիքի պէս թեթև հպումից էլ «լիահնչիւն ձայներ» կը հանէ. Աշակերտը անպայման կերպով կըհատատայ աւետարանի այն վեհութեանը, որ բացուում է նրա առաջ շնորհիւ մանկավարժի երևակայութեան։ Կասէք, որ դա տաղանդի գործ է։ Մ՛թէ չարժէր մի այդպիսի բարձր կոչման համար նոյն իսկ տաղանդներ փնտռել և ո՛չ թէ ամեն մի չորս աստիճանաւոր կրօն աւարտելու իրաւատէր համարուէր. մանաւանդ ուսուցչի տուած զարկը ոչ միայն անհատի համար է, այլ ամբողջ հասարակութեան ու ժողովրդի. նորա յառաջացրած ազդեցութիւնը նման է խաղաղ լճում քարից յառաջացած ալիքներին, որոնք գնալով իրարից մեծ շրջաններ են կազմում նոյնպէս և ազգային կեանքի ամեն մի հաստատութիւն ու երևոյթ զգում է այդ բարերար զարկի հետևանքը. ինչ խօսք, որ այդ բարերար ազդեցութիւնը անգրադառնում է և գպրոցի վերայ, որտեղից սկսել էր և գնալով բարձրացնում և բարւոքում նորա վիճակը։

Մենք միայն բաւականացանք կրօնի դասաւանդութեամբ. բայց ընթերցողը թող մի քիչ խորհի և կըտեսնէ, որ գպրոցում աւանդելիք շատ և շատ առարկաներ դասատուի զարթեցրած հետաքրքրութեամբ կարող են շատ մեծ փոփոխութիւններ յառաջացնել հասարակութեան կեանքի մէջ և այն էլ դէպի բարին ու վսեմը. իսկ դորա բանալին վերևում յիշուած երևակայութիւնն է։

Ս. Յ.

ԽՈՒԼ ԵՒ ՀԱՄԲՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՊՐՈՑ ՉՈՒՄՅԵՐԻԱՅՈՒՄ.

Ջուլիսերիայում խուլ և համրների համար գոյութիւն ունեցող գպրոցական գործը կանոնաւորուած էր դեռ 1889 թուին, որով գպրոցական հասակ ունեցող բոլոր խուլ և համր երեխաների համար ուսումը պարտաւորեցուցիչ դարձաւ։ Գործի յաջողութեան համար ամբողջ երկիրը բաժանուեցաւ 17 ուսումնական շրջանների։ Մանաւանդ նպաստներ ստանալով գանձարանից, իւրաքանչիւր

շրջան պարտաւոր էր հիմնել և պահել հաստատուն և նպատակին ծառայող այդպիսի ուսումնական հիմնարկութիւններ։

Այս տարի Զուիցերիայում աւելացան երեք նոր դպրոց, որոնք ծառայելու են միմիայն խուլ ու համրներին կրթելու համար, որոնցից մեկը մօտ ժամանակներս բացուեց Վեներսբուրգ քաղաքում, որ կարող է օրինակելի համարուել ոչ միայն Զուիցերիայի, այլ նոյն իսկ ամբողջ Եւրոպայի համար։ Վեներսբուրգը, որը գտնուում է Վեներա լճի հարաւային ափում, մի գեղեցիկ, կոկիկ քաղաք է. ունի ընդամենը 5—6 հազար բնակիչ։ Նորա մօտքուր, լայն և գեղեցիկ սալայատակ փողոցներից մեկով կտեսնենք դէպ դիւղը տանող ճանապարհներից մեկի վերայ մի քանի հոյակապ և մեծ քարեայ շինութիւններ։ Ահա հէնց դոքա ի միասին կազմում են Վեներսբուրգի նորարաց խուլ ու համրների դպրոցը։

Այդ քարեայ շինութիւնների հէնց արտաքինը խիստ հրապուրիչ տպաւորութիւն է թողնում նայողի վերայ։ Հոյակապ հիմնարկութեան ներքին կազմակերպութիւնն աւելի ևս հիացմունք ու զարմանք է յառաջացնում իւր յատակագծի ճշտութեամբ, յարմարութեամբ և հետեւութեամբ լինելով, բոլորովին համապատասխան առողջապահական և մանկավարժական պահանջներին և խուլ ու համրների ուսուցանելու սկզբունքներին։

Վերջին 10 տարիների ընթացքում խուլ ու համրների դաստիարակութեան զբաղեցնող հարցերից մէկն էր այն սկզբունքը, թէ ինչպէս պէտք է խուլ ու համր աշակերտներին բաժանել դասերի ժամանակ՝ համաձայն նոցա ընդունակութեան և խլութեան աստիճանների։ Սկզբներում խուլ ու համր երեխաները, մինչև անգամ բոլորովին անընդունակները՝ ի ծնէ խուլ ու համր կամ միայն խուլները, ինչպէս և ապա միայն այդպիսի դժբախտութեան պատահածները, նոյնպէս և այն երեխաները, որոնք կարողանում են արտասանել մի քանի հնչիւններ միայն,—ամենքը պարապում էին ի միասին, միևնոյն դասարանում և մի և նոյն դասատուի հսկողութեան տակ։ Բայց սակաւ առ սակաւ, ամենքն սկսեցին խոստովանել, որ դպրոցական պարապմունքների ժամանակ խուլ ու համրների առանձին խմբերի բաժանելն անհրաժեշտութիւն է։ Այդ սկզբունքը առաջին անգամ սկսեց գործադրել խուլ ու համրների ուսուցման մասին յայտնի մասնագէտ Շլեզվինգհուսի՝ խուլ ու համրների համար գոյութիւն ունեցող դպրոցի տեսուչ Ինգելկէն։ Նա աշակերտներին բաժանեց՝ համաձայն նոցա մտաւոր ընդունակութեան՝ երեք խմբերի, որոնցից առաջիններին նշանակեց A տառով, երկրորդը B տառով և երրորդը C տառով։ Ահա հէնց այս սկզբունքը պատճառ դարձաւ Վեներսբուրգի խուլ ու համրների դպրոցի հիմնարկութեան ծրագրի կազմելուն։

Փողոցի վերայ, հէնց ճանապարհի մօտ, գտնուում է մեծ և գեղեցիկ եռայարկ շինութիւն։ Այստեղ է լինում աշակերտների ընդունելութիւնը. այստեղ է և դասարանները, կացարանը, խոհանոցը և այլն։ Նորան կից շինուած է մի ոչ մեծ, բայց երկար շինութիւն, որի մէջ տեղաւորուած է տեղանատունը, հիւանդանոցը և այլն։ Սոցանից մի քիչ հեռու՝ զուգահեռական կերպով բարձրանում է դարձեալ մի եռայարկ շինութիւն, որտեղ են դասարանական սենեակները, մարմնամարզական սրահը և գործարանը։ Վերջապէս յիշեալ շինութիւններից 150 մետր հեռու, իւր շքեղութեամբ աչքի է ընկնում դարձեալ մի այլ եռայարկ տուն, որը մեծութեամբ և ներքին կազմութեամբ նման է ընդունելութեան դպրոցին։ Սա C անուանուած դպրոցն է։ Ընդունելութեան համար նշանակուած շինութիւնը նորեկների համար է, որտեղ ապրում և ստանում են տարրական կրթութիւն։ Ընդունելութիւնից մի քանի ժամանակ յետոյ նոցա բաժանում են խմբերի և իւրաքանչիւր խմբի հետ առանձին են պարապում։ Մէկ տարուց յետոյ ընդունակ երեխաներին տեղափոխում են բարձր դասարան, որը գտնուում է մի այլ շինութեան մէջ, այդտեղ դասընթացը վերջացնելուց յետոյ մտնում են քաղաքի կրթական տունը։ Անընդունակ երեխաներին տեղափոխում են ընդունելութեան դպրոցից C բաժինը։

Մանկավարժական ամենակարևոր հիմունքներն ստիպեցին, որ C ուսումնարանը հիմնուի բոլորովին առանձին և գտնուի միւս մնացած շինութիւններից բաւականին հեռու։ Ինչպէս յայտնի է, խուլ ու մունջերի մեծ մասին տալիս են և բանաւոր վարժութիւններ։ Շատերը հնարագրում են, որ այդ խօսակցական—բանաւոր եղանակը պէտք է յարմարեցնել բոլոր խուլ և համրների համար։ Ուրիշները համարում են այդ անհնարին՝ մանաւանդ սակաւ ընդունակների համար։ Այդպիսիների համար աւելի նախադասում են կրթութեան հասարակ ձևերը։ Վեներսբուրգի դպրոցի տեսուչ Պ. Նօրտին չկամենալով ինքն առաջին լուծումը տալ այդ ամենակարևոր, բայց դեռ ոչ հարկաւոր չափով պարզաբանուած հարցին, շինեց իւր դպրոցն այնպէս, որ նա կարողանայ պիտանացու լինել ապագայում, ինչպիսի լուծումն որ ստանայ այդ հարցը։ Այն դէպքում, երբ ապագայում անհրաժեշտ համարեն գործածել C դպրոցում գրաւոր մեթոդը, այրերեսնարաններով և կամ առանձին նշաններով, որտեղ աշակերտների մեծամասնութիւնը կկազմեն աւելի ընդունակ երեխաները, այդպիսի դէպքում պէտք է առանձնացնել նրանց միւսներից, որոնք սովորում են բանաւոր մեթոդով, որովհետև մանկավարժա-

կան տեսակէտից վերջինների համար միացեալ ուսուցումը կարող է վնասակար լինել։ Ահա այդ աչքի առաջ ունենալով, դպրոցի տեսուչը չինել տուեց C բաժինը բոլորովին առանձնակի միւս շինութիւններից, որպէս զի սանների ազատագոյ առանձնացումը հնարաւոր լինի, երբ դորա անհրաժեշտութիւնն զգացուի։ Ամբողջ հիմնարկութիւնը շինուած է Անգլօ—Գոթական ոճով, իսկ պատերն ամբողջապէս հատաքարից են։ Նա բաղկացած է 109 ընդարձակ սենեակներից, 4 լոհանոցից, չհաշուած ներքնատունը, որտեղ զետեղուած է բաղանիքը, լուացարանը, մառանը և այլն։ Իւրաքանչիւր յարկում գտնուում է 3 ոչ-մեծ ննջարան, իւրաքանչիւրը 10—12 մահճակալներով (նման ամերիկական համանման կրթական տների)։ Բոլոր շինութիւնները տաքանում են շոգիով և լուսաւորում են էլէքտրականութեամբ, միայն շինութեան համար յատկապէս ծախսուել է 520·000 կրօն (մօտաւորապէս 275·000 ր·)

Սկզբներում այդ հիմնարկութիւնը ցանկանում էին հաստատել նոյն շրջանում գտնուող Գէտերորդ մեծ քաղաքում, բայց Լանդստինգում այդ հարցը քննելիս, ձայների մեծամասնութիւնը ի նպաստ փոքր քաղաքի ձայն տուեց, աչքի առաջ ունենալով նորա բազմաթիւ առաւելութիւնները՝ ինչպէս տնտեսական, նոյնպէս և մանկավարժական և բարոյական տեսակէտները։

ՄԱՆՐԱԼՈՒՐ·

Հաւաքուածութիւնը միացեալ նահանգներում։ — 1893 թ· միաց· նահանգների բոլոր արծաթի հանքերն ի միասին տուին 72000031 դոլլարի եկամուտ, իսկ ոսկու հանքերը 46610000 դոլլար։ 1896 թ Ամերիկայի մէջ եղած բոլոր ոչխարներն արժէին 63,167,725 դոլլար, իսկ նոցանից գոյացած բուրդը տուեց 7,333,481 դոլլար։ Գալով հաւերին՝ 1896 թ· այդ երկրում կար 238,871,125 հաւ եւ 26738515 ուրիշ թռչուններ (սագ, բադ, հնդկահաւ եւլն)· իւրաքանչիւր հաւն եթէ հաշուելու լինենք 50 ցէնտ, իսկ միւս թռչուններից ամէն մէկը 75 ցէնտ, ինչպէս՝ եւ նոցա փետուրը, ձուն· աղբը եւլն· ապա այդ թռուլանի հաւերի տուած գումարը կընաւասարուի 290 միլիոն դոլլարի։

Ուրիշ խօսքով հաւերը միացեալ նահանգներում մի տարում յառաջ բերին մի գումար, որով կարելի էր գնել այդ տարուայ արտադրած բոլոր ոսկին եւ արծաթը· բոլոր ոչխարները եւ նոցա բուրդը, ինչպէս գարու, ցորենի, տաճարի եւ գետնախնձորի բոլոր արդիւնքը։ Նոյն գումարով կարելի կըլինէր գնել նոյն տարուայ բոլոր կաթնատու կովերը, որ արժէր 263,933,345 դոլլար։ 1894 թ·. հանքերի բոլոր արտադրութիւնները (ոսկի· արծաթ, երկաթ եւլն), հաւասար էր միայն 218,169,788 դոլլարի, որով հազիւ նոյն տարուայ հաւի ձուերը կարելի էր գնել։ Բոլոր նահանգների նահանգական եւ վիճակական արդիւնքն էր 445,186,007 դոլլար, որ շատ աւելի քիչ է հաւերի տուած եկամտից։

Հետեւեալ ցուցակը մի ամփոփ գաղափար կարող է տալ հաւաքուածութեան համեմատական կարեւորութեան մասին։

Հաւերի հասոյթը — 290,000,000· *կրթական ծախք* 478,215,536· *խոզերի արժէքը* — 186,529,745· *գետնախնձորի գինը* — 78,984,901· *ծխախոտի գինը* — 75,374,220· *բամբակի գինը* - 339,164,640· *ցորենի գինը* — 237,338,998· *վարսակի գինը* — 165,655,088։

*
* *

4400 տարուայ հաց։ — *Վերջին ժամանակներս, Բեռլինի գեղարուեստական ճեմարանում ուսուցչապետ Վիտտմարկը ի ցոյց էր դրել մի այդպիսի հաց։ Դա՝ եգիպտական հացի մի կտոր է, թխուած ցորենի կոշտ ալիւրից։ Ամեակի միջոցով հացի գոյնը տալուց յետոյ կարելի էր նկատել նորա վերայ ցորնի թեփը· այդ հացի մի կտորը օսլայի վրայ զգալի հակազդութիւն առաջ բերեց, իսկ երբ այդ փորձի արդիւնքի վրայ մի քանի կաթիլ կաշիոնի— մանշուկի մշաթիմոց աւելացրին՝ կապտաւուն գոյն ստացաւ։ Դժբաղտաբար* Prometheus *ամսագիրը տեղեկութիւն չէ հաղորդում թէ որտեղ եւ ի՞նչ հանգամանքների մէջ է գտնուել այդ հազուագիւտ, արշիծեր հացը։*

*
* *

Մուրացկանների լրագիր։ — *Պարիսում մի լրագիր է հրատարակուում յատկապէս մուրացկանների համար։ Լրագիրն ամենօրեայ է եւ լոյս է տեսնում առաւօտները մի փոքր թերթի չափով եւ պարունակում է ճիշդ ցուցակ այն բոլոր կրօնական արարողութեանց, նշանաւորութեանց, հարսանիքների, կնունքների, թաղմանց եւայլն, որ օրուան ընթացքում տեղի պիտի ունենան։ Երկրորդ սիւնեակում լինում են աւելի կամ պակաս յայտնի քարեգործ տղամարդկանց եւ կանանց հասցէները, ուր որոշուած է եւ ժամը, երբ նոցա տանը գտնել կարելի է։ Այնուհետեւ մանր զրոյցներ են լինում աղքատների կեանքից, նոյնպէս եւ ամեն տեսակ խրատներ։*

— Եւրոպական պետութեանց մէջ 1000 բնակչից ժողովրդական դպրոց յաճախող աշակերտների թիւն է Զուիցերիայում 167, Շուէդիայում 160, Գերմանիայում 158, Մեծ Բրիտանիայում 155, Նորվեգայում 150, Փրանսիայում 146, Նիդերլանդիայում 145, Աւստրօ—Հունգարիայում 130, Բելգիայում 110, Սպանիայում 105, Դանեմարկայում 100, Իտալիայում 89, Բունաստանում 62, Բուլգարիայում 52, Պօրտուգալիայում 50, Ռումանիայում 44, Սերբիայում 35, Ռուսաստանում 24։

Նորակոչ 1000 զինուորից անգրագէտ էին Շուէդիայում 4, Գերմանիայում 2, Դանեմարկայում 5, Զուիցերիայում 22, Նիդերլանդիայում 50, Փրանսիայում 55, Բելգիայում 144, Աւստրօ—Հունգարիայում 220, Բունաստանում 500, Իտալիայում 590, Ռուսաստանում 708 եւ Սերբիայում 795։

*
* *

Կօպենհագէնում եւ Ստոքհօլմում կան առանձին ընկերութիւններ, որոնք մատակարարում են քնակիչներին առողջարար եւ մաքուր կաթ։

Ագարակների վրայ հսկում են անասնաբուժեր· նոքա իւրաքանչիւր օր նայում են ամեն մի կովի ստինքը եւ քննում կուրծքը։ 1893 թուին Կօպենհագէնում 5000—6000 կովերի մէջ գտնուել է 422 հատ թոքախտով հիւանդ կով։ Հիւանդ կովի կաթը չէ ծախուում։ Երբ յայտնուում է մի որ եւ է վարակիչ հիւանդութիւն ագարակներում ապրող կամ ծառայող մարդկանց մէջ, այդ դէպքում կաթը նոյնպէս չէ վաճառուում։ Գործը աւելի եւս խրախուսելու համար այդպի-

սի ղէպքերում ախերներին տրուում է պարգեւներ: Կթելու ժամանակ պահպանուում է վերին աստիճանի մաքրութիւն: Կթելուն պէս կաթը դրուում է սառուցի մէջ եւ այդ ձեւով էլ տարուում է ընկերութեան գրասենեակը: Իսկ այդտեղ վերջնում են կաթից եւ քննութեան ենթարկում: Ճետոյ կաթը քամում են աւազից շինած զտոցով (filtre), որի ստորին շերտը ծածկուած է ոսպաչափ աւազի հատիկներով, իսկ վերի շերտը քննում է աւելի մանր աւազ:

Ճարմարեցրած գործիքների միջոցով քամելը կատարուում է ցածից վերեւ: Դորանից յայտնուում է, որ կաթը պարունակում է մեծ քանակութեամբ կեղտ: Ճետոյ կաթը ածում են մի լիտրանոց շիշերի մէջ, որոնք նախապէս սոդայով լուացուում եւ ախտահանուում են տոսող գոլորշիով: Շիշերի լուանալը կատարուում է մեքենաներով՝ պտտուող խոզանակների միջոցով: Բացի ընկերութեան գրասենեակում քննելուց, կաթը քննուում է նաեւ պրօֆեսօր Բօհրը (Bohr), որի զեկուցումները տպուում են ամենայն ամիս:

Ստօքհօլմում ընկերութիւնը վաճառում է իւր եւ ուրիշների կաթը· երկու գոմում գտնուում են 330 կով: Կովանոցների պատերը եւ յատակը շինած են ցեմենտից· դոյսը թափանցում է մեծ քանակութեամբ, իսկ օդափոխութիւնն շատ լաւ է: Միակ անյարմարութիւնն այն է, որ համարեա թէ ամբողջ տարին կովերը դուրս չեն գալիս գոմերից: Նաթը քամում են բարակ, թափանցիկ շղարշով եւ անցնում պղնձէ մաղի միջով· ապա գնում են սառուցի մէջ: Կովերին նոյնպէս քննում է անասնաբուժը եւ հիւանդներին բաժանում առողջներից: Պահուում են միայն չհանել կովերը, իսկ 2—5 ծնունդից յետոյ վաճառուում են: (The Lancet 1894 թ.)·

Թէ դիահերով որչափ ապահանուած են մեծ քաղաքների գետերը, երեւում է հետեւեալ տեղեկութիւններից: 1893 թ· Սենա գետից հանել են զանազան դիակներ՝ 5632 շուն, 5307 կատու, 9108 մեծ մկներ, 4720 հաւ եւ փասեան, 3942 զանազան թռչուններ, 4209 ճագար, 789 խոզ, 7 ոչխար, 4 ոզնի· 55 ծի, 45 ոչխար, 2 մորուկ ծիու, 45 կապիկ եւ 6 օձ, իսկ ընդամենը 28,807 դիակ՝ չհաշուելով իհարկէ մարդկանց դիակները: (La médecine modern)·

Ա Զ Գ Ա Յ Ի Ն·

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՌՉԸ.

Եկայք շինեցուք սուրբ վիճակին Լուսոյ:
Ճարական·

Մեր բազդի անիւը այսօր մի տարօրինակ շրջան է կատարում: Սիզ թուում է, թէ մի կործանիչ ոյժ իւր զօրութեան ապդեցութիւնն է տարածում մեր բովանդակ կեանքի ամէն մի շրջանի վերայ, եւ թէ մենք աւրինով ներկուած վերջալոյսի ականատես մի սերունդ ենք, որ արեւի վերջին ճառագայթների հետ՝ պէտք է մայր մանեն եւ մեր յուսոյ վերջին նշոյլները:

Բայց ահա մեր ականջին հնչում է, սրբազան երգչի խօսքերը· «Ջ միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» եւ մեր միաքը սլանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նուիրական տողերը: Մեր հոգու առաջ կենդանանում է, Հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր զորութեամբ եւ հետեւանքներով: Նա անձնազոհ մի արձան կանգնեց աւելի տեւական եւ աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը· բայց եւ այդ անձնազոհ արձանի յայտարար հիմնից այն անշուք շինքը, որը սակայն Հայի վերածնութեան աւազանն է, եղել գարէ ի գար: Դարեր են եկել, գարեր անցել, բայց նա հաստատուն խարիսխ է, մնացել մեր գոյութեան համար: Նա իրրեւ կենդանի վկայ՝ ականատես է եղել իւր որդոց դէմին հասած անդուր ապէտներին եւ իրրեւ դիտատես մայր մխիթարութեան եւ սփոփանքի ապրիլներ է հասցրել նոցա սրտի մէջ: Եատ անդիմութիւններ եւ աւերումներ է տեսել նա, բայց ամէն անգամ էլ վերակենդանութեան յոյս ներշնչել յուսահատ սրտերի մէջ: Այսօր եւս, երբ մեր մաքի առաջ պատառ պատկերները հազարաւոր Հայերի յօշոտուած դիակներն են, երբ մերկ, սովալուկ որբերն ու այրիները, կանայք եւ աղամարդիկ հեռու իրենց սրբազան երկրից՝ օտարի, աւելի լաւ ասած, մահուան դռներն են բազխում եւ երբ հայրենիքի եւ եկեղեցու փլատակների փոշին ամէն կողմից վեր է բարձրանում՝ սրբազան երգչի խօսքերը յիշեցնում են մեզ, որ դեռ եւս ամէն ինչ կորած չէ, թէ դեռ եւս կանգուն է Հայութեան «Լուսոյ Ճոճան», Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Քաղցր եւ նուիրական անուն:

Ե՞րբ է եղել Հայի օրը այնպէս սեւ, ինչպէս այժմ: Ե՞րբ է եղել նորա ապագան աւելի մռայլ եւ յուսահատ, քան այժմ: Բայց այսօր եւս Մայր տաճարի սրբազան կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը· «եկայք շինեսցուք սուրբ վիճակն Լուսոյ»: Ինչպէս

խորհրդաւոր է հնչում այդ կոչը, երբ հոգևոր և բարոյական աւերակները մէկ մէկու տեղ են տալիս։

Սրբազան երգիչը հիմնուելով Լուսաւորչի տեսիլքի վերայ՝ այս հաստատութիւնը «Լուսոյ Ճոպան» է անուանում։ Դարանով ուրոշուած է և նորա կոչումը։ Նա հիմնուած էր հոգևոր դաստիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բղխէին աւետարանի լուսոյ ճառագայթները Հայութեան սրտի խորքերը լուսաւորելու։ Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մնացել այդ կոչման։ Եկեղեցին հայութեան հոգևոր քաղաքակրթութեան լուսաւորութեան փարոսն է եղել միշտ։ Հայի հոգևոր և մտաւոր շարժման արդիւնքները համարեա առանց բացառութեան Լուսոյ Ճոպանի ազդիւրներից են բղխել։ Դիր, մատենագրութիւն, սրբազան արուեստ, հոգևոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բաղդ ունինք։ Նա մեր հոգևոր վերածնութեան որօրանն է եղել, երբ խաւարն ու մահը մեզ կլանել են սպառնացել։

Այսօր էս, երբ Լուսաւորչի հոգին մեր եկեղեցու աւերակների փլատից վերաշինութեան հրաւէր է կարդում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգևոր վերածնութեան ճանապարհը։ Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է։ Փրկչի խօսքը՝ «եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» կարելի է և ազգերին ուղղել։ Կրօնն է, ճշմարիտ կեանքի ազդիւրը* ուրիմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ։ Մեր ներկայ կեանքը լի է վէրքերով։ Մեր կեանքը լի է հիւանդ երևոյթներով, որոնք իրենց կողմից ամենածանր հետևանքներ են յառաջ բերում։ Հոգևոր են այդ վէրքերը, հոգևոր զէնքերով էլ պէտք է դոքա ապաքինուին։

Մենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ ուսած և մեղ զէնք է պէտք, ոչ մեռաղից, այլ Աստուծոյ հոգւով կռած։ Նա աւելի սուր է և կտրուկ, քան երկաթն ու պողպատը։ Ժամանակը ծանր է, և լուրջ, իսկ մենք թեթև ենք և անհեռատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում և գործ, իսկ մենք օգտին ամրոցներ ենք կառուցանում և բառեր արտասանում։ Մեր անկեղծ համոզմամբ ճշմարիտ վերակենդանութեան ազբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել։ Մեր եկեղեցին պէտք է աւելի բարոյական ոյժ, կենսատու զօրութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում։

Արդ Մայր Աթոռն է, այն կեդրոնը, որտեղից հայութեան համար հոգևոր, կրօնական կեանքի մի նոր հոսանք պիտի սկսուի։ «Օրէնք ի Սիոնէ ելցէ»։ Այստեղ է, հաստատուած Լուսաւորչի՝ Հայաստանեայց վերածընութեան հօր՝ սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հովուել։ Այստեղ էս պէտք է նորա հոգին, որ Հայի վերածընութեան սկզբնաւորութեան առիթն է եղել, միշտ կենդանի և միշտ գործունեայ մնայ։ Նոյն հոգին և այսօր սրբազան երգչի բերանով Մայր Աթոռի միաբանութեանն է ուղղում իւր հրաւէրը։ «Սկայք շինեսցուք սուրբ գՀոսաննան Լուսոյ»։

Գարեգին Սարկաւագ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ամսոյս 9-ին, 10-ին և 12-ին հանդիսաւոր կերպով կատարուեցան ս. Հռիփսիմեի, ս. Գայիանէի և Շողակաթի վանքերի տօնները։ Առաջին երկու տօներին ս. պատարագին ներկայ գտնուեցաւ Ազգիս Վեհափառ Հայրապետը։

Շաբաթ, ամսոյս 14-ին ս. Գրիգոր Լուսաւորչի երի ի վիրապէն տօնը կատարուեցաւ Մայր տաճարում հանդիսաւոր կերպով։ Այդ օրը ս. պատարագ մատոյց գեր. Տ. Ներսէս արքեպիսկոպոսը Իջման սեղանի վերայ։

---

* Տես կրօնական բաժնի առաջնորդողը՝ „Կրօնի կենսատու զօրութիւնը“։

Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին, Մայր Տաճարում, պատարագից յետոյ կատարուեցաւ մաղթանք Նորին Կայսերական Մեծութեանց երկրորդ դաեր՝ Տատիանա Նիկոլաևնայի Ծննդեան և անուանակոչութեան առթիւ, որ տեղի ունեցաւ մայիսի 29-ին, իսկ ակրտութիւնը յունիսի 8-ին։

Կիրակի, ամսոյս 15-ին, ս. Էջմիածնայ տօնը կատարուեցաւ փառաւոր հանդիսով և խուռն բազմութեան ներկայութեամբ, որոնք եկած էին թէ Երևանից և թէ շրջակայ տեղերից։

Նախընթաց երեկոյեան Նորին Վեհափառութիւնը եկեղեցական թափօրով էջաւ Մայր Տաճարը։

Միւս օրը ս. պատարագից առաջ եկեղեցի էջաւ Վեհափառ Հայրապետը, ուր միաբանութեան և ճեմարանի տեսչի, ուսուցչայ և աշակերտների ներկայութեամբ Հայրապետական մաղթանք կատարուեցաւ։ Պատարագը մատուցեց Իջման տեղապահ, վերապատարագիչն էր Գեր. Տ. Երեմիա արքեպիսկոպոսը։

Պատարագից յետոյ միաբանական տեղապահը ճաշ էր պատրաստած բազմաթիւ հրաւիրեալների համար, որի ժամանակ Գեր. Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը մի բանախօսութեամբ բացատրեց օրուայ տօնի նշանակութիւնը, մաղթելով Հայաստանեայց Մայր Աթոռին հաստատութիւն և նորա Մեծ Դահակալ Տ. Տ. Մկրտիչ Կաթուղիկոսին երկայն կեանք և բարօրութիւն։

Օրը պայծառ էր և հրաշալի և նպաստում էր հանդիսի շքեղութեան. դուրս հետ ներդաշնակ էր և փառաւոր լուսաւորութիւնը, որով փայլում էին Մայր տաճարի կաթուղիկէն, գաւիթն ու ճեմարանը։ Ուխտաւորների հոծ բազմութիւնն երկար ժամանակ պտտնում էին տաճարի և ճեմարանի գաւթում, մինչև վեհարանի առաջ երգում էր ճեմարանի խումբը և նուագում էր ուխտաւորների երաժշտութիւնը։

Ագուլիսի ս. Թովմայի վանքում տեղւոյն վանահայր Գեր. Գրիգոր եպիսկոպոս Ազափիլեանը վեհ. Հայրապետի հրամանով կուսակրօն քահանայութեան աստիճան տուեց ճեմարանի նախկին սան Նիկողայոս Տէր Աւետիքեանցին։ Նորընծայ Նիկողայոս արեղան ուղարկուեցաւ Տաթեւի վանքը իբրև միաբանակցութիւն։

Մայր Աթոռից մեկնեցան Իրանց պաշտօնատեղիը՝

Բարեշնորհ Թադէոս վարդապետը Ջուղա՝ ս. Սարգսի վանահօր և Մայր Աթոռի կալուածոց կառավարչի պաշտօնով, և բարեշն. Գրիգոր վարդապետը Քիշնև՝ տեղւոյն կոնսիստորիայի անդամութեան պաշտօնով։

Վերադարձան ս. Էջմիածին՝

Տփղիսից՝ բարեշն. Համազասպ վարդապետը և Շուշուց՝ բարեշն. Մեսրոպ վարդապետը։

Ամսոյս 11-ին Մայր Աթոռս եկաւ Ցովնանեան—Մարիամեան օրիորդական դպրոցի Տեսուչ պ. Փիլիպպոս Վարդանեանը Վեհափառ Հայրապետին ներկայանալու և ամսոյս 16-ին վերադարձաւ Տփղիս։

Գ. ՃԵՄԱՐԱՆ։

Մայր Աթոռոյս ճեմարանում տարեկան քննութիւնները վերջացան անցեալ մայիս 31-ին և վ. հ. Հայրապետի օրհնութեամբ երրորդ կարգի վկայական դասընթացն աւարտելին հետևեալ ինն ուսանողները։

Անդրէասեան Սարգիս Մշեցի (Տաճկ.)
Գևանջեցեան Աստուածատուր Շուշեցի.
Նգանեան Յարութիւն Աչաջուրցի (Ղազախ).
Թաւարդէգեան Վահան Սողոկցի.
Թօփճեան Յակովբ Այնթապցի (Սիւրիա).
Ոսկեան Սարգիս Տփղիսեցի.
Շահնազարեան Ասլան Հիւքիւրթաղցի (Շուշի).
Ղազար սարկաւագ Սմբատեան Տաւուշեցի (Ղազախ).
Սմբատ սարկաւագ Տէր Աւետիսեան Բարանեցի (Լոռի).

Ամսոյս 16-ին, երկուշաբթի առաւօտ, Մայր Աթոռոյս Հոգևոր Ճեմարանի երրորդ լսարանն աւարտող ինն ուսանողների նախաձեռնութեամբ (որոնցից երկուսը կուսակրօն սարկաւագներ) Մայր Տաճարում մատուցուեցաւ ս. պատարագ ի յիշատակ Հանգուցեալ Ճեմարանի հիմնադիր Տ. Դէորգ Դ. կաթուղիկոսի, իսկ այնուհետև Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հանգուցեալի գերեզմանի վերայ: Հոգեհանգստի ժամանակ աւարտողներից մէկը՝ Ասլան Շահնազարեանը աւարտող խմբի կողմից մի ճառ խօսեց, որով օրհնելով Հանգուցեալի յիշատակը յայտնեց իրանց երախտագիտութիւնը դէպի Մայր Աթոռը և Նորա արժանաբնակիր գահակալ՝ ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտիչ կաթուղիկոսը:

Ճեմարանի Տեսչի օգնական բարեշնորհ Կարապետ վարդապետը եռամսեայ արձակուրդ առանալով՝ ուղևորուեցաւ Ռուսաստանի հայաբնակ քաղաքները իբր մասնագիտութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով:

ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ.

«Արարատի» ընթերցողներին յայտնի է, որ Աղգիս Վեհափառ Հայրապետը դիտաւորութիւն ունենալով Մայր Աթոռոյս Տպարանից լոյս ընծայել Աստուածաշունչ ս. Գիրքը, անցեալ 1896 թուին արտասահման ուղարկեց Տփղիսի վանուց մայր եկեղեցու Տ. Գիւտ քահանայ Ազանեանցին տպարանի համար նորագոյն կատարելագործուած մեքենաներ և պարագաներ գնելու: Այդ բոլոր մեքենաները արդէն ստացուել են Էջմիածնում և սարքուում են. կարճ ժամանակից յետոյ այդ ամենը պատրաստ կլինի և տպարանի բոլոր մեքենաները կըրանեն շոգիով: Այդ նպատակով՝ Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ Տփղիսից ս. Էջմիածին եկաւ արժ. Գիւտ քահ. Ազանեանցը:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Արարատի բաժանորդներին այս համարի հետ ձրիաբար ուղարկուում է Ժանտախտ գրքոյկը, աշխատասիրութիւն բժիշկ Վահան Արծրունու:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ.

Արժանապատիւ Գիւտ քահանայ Ազանեանցը մի յայտարարութեամբ յայտնել է Վեհ. Հայրապետին, որ իբր ունեցած բոլոր պատմական նիւթերը հրատարակելուց յետոյ պարտաւորուում է հետզհետէ ուղարկել նուէր Մայր Աթոռի Մատենադարանին և արդէն ուղարկել է երկու դրչագիր մատեան «Սիմէօն կաթուղիկոսի կենսագրութիւնը» և «Ծուցակ յայտնութեան երից պլեաւոր գործոց»:

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.

Սրածութիւններից, նախճիրներից և արեան բաղանիներից յետոյ Հայաստան որբևայրի մնաց և այսօր Տաճկահայաստան լի է որբերի անթիւ բազմութեամբ, որ անտէր անտիրական են մնացել: Սոցա թիւը հասնում է մինչև 50000 հազարի, եթէ ոչ աւելի: Ցայտնի են այն ջանքերը, որ լինում են օտարների կողմից Հայ որբերի մասին, որոնցից շատերն հասել են մինչև Եւրոպա. սակայն ամենամեծ ջանքեր են կատարուում բուն երկրում սոցա խնամելու: Օտարի խնամքին կարօտ որբերը հայութիւնից հեռանալու վտանգի են ենթարկուած, թէպէտև շատերն օտարներից այդպիսի ձգտումն չունին: Ուստի շատ ուրախալի է տեսնել, թէ Տաճկահայոց ազգային կենտրոնական վարչութիւնը իւր պատրիարքով մեծ ճիգեր է թափում այդ որբերին ազգային հաստատութեանց մէջ տեղաւորելու և նոր որբանոցներ հիմնելու: Ամեն մի Հայ պիտի մխիթարուի լսելով և կարդալով այս մասին եղած ջանքերը:

«Մասիս» (13 մայիսի) հաղորդում է. Որբերի խնամատարութիւնն իւր վերջին նիստի մէջ հաշիւ անելով եկել է այն եզրակացութեան թէ Ամեն. Տ. Պատրիարքին ուղարկուելիք նպաստներով կարելի կլինի Վանայ, Տիարպէքիրի, Ուրֆայի, Խարբերդի և Էրզրումի վանքերի մէջ որբանոցներ բանալ: Որբանոցները պիտի պահուեն վանքերի հասոյթներով և ստացուած նուէրներով:

Ուրախալի է, որ մեր վանքերն այսօր առաւել քան երբէք կոչուած են իրենց նշանակութեան, բառիս լայն և ընդարձակ իմաստով, ծառայելու: Սակայն կարիքն այնքան շատ է, որ անհրաժեշտ են երկրի բոլոր ուժերը լարել այդ նպատակի համար: Ուստի գովելի են այն հասարակութեանց, գիւղերի, քաղաքների և մասնաւոր անձանց ջանքերը, որոնք այս տառապալի ժամանակ ձեռք են մեկնում Հայի վիշտն ամոքելու:

Բուլղարիոնի մէջ կարդում ենք, որ Նիկոմիդիոյ առաջնորդ Սահակեան եպիսկ. Յովակիմեանը գրով դիմել է Կեդ. Ազգ. Վարչութեան, յայտա-

բարելով թէ պատրաստ է 500—1000 որբ տեղաւորել իւր հոգևոր ինամքին յանձնուած թեմերի մէջ։

— Իզմիրի մէջ հաստատուած Ներսիսեան որբանոցների համար 30 որբ են ուղարկելու Մարաշից, որոնք շուտով ճանապարհ կընկնեն։

— Որբոց խնամակալութիւնն ի նկատի ունի Սերաստեան ևս ընտրել յարմարագոյն կենտրոն որբերի ինամածութեան համար, ուր վաղուց ի վեր որբանոցամ մի ընկերութիւն կայ, իսկ քաղաքի մօտ գտնուած Ս. Նշանի վանքն, որ համեմատաբար կոկիկ վիճակ ունի, կարող է յարմարուել մի կենտրոնական որբանոցի շրջակայ գաւառների համար։

— Ս. Պատրիարքը գրել է Արաբկիրի քահանայական դասին և գաւառական վարչութեան, որ փափագում է այնտեղ մի որբանոց հաստատել և պատուիրեց, որ միջոցների և յարմարութեանց մասին իրեն տեղեկագրեն։ Ա յստեղ արդէն մի որբանոց բացուել է Խարբերդից եկած հրահանգի համաձայն, բայց գտնուում է բողոքականների ինամքի տակ, միայն թէ չեն յարգուում Ս. Պատրիարգի շրջաբերականի պայմանները, որ տրամագրում էր Հայ որբերին թոյլ տալ իրենց Ազգ. լեզուի հետ սորվելու իրենց մայրենի եկեղեցու գաւանանքը և վայելելու կրօնական պաշտամունքները։ Այս գործառնութեան են վիճակուել բոլ մասին և Մր. Զէմպըրսի որբանոցի Հայ մանուկները Կարնոյ մէջ։ Ս. Պատրիարքի հրամանով բոլոր վիճակներից 350 անոք և անպաշտպան որբեր պիտի բերուին Պոլիս, որոնք Պատրիարքարանի հովանաւորութեան ներքոյ պիտի կրթուին, արհեստ սորվորեն և կամ որդեգիր տրուին։

Որբերի մասին ամենից վերջին որոշումն այս է, որ իւրաքանչիւր առաջնորդական վիճակ իւր որբանոցը պիտի ունենայ, որոնք մասամբ ևս Պատրիարքարանից տրուած նպաստով պիտի պահպանուին։—Անգլիարնակ մի քանի բարեսէր ազգայիններ 180 ոսկու մի գումար են ուղարկել։

Երզրումի Կարմիր վանքի մէջ արդէն մի որբանոց է բացուել, որին տարեկան 60 ոսկի պիտի կենդրոնից նպաստ տրուի։ Իւր այս կարգադրութիւններով Պատրիարքարանը տարեկան 700—750 ոսկի վճարելու յանձն է առած, որի յոյսն անշուշտ Հայ ժողովրդի կարող մասի վրայ է։ Ա յս տարաբախտ վիճակին օգնելու փոյթն ու եռանդը մեծ է։ «Բիւզանդիոն»ի թղթակիցներից մինը մինչև իսկ առաջարկում է ազգային subscription նշանակել որ 2—3 տարի հաւաքուի որբերի ինամածութեան համար, ճիշդ այնպէս, ի հարկ է, ինչպէս որ Երուսաղէմի Ս. Յակոբեայ վանքի համար եղաւ Յարութիւն Պատրիարքի ժամանակ։ Սակայն պէտք է յիշել հենց այդ գէպքի առիթով ու հետևանքները, և այն ժամանակ կիմացուի որ այդտեղակ մի միջոց կը գտնայ օսմանեան գաղանների ձեռքը մի այլ կէնք, որով կըշարունակեն հայի արդեանց վերջին կաթիլն անգամ արեան հետ ծծելու։

ՍՈՎԻ ՎՏԱՆԳ. —Ա հովի կոտորածներից յետոյ մշակող ձեռքերը պակասել են, գաշտերը խոպանացել և դրսից եկած օգնութիւնը չէ բաւականացնում, մանաւանդ որ արդէն մի քանի տեղեր միսիոնարները կամ արդէն կտրել են իրենց նպաստները կամ կտրելու վրայ են։ Ընայելով մի քանի տեղերից հասած նպաստաւոր լուրերին այս տարուայ ցանքի ու բերքի մասին, Մասիս և Բիւզանդիոն լրագրների հաղորդածներից երևում է, որ սովի վտանգ կայ Վանայ ծովի շրջակայքում, այսպէս Վասպուրականի գիւղերում, Բաղէշում և Մուշում։

«Բիւզանդիոնում» կարդում ենք (17 մայիս), որ Բաղէշի Սրբն և քաղաք. ժողովները չկարողանալով գոհացում տալ հաց խնդրելու համար դիմող կարօտեալներին, ստիպուած կլինին առաջնորդարանի դռները փակել և հեռանալ. սակայն Ս. Պատրիարքը կարևոր կարգադրութիւն է արել օգնութիւն ուղարկելու համար և յանձնարարել է յիշեալ ժողովներին, որ չվտահեն և աշխատեն որ առաջնորդարան դիմողներն անմխիթար ետ չդառնան։

—Նոյն լրագիրը հաղորդում է, որ Մշոյ գաշտում տեղ տեղ սովամահ վիճակ է տիրում և Կինճ գաւառակի մէջ 3 փոքրիկ աղջիկներ են մեռել։ Ս. Պատրիարքը հեռագրեց Մշոյ առաջնորդարանին, որ անմիջական օգնութեան համար մի գումար է ուղարկում, որի բաշխումը մասնակցութեամբ առաջնորդարանի խառն հսկողութեան տակ պիտի կատարուի, ուստի պէտք է անմիջապէս հոգ տանել ամենից աւելի կարօտեալներին օգնելու։

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — Յայտնի է թէ ինչպէս տարիներով առաջ Թուրք պետութիւնը նեղում և հալածում էր Ցածկահայաստանում կրթեալ գանազան կարգը, մանաւանդ ուսուցիչներին։ Ա հովի կոտորածին զոհ գնացին շատերը սոցանից քահանաների հետ ի միասին, թէ այս, և թէ բնակիչների կոտորածի և երկրի աւերման պատճառով Հայոց դպրոցները փակուեցան։ Ժողովրդի զանազան պատճառով նուազեց արդիւնքը «Միացեալ Ընկերութեան», որ կոչուած է խաւար անկիւններում դպրոց բանալու։ Ընայելով այս պարագաներին՝ ազգատացած և թշուառացած Հայ ժողովուրդը իւր այս օրհասական ժամին չէ մոռանում իւր որդւոց կրթութեան գործը։

Կ. Պոլսում առանձին մասնաժողով է կազմուել, որ հայթայթում է գաւառների աշակերտների գրական պիտոյքները։

Ուսումնարանական խորհուրդն ևս որոշել է ա) Մշոյ, Երզնկայի և Կիպրոսի ազգատիկ դպրոցների համար դասագրքեր հայթայթել և շուտափոյթ հասցնել, բ) Հետագիտութեան ուսումը օրիորդաց դպրոցների համար պարտաւորիչ անելը քննել. գ) Ուս. Խորհուրդը նկատելով որ Կ. Պոլսի գրեթէ բոլոր Ազգ. վարժարանների մէջ հայ լեզուի աւանդման համար ինամք չի տարուում, յանձնից իւր անդամներից Յակովբ Դուրգէնին յատկապէս այցելել բոլոր Ազգային վարժարանները և հայ լեզուի ուսուցման մասին ի մօտոյ քննութիւն կատարել, հրահանգներ տալ և պարբերական այցելութեամբ հսկել այդ հրահանգների ճշդիւ գործադրութեան ըստ պահանջման կազմական կանոնագրոյն։

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԻՆԴԻՄՆԵՐ. — Քաղաքական ժողովը Գալաթիոյ խորհրդարանի մէջ նիստ անելով նախագահութեամբ Ամէն. Ս. Պատրիարքի և փոխ. մեծապատութեամբ պ. Տիգրան Եուսուֆեանի հետևեալ որոշումներն արաւ.

— Ընդհանուր պօլսի նորընտիր առաջնորդ Գեր. Համայեակ եպիսկ. Թիմաքեանի հրաժարականը ան-

ընդունելի դատելով, յանձնեց սրբազան Նախագահին գժուարութիւնները բառնալու գործը։

— Պրուսայի նորընտիր առաջնորդ Արժ. Տովհաննէս Ծ. Վ. Արշարունու պաշտօնը վաւերացնելով՝ պէտք եղած հրահանգները տուաւ ժամ առաջ իւր պաշտօնատեղին ուղևորուելու համար։

— Որոշեց Սերաստիոյ ծերունազարդ առաջնորդ Գեր. Պետրոս եպիսկ. Թահմիզեանին յանձնել Թօքատի թեմը առ ժամանակ հովուելու պաշտօնը։

Խառն ժողովը որոշել է նկատողութեան չառնել Բարգուդիմէոս եպ. Ջամչեանի և Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեանի հրաժարականները Եգիպտոսի առաջնորդութեան պաշտօնին ընտրուելուց։

ՓԱՀԱՆԱՆԵՐ. — Ցաւէրժ անմոռանալի կը մնայ կոտորածների պատմութեան մէջ շատ քաջարի քահանաների գործերը, որոնք գառն ժամանակներում իւրեանց ժողովուրդը հովուում էին, մխիթարում և նոցա հետ, նոցա համար նահատակուում։ Այսպէս էին ամեն գաւառացիք, որոնց Պօլսեցիք և այլք ծաղրելով խրմբրլ են անուանում, մինչդեռ քաղաքներում լուսաւորուած քահանաներն արդէն սկսել են մեր քահանայական դասում չտեսնուած անկարգութիւններ և զեղծումներ անել, որով չար օրինակ են գառնում ժողովրդեան և գայթակղութիւն պատճառում իւրեանց հօտին։

Դեռ նոր էր, որ Բուլղարիոյ հայ քահանաներից մինը Թողց իւր կարգը և մտաւ աշխարհականների դասը, որովհետև Ամեն. Հայոց Հայրապետը չբարեհաճեցաւ նորան Թոյլ տալ երկրորդ անգամ ամուսնանալու։ Այժմ էլ՝ ինչպէս կարդում ենք «Մասիս» լրագրի մայիսի 14-ի համարում՝ Ազգ. Կրօնական ժողովը Ռօդոսթոյի առաջնորդական տեղապահի գրութիւններից տեղեկանալով թէ՝ Թէոդորոս անունով մի քահանայ աշխարհական ժամանակ երկու անգամ ամուսնացած և յետոյ քահանայ ձեռնադրուած է և երկար ատ անգ թափառելուց յետոյ Ռօդոսթոյում Ստեփան անունով մի կառապանի գաղտագողի պսակել է նորա մի մերձաւոր ազգականի աղջկայ հետ, որ կրօնական ժողովն ու Ազգ. Պատրիարքարանն արգելած էր, և անյայտացել, մանրամասն տեղեկութիւն պահանջեց յիշեալ էքահանայի մասին և պսակն անվաւեր համարեց։

— Ցակովբ անունով մի քահանայ իւր առաջին ամուսնու մահուանից յետոյ, քահանայութիւնը Թողնելով երկրորդ անգամ ամուսնացել էր։ Այս երկրորդի մահուանից յետոյ վերոյիշեալ աշխարհականացեալ քահանան անցեալ տարի Կրօն. Ժողովին էր դիմել, որ իրեն հրաման տրուի վերըստին քահանայական պաշտօնը կատարելու։ Ժողովը որոշել էր, որ յիշեալ անձն այլևս բնաւ քահանայ չճանաչուի, նաև ոչ միայն եկեղեցում, այլ վարժարաններում՝ իրաւունք չունենայ պաշտօն վարելու։ Սոյն քահանան այս տարի ևս կրկնեց իւր խնդիրը, սակայն այս ժողովը հաստատուն մնաց նախորդի որոշմանն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ։

ՋՐԱԼՈՒԾՔ Ի ԿՈՆՏԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնտակ Հաստատութեան Հոգաբարձութեան Եկեղ.—Ծխ. ուսումնարանաց Աստրախանի. Թ. 375։

— *Ցանուն Տ. Յովէն Եպիսկոպոսի Սահմանէ, որով կարգի նա վանահայր Ս. Յակ վանուց Ղրիմու. Թ. 377։*

— *Ցանուն Տ. Կոստանդին քահանայի Կոստանեան Ալէքսանդրապօլու, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական. Թ. 384։*

— *Ցանուն Տ. Մաշթոց վարդապետի, որով կարգի հովիւ ի վերայ ժողովրդոց բնակելոց Յուսար քաղաքի ՅԱմերիկա. Թ. 385։*

— *Ցանուն Տ. Վաղինակ վարդապետի, որով կարգի հովիւ ի վերայ ժողովրդոց բնակելոց ի Պրովիդանս քաղաքի ՅԱմերիկա. Թ. 386։*

— *Ցանուն Սալոմէի Աւետիքեան, որով յայտնի զտաց ժանէ ի ձեռն կանխատրիաւին Տփղեաց մի հազար ռուբլեաց ի պէտս աստուածահաճոյ գործոց, զոր կատարել է հանգուցեալ Տ. Կատարինէ Տ. Մ՚ոլսխեան. Թ. 432։*

— *Ցանուն Տ. Պետրոս քահանայի Մ՚ատնիշեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական. Թ. 464։*

— *Ցանուն Տ. Յովհաննէս վարդապետի Բազունեաց, որով կարգի վանահայր Ս. Թադէոսի վանից Մ՚աքուայ. Թ. 465։*

— *Ցանուն Նորին, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 466։*

— *Ցանուն Տ. Թադէոս վարդապետի Առաքելեան, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 488։*

— *Հաստատութեան Հոգաբարձութեան Եկեղ.—Ծխ. ուսումնարանին Հայոց ի Նորք քաղաքամասին Երևանայ. Թ. 507։*

— *Օրհնութեան յանուն Զաքար Աղայի Ջամբուլատեան ի Կաղզուան.* թ. 510։

— *Յանուն Տ. Եփրեմ վարդապետի, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ.* թ. 533։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնի կարդումն Տ. Եփրեմ վարդապետի ի պաշտօն առաժամնակեայ անդամութեան վիճ. կոնսիստորիային Հայոց Քիշնևի։* թ. 534.

— *Յանուն Տ. Տաճատ քահանայի Մաթևոսեան Շամախւոյ, որով շնորհի նմա կամիլաւկայ։* թ. 538։

— *Օրհնութիւն յանուն պ. Դէորդայ Նեանդուլեան.* թ. 548։

— *Հաստատութեան Հոգաբարձութեան դպրոցին Հայոց Մելիտոպոլի։* թ. 589.

— *Յանուն Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի ղեկղոյ Յովհաննեան—Մարիամեան դպրոցին Հայոց Տփղեաց։* թ. 602.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ.

1. Կրօնի կենսատու զօրութիւնը . . Գ. Ս. . 241
2. Եկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը . . Գ. Ս. . . 245
3. Տիմոթէոս Էլուրոսի նորագիւտ երկը եւ նորա մի քանի նոր հատուածները նախնի հայրերից առած . . . Կ. Վ. . . 251
4. ՆԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 258

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Հ. Գելցեր, Համառօտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան. . . Մ. Վ. . 262

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՁԻՐԱԿԱՆ.

6. Երեւակայութիւնը կրթութեան գործում. Ս. Ե. 264
7. Խոսք եւ համրերի օրինակների դպրոց Զուիցերիայում 266
8. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 268

ԱԶԳԱՑԻՆ.

9. Լուսաւորչի կոչը . . . Գ. Ս. . . 269
10. ՆԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑՑ 270
ՄԱՑՐ ԱԹՈՌ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՑՔ. 272
ՊԱՀՏՕՆԱԿԱՆՔ. 274

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՀԱՅՐԱՏԻ 1897 Թ. ՅՈՒՆԻՍ 275

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ՅԱՅԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՀԱՅՐԱՏԻ 1897 Թ. ՅՈՒՆԻՍ

Բ.

ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՊԱՏՃԱՌՈՒ ՅԱՂԱԴԱՍ ՉԽՈՍՐՈՎ ՆԶՈՎԵԼՈՑՆ

ԶԱՆՁԵՒԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ *

Բարբառք աստուածային պատգամացն աստանօր զարթուցանէ զմեզ այժմ [1] առ վարկ ակամայ [2] հարկապահանջութեանս, որ յաւուրս մեր։ Քանզի ասի ուրեմն կանխագոյն, թէ Լուարե՛ք զայս ամենայն ազգք [3] երկրի, [4] և զնովին ածեալ ասէ, թէ Ծերք լուարե՛ք և պատմեսջիք որդւոց [5] ձերոց, թէ երթիք եղեալ իցէ այս յաւուրս ձեր, զոր այժմ թեւլայրեաց չարն սկզբնախաբ սատանայ սադիր սողոսկանօք ի սողոմածոյց [6] և ի մահաշունչ [7] լեզուս ուղ[ղ]ոյ, զոր անպանօր [գ]երբնականն [8] ձայնն ի վաղնջոյն նախագոյն մեր «Թշ. ամաւ գու շակեաց Հոգին սուրբ ի բերանոյ աստուածախօսն Պօղոսի, որ [Բ 131ա] գերապարծիկ գոյր լինել հաղարապետ [9] խորհրդոցն աստուածոյ, ասելով՝ Թէ Մի՛թէ փորձ ինչ խնդրէք ջՔրիստոսէ, որ [ինձս [10] ընդ ձեզ խօսի։ [11] Որ արդարև ոչ փորձ, այլ ճշմարտութիւն բաւանդական, [12] քանզի լցեալ կատարեցաւ ամենայն Հոգիարուխ վարդապետութիւնք նորա, է՛ որ [ի] վաղնջոյն իսկ անդ ուրեմն, և է՛ որ

* Տե՛ս Բարարատ փետր. և մարտ.

1. Ա այժ
2. Բ ակամա
3. Ա ազգ
4. Ա Սաղմոս խե՛, 2.
5. Բ որդոց
6. ԱԲ այսպէ՛ս.
7. Ա եւ ինձ մ՚ինչ
8. Ա երբ քնկն Բ երբ բանական
9. Ա ուղես Բ ուղեւո. տե՛ս Առ. կորնթ. գ. 1 „Իբրեւ հաղարապետս խորհրդոցն աստուածոյ.“
10. Ա ինեւ
11. Ա կորնթ. երկ. ԺԳ, 3.
12. Ա բովանդակն

յաւուրս մերոյ ժամանակիս· ի դէպ մեզ պատահանել, թէ ի ժամանակս յետինս քակտեցին[1] ոմանք ի հաւատոյ և հայեցան ի մոլորութիւն դիւական,[2] և ի ձէնջ յարիցեն, որ խօսին սուտ,[3] ձգել զաշակերտան զկնի ստայօղ բանաստեղծութեանց: Որք ոչ դադարեն կեղեքել զուղիղ ասաուածաբարդ բան վարդապետութեան, անդլակի[4] վարժմամբ ներակըրթեալք ի գիւա[5] բանաստեղծն հակառակից[6] ճշմարտութեան: Որք համակ հակառակք և միշտ անիրաւք, որդիք անհնազանդք, ապիրատք և ապերախտք, ապաբանեալք[7] ընդդէմ հօրն հաւատոյ և թիկունս դարձուցին ընդդէմ ասաուածային պայմանին:

Ի մէնջ ելեալք, [Ա 207b] այլ ո՛չ ի մէնջ·[8] զի թէպէտ և մարմնով մերակերպ գոնեալք,[9] առ բարւոյն[10] բուսեալ և ընդ նովաւ ածեցեալ, այլ գոյիւ խառնեալ ի խորհուրդ չարին և զնորին դիեալ զմահագին զկաթն, որ ոչ զքիմն պարարէ, այլ զհոգին պարուրէ, որ ոչ ուժին քաղցրաճաշակ, այլ չարախտաւատ և ապաժոյժ լեղի և լի թիւնիւք մահու որոմնացան[11] վիշապին:

Զի զոր օրինակ ի վաղնջեանն [Բ] առ կաթողիկոսն գողտրախաբ երկբացիկ պատուհանսըն զմբեթարձին լսարանաց դաւանեալ դեն,[12] նենգ խորամանկութեամբ զաստուածանալոյն կարծեցեալ[13] ճանճիկ փաղաքշական բաներդութեամբ· որ և զնախատնական նա կորուսանել և հեռանալ ի զրկայ աստուածասնունդ կայենից, նոյն խորամանկութիւն չարին և այժմ ընդմտեալ յորդիսն ապստամբութեան՝ ի ժամանակս մեր ետ բարբառել բանս անդուակս, և զնել տարացոյցս աննմանս, և խօսել զոր ոչ է արժան:

Քանզի [և] ·ՅԳ· թուականիս և ի չորեքտասան[14] ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոյ Յոսով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն, այր համեստ և գիտնական և ալեօք ծերութեամբ զարգացեալ· յանկարծակի իրրև ի դիւական հոգւոյն շարժեալ առանց իրիք հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն գելակի արձակել՝ ըստ յունարէնն լեղուին զկիրակէն կիւրիակէ կոչել և զնորաստղմ Նոռուսաղէմ, և որ սոցին նման է, ի սոյն յառեալ* բարբառ: Իսկ զկնի այսորիկ ապա այլ յառաջեաց բաջազմունս անհեդեպս· Քանզի հրամայէր մինչև[1] մօրուսն[2] եկեալ՝ զգբլուխ խուզել մանկանց, թէ Այսր աղագաւ կոչի կտրիչ,[3] և զկնի մորուացն զհերան ապա թողուլ երկայնիլ և մանիլ ցօրունան,[4] զի Այսր աղագաւ կոչին մանուկ:[5] Նա այս երկարեալ առ անդամ մի· ապա և յեկեղեցի եմոյծ զբաջազմանն իւրոյ զդպրոն: [Բ 131b] Քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն, որ քահանայքն աւրհնեն և այլ՝ [Ա] զոր ոչ աւրհնեն—միապատիւ է, և աւելորդ զաւրհնելն վարկանիմ: Նա յայսոսիկ ներեալ մեր նմա: Ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել մուծանել յեկեղեցի աստուածոյ: Քանզի ասէր· Ս՛ի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, տարացոյց տալով, թէ Գրեալ է՝ կոչեն զայս ոք ի դպրութենէ յաշխարհական սարկաւագութեան և զայն ոք կոչեն ի սարկաւագութենէ յաշխարհական քահանայութեան· ահաւասիկ դեռ ի վերանալ է աշխարհանօք:[6] Նա զի այս ոք, ասէ, կոչեն ի քահանայութենէ յաթոռ եպիսկոպոսութեան, չիք աշխարհական այլ, ահա գերապրեցաւ յաթոռ: Նա զայն ոք կոչեն յեպիսկոպոսութենէ յաթոռ հայրապետութեան, և չիք այլ անուանց յորջորջումն, մի աթոռ է և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին: Նա զերկրորդ[7] կոչումն լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն:

1· Ր քակեսցին
2· Ա Տիմ· Ա՛ւ· Դ· 1·
Ր ի մոլորութիւն դիւական մոլորութիւն
3· Ա Գործ· Ի, 30·
4· ԱՐ անդ լակի 5· ԱՐ ի գիւթ
6· Ա հակահրաշից 7· Ր ապաբանեալ
8· Ա Յովհ· Ա՛ռաջ· Բ, 19·
9· Ր գունեալ 10· Ր առ բարոյն
11· Ա Մատթ· ԺԳ, 25·
12· Ր դաւանեալք է՞ են Ր դաւանեալք են ?·
13· Ա Ծննդ· Գ· 5· 14· ԱՐ ի դժան

---

* = յարեալ ?·

1· ԱՐ մչեւ
2· Ր մօրուս
3· Ր կտրիճ
4· Ա մանից ցօրունքն Ր մանիլ ցորունան
5· Ա չունի „մանուկ“
6· ԱՐ յաշտիճանօք
7· ԱՐ զբ՞ղ

Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւել, զոր աղաչեալ մեր բազում անգամ գառնալ նմա [յ]այնմ անուղղայ [1] և մատաղ խորհրդոյ, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղիլ։ Զոր հարկեալ ի հրամանէ աստուածոյ կարել հրեղէն սրովէ և զբաժինն ընդ կեղծաւորսն դնել, [2] որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն պաշար կորստեան, զի ոչ ղղջացաւ մինչև ի վերջին շունչն։ Վասնորոյ հարկեցաք գրել զայս հնացական կաւակ առ յապա [ի] նկելոյն, զի զգուշացին յայնպիսի ընդվայրացած քննութենանց և ուղղութեամբ նկատեսցեն զաւետարսի առ հանդերձեալ կեանսն, զի Շատ է աւուրն չար իւր։ [3]

Գ.

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՑԱՂԱԳՍ ՈՐ ԱՍԵՆ, ԹԷ

ՄԻ ՊԱՏԻԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՒ ՎԱՍՆ ՄԻ ԼԻՆԵԼՈՅ ԿՈՉՄԱՆՆ

Արդ քանզի բուսան բազայք խորհրդոյ նանրութեան ի տանս Թորգոմայ յոմանս կարապետս ապստամբութեանն յառաքելոյ ասացեալ նախընկալ, [4] զորոյ գինի և մարդն անօրինութեան, որք մահացեալ փառախնդիր ամբարհաւաճութեամբն ընդ պատիւ բարձրութեանն բարգաւաճեալ փառաք աստուածատկարդ [Ա 208a] ամբոխոյն Բարգուղիմէի և Թադէոսի առաքելոցն և առաքելահանդէս երիցս երանեալ Հռոսաւորչին սրբոյն Գրիգորի, զոր աստուածային աջոյն հաստատեալ մարմնացեալ աւետարանութեամբ և երկնահրաշ ապդամանք և յուսիւք ի վեր քան զբան տեսութեամբն, զոր ասէ զքահապետն ամբախտութիւն զհաչն լուսոյ * և զանճառ բարձրութիւնն

1. Բ անուղայ
2. Ամատթ. ԻԳ. 50—51.
3. Ա Մատթ. Ջ. 34.
4. ԱԲ ն՛ խ ընկէ՛
* Տես Ագաթանգեղոս

զաթոռն քրիստոսանման և զմեծ քահանայապետութիւնն հանդերձ քաջալերական ձայնիւն, որ ընկալեալ ի պատրիարգէն կեսարու ձեռնադրութիւն արքեպիսկոպոսութեան, որ Թարգմանի եպիսկոպոսապետ, որ ինքն ընկալաւ .ՆԼՒՆ. (?)։ [1]

Այսմ աստուածային բարձրութեան ըմբախակեալ ոմանք արդենագիւտ նորաձայնութեամբ՝ բառնան վերիցութիւն սուրբ աթոռոյն, համապատիւս զեպիսկոպոսունս և վկայրապետան [2] ասելով, Թէ Միապէս ունին զանուն եպիսկոպոսութեան՝ հայրապետան նոյն [Բ 132a] գունակ և զպատիւն, և չէ ինչ առաւել ոչ պատիւ և ոչ կոչումն, և եթէ է՝ կոչումն ձեռնադրութեան չկայ [3] յեպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն, և թէ զանազան անուանք՝ մետրոպոլիտք և արքեպիսկոպոսք և պատրիարգ՝ մարմնական անուանադրութիւնք են։

Եւ խմացեալ թէ չիք անուն, որ ոչ զիրն նշանակէ։ Արդ՝ անուանի անուն սարկաւագ, որ է սպասաւոր, և քահանայ, որ է սրբիչ, և եպիսկոպոս, որ է այցելու, և հայր, որ բազում որդիս ի փառս ածէ, և հայրապետ հայոց և կաթողիկոս, որ է ամենապետ իբրև զաստուած։ Արդ աղէ ասա, զի՞նչ քակիչ հաւանութիւն [4] կամ յօքնանութիւնն խորհըրդոցն։ [5] Կարե՞ս ասել, Թէ չէ հայրապետն սարկաւագ աստուծոյ. կարե՞ս ասել, Թէ չէ սրբիչ. կարե՞ս ասել, Թէ [6] չէ այցելու։ Գիտեմ զի զպետութիւն բառնալ կամիս, զոր ոչ կարես։ Արդ՝ զի՞նչ քակիչ են այդոքիկ անուանք պետութեանն, Թէ, ոչ առաւել հասիչ։

Դարձեալ՝ լոյս ասի աստուած, ասին և հրեշտակք լոյս, նաև մարդն լոյս անուանին։ Արդ՝ զի համանուն են՝ և համապատիւ ոչ ունիս ասել։ Երկինք ասի և երկնից երկինք, ասի աստուծոյ աստուած, այսինքն արարիչ և ակն ըստ պատուոյ անուան, և ահրանց ահն և

1. ԱԲ այսպէ՛ս. ինձ համար անվերծանելի։
2. ԱԲ զեպան եւզնյրպան
3. Բ չկա 4. ԱԲ համանունութեան
5. Ա խնդին Բ խնդրն=խորհրդին, խորհրդոցն, խորհրդոյն.
6. Ա կարել ասել Թէ Բ կարես Թէ

իշխան և Թագաւոր: Արդ՝ զի իշխան ասի և Թագաւոր՝ [Ա] չէ[1] և աստուած:

Նկեսցուք և ի գրաւորական ստորագրութիւնս: Մովսէս և Ահարոն երիցունք նորա ասին,[2] արդ՝ չէր[3] ինչ զանազանութիւն պատուոյ համանունութեամբն, ոչ ապաքէն Մովսէս յաստուածակոյս կոչին ասի, և նա՝ ի մարդս բէս. ոչ ապաքէն յօրինումն իւղոյն սբր[ի]րութեան Մովսիսի հրամայեցաւ[4] և ոչ նման այլ ամենայն յօրինածք կատարմանցն: Թողում զբազումն ասել, առաւ ի հոգւոյն Մովսիսի և արկաւ զ.էի. ծերովքն: Արդ՝ մի հոգ [ւով] ....[5] լի էր համապատիւս ասեմ թէ ոչ, զոր և երջանիկն Աստուածաբան արտաճառէ՝ Յայնժամ ոչ ամենեքին նմին արժանաւորք երևեցան դասու և կայենի, այլ ոմն այսմ և ոմն այլում ըստ չափոյ՝ ինձ թուի՝ իւրոց մաքրութեանն, և այլն:

Ասի[6] Մելքիսեդեկ քահանայ կոչեցաւ և Քրիստոս՝ քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի:[7] Արդ՝ ի սուրբերականին և ի նորում[8] քահանայ է անուն և ոչ եպիսկոպոս: Ընդունայն է[9] անուն և պատիւ եպիսկոպոսութեան՝ քահանայութիւնն բովանդակեալ, զոր և անուանէ[10] թագաւորութիւն, քահանայութիւն: Եւ այլ ոչ ևս ընդունայն է եպիսկոպոսութիւն:

Քահանայապետն և կատարողն Քրիստոս նախ կիսատարկաւագ զի արար խաչն չուանեայ, եհան զրոս ի տաճարին,[11] և ևս նախ գրակարգայ, զի եւտուն նմա զիրս և յարեաւ ընթեռնուլ:[12] Դարձեալ՝ սարկաւագ զի սփածեալ զինձակ լուաց զոտս աշակերտացն:[13] Նա և քահանայ, զիւրն բաշխելով մարմին և արիւն:[14] եպիսկոպոս, յորժամ զփականս երկնից Պետրոսի հաւատոյ[15] և յորժամ փչեաց յառաքեալն Հոգի սուրբ ասելով՝ Զոր կապիցէք յերկրի եղիցի կապեալ յերկինս և զոր արձակիցէք եղիցի արձակեալ.[1] եպիսկոպոսապետ, յորժամ զՀոգին սուրբ ի վերնատունն[2] առաքէ, եպիսկոպոսունս զառաքեալն վերագրելով: Արդ՝ քակիչ այսոքիկ անուանք և կոչմունք կատարելագունին. կարես թէ ամենեքեանդ...[3]

Դարձեալ՝ ձեռնադրութիւնք երիցութեան ասի Աւաքելոցն ի կանոնական Առաջարանութեան [ի 132b]: Արդ ամենայն երէց եպիսկոպոս է. Փիլիպպոս սարկաւագ գոլով մկրտեաց զնեղքինին,[4] [Ա 208b] զի՞նչ արգելու այժմ ի սարկաւագաց մկրտութիւն առնել:[5]

Դարձեալ՝ այսու զՀայրապետական համապատիւ՝ ասելով թէ եպիսկոպոսն ձեռնադրէ զինս: Ցիշեա զՄկրտիչն Յովհաննէս՝ զամենամաքուրն մկրտելով զՔրիստոս. համապատիւ արդիօք Մկրտիչն և Քրիստոս: Ցիշեա և զառ ի յառաքելոցն ասացեալն՝ Ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս[6] ի Քրիստոս՝[7] համապատիւք արդիօք մեք և Քրիստոս և ոչ ինչ առաւելութիւն նորա:

Դարձեալ՝ Ժառանգակիցս և մարմնակիցս և հաղորդս զմեզ ասէ.[8] կամի՞ս զի զգլուխ անկեանն քակտեսցես և ի քո չափս իջուսցես. յայտ է թէ ոչ գոլով գլուխ, բոլոր մարմինդ գացիս քանդելոյ:

Ձեռնադրութիւն, ասես, ոչ է կարգեալ որիշ հայրապետութեան, այլ նոյնն երկրորդի, զոր յայլ ազգաց ոչ կարես ցուցանել զչինելն, իսկ ի մերումս բազում ինչ ի կարևորացն ոչ գտանի թարգմանեալ: Նաև զիաւին իսկ ոչ նախկին վարդապետաքն Հայոց, թէ զարթիցի երկրորդ Աբիսողոմ ի գլուխս Նոր Սիոնի՝ պատակել կամելով զՀայրենի թագաւորութեան զպատիւն նոր և[9] տարաժամ դատաստանաւ:

Արդ՝ ձեռնադրութիւն քահանայութեան ուրոյն է և եպիսկոպոսի ուրոյն. իսկ որ ի վերայ ննջմանն խորհրդածութիւնք՝ միապէս ի մերումս, իսկ յայլ ազգս ոչ ևս: Նաև բա-

---

1. ԱՒ չէ 2. Սաղմոս ՂԲ, 6. 3. Ա չէ Ք չէր.
4. Ա ելից Լ, 22. 5. ԱՒ մի բառի տեղ դատարկ, որ նշանակում է պակաս 6. Ա Արդ.
7. Ա եբր. ե. 5—6.
8. ԱՒ ի նորումս 9. ԱՒ ընդունայն է
10. Ա անուն է Ք ան՚՚ւն է 11. Ա Յօհան. Բ. 15.
12. Ա Ղուկ. Դ. 17. 13. Ա Յօհան. ԺԳ. 4.
14. Ա Մատթ. ԻՋ. 26.
15. Ա Մատթ. ՃՋ. 18—19

1. Ա Յօհան. Ի. 22.
2. Ք գալս՚՚ւն
3. ԱՒ թէսում է Թերի. 4. Ա Գործ. Ը. 38.
5. Ա առնե՚՚լ
6. ԱՒ յ+գաղափարագիր+ւրս.
7. Ա Լուս. Բ. 6. 8. Հռոմ. Ը. 17.
9. Ա չէք.

զում էս այլ կարգ կարևորք, որ չէ թարգմանեալ ի հայկական լեզու։

Զարձեալ՝ սարկաւագն բեմական է օծմամբ [Բ] և ձեռնադրութեամբ, իսկ մահուն խորհրդականութիւն աշխարհականի [Ի] մերում, իսկ յայլ ազգս ոչ էս։

Ըստ նմին և հայրապետականն կարգ ձեռնադրութեանն ճնացեալ բաւական[1] համարեալ զնոյն կոչումն, զի կրկինն այն հոգի զօրանայ ի վերայ որպէս յՅղիսէ յՅղիսէէ.[2] և թէ, ասես ոչ լինել յայլ ազգս, զի՞նչ իմանաս զնորհրդածութեանն ժամն, զոր թագաւորն հրամայէր ի վերայ Պրոկղի, յորժամ [յ]եպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն կոչվին ըստ շարածութեանն Սոկրատայ։* Իսկ եթէ ի կանոնական կարգի զեպիսկոպոս յաբակ[Ա]ցապէս յիշել ասես՝ զհամանունութեան[3] զէմ յոլովապէս նշանակեցաք։

Նաև զկաթողիկոսն ասել ընդհ՚ր թողուս, որում զգլխաւորութիւնն է հաւատացեալ, և զսուրբ Ժողովն Եփեսոսի Թուեալ ՈՀԸ. կաթողիկոս և ՀԸ. եպիսկոպոս[4] ասէ, և կամ թէ Առանց մայրաքաղաքացոյն մի՛ իշխել իւս ինչ առնել։ Այլ և առ ի Կղեմէա[յ][5] կարգեալ Կանոնն՝ եպիսկոպոս յերից եպիսկոպոսաց ձեռնադրեալ՝** զհայրապետն ակնարկէ, ըստ համանունութեանդ զոր բազում անգամ ասես։

Իսկ որ զսուրբն Յովսէփ լոկ տեղապահութեամբն գլուխ եպիսկոպոսաց անուանէ և իշխեցող աստիճանով[6] ի վեր դոլ, ապա որ ձեռնադրութեամբն իսկ է, եպիսկոպոսա-

---

4. Ա չէք։ 2. Ա Զորը։ թագ. Բ. 9։

* ՆԱՆ։ Անանիայի այս յիշատակութիւնը Սոկրատի մասին՝ մեզ հասած հնադոյն տեղեկութիւնն է (Շմմո. Սկտ. Աքզ. նկեղ. պատ. հր. Մ. վ. Տ. Մով. վաղարշ. 1897. յառաջ. եր. ժ—ժԱ), բայց աւելի արժանի է ուշադրութեան Անանիայի մէջ բերած «գնորհրդածութեան ժամն» ասացուածքը, որ անպայման փոքր-Սոկրատից է եւ Մեծումը չկայ (տես Մեծ եւ փոքր Սոկր. եր. 673)։ Այս վկայութեամբ անպայման ապացուցւում է, որ տասներորդ դարում Սոկրատի նկեղ. պատմութեան փոքր խմբագրութիւնը արդէն կար եւ ծանօթ ու տարածուած էր։

3. Ա զնամանունութիւն

4. ԱՒ ՀՄ. Ը կթղկսս. եւ Ը եպսս.

5. Ա առ կղեմէա. 6. Բ իշխեցող աշտիճանով.

** Տես «Սահմանք եւ կանոնք սուրբ առաքելոցն ի ձեռն կղեմէայ առաքելոյ հրեշտանոսաց.—Ա. Եպիսկոպոս ձեռնադրեսցի յեպիսկոպոսաց յերկուց եւ կամ յերից» (Կանոնագիրք)։

պետ՝ զիմ՚ր նուաստանայ յիւրմէ գերարըննութենէն։[1]

Թողից ասել զնախասելիսն զինեալ զասուցն ունակութիւնն զանազան անուամբք և ըստ մականունութեանցն խորհրդական իրակութիւն ըստ գերակայութեան և ստորադասութեան ներգործութեանց և նոյնաբաստակ հանդիսամատ զուգակշռութեամբ [Բ 133ա] զնկեղեցւոյ բարեվայելուչ դասակարգութիւնս, սկսեալ ի նուաստագունից մինչև ի գերազարդ կատարողապետին սրբազնագործութիւն աստուածամատեան ունակութեանն, վերլուծական արուեստանութեամբ ստուգաբանեալ յառաքելահիմեալն Դիոնէսիոսէ [և] յայլոց երջանկափառ վարդապետացն, որ վկայպատող հնարիմացութիւնս նորաձայն[2] խորադիտաց հակասութեան կարող է պարսաբանել։

Բայց անլուր և անաւղեակ էր այսպիսի[3] թարմատար և շամբուշ կարծիք ի նախակայից երիցունեացն մերոց վարժապետաց՝ եթէ զոցն ոք որ զառաքելոցն զնախակարգեալ հաստատութեամբ երկնից զամս ելից երանեալ Լուսաւորչին և նորին զօրացեալ հոգւով յաջորդողացն՝ թուակցութիւն յիսնաքանակ երից հանգերձ[4] աստուածաջնոկ երամս* զպարարեալ նախատանօք և վայր իջուցանել Ջանայցէ, հայրանարգու գոլով ոչ [Ա 209ա] միայնոյ, այլ այսքանեաց և այսպիսեաց,[5] որ-ջասուելով քաղաքութիւն յանդգնութեամբ և կեղծաւք քրիստոնեից[6] բեռնաւորեալ զպարտաս։ Վասնորոյ զարմիք փութապէս որդիք զօրու-

---

1. Ա գերընէն. Բ գերաբնէն.

2. ԱՒ հնար իմացութիւնս նր. ծայն. 3. ԱՒ սսի.

4. ԱՒ Ծ. նաքանակերիւք, հանդերձ.

5. Ա այլք այսք ե՛ց եւս սեց
Բ այլք այս քնեց. եւսսե՛ց. 6. Բ բէաննն.

* ՆԱՆ։ «Յիսնաքանակ երից հանգերձ աստուածաջնոկ երամս» ասելով հասկանում է կաթողիկոսներին։ Եւ իրաւի, Յովհաննէս Պատմաբան կաթողիկոսի վկայութեամբ՝ իրենով լրացաւ Լուսաւորչից սկսած՝ կաթողիկոսների յիսուն թիւը.— եւ այսպէս ինքն հանդերձ լեռալ եղեւ թիւ յոթնեասնից յիսներկի համարով հայրապետութեանս Հայոց, որ սկիզբն առ յերջանիկ եւ ս. Լուսաւորչէն Գրիգորէս (տես Շարից Հայրապ. Հայոց Տէտուտարարութիւն, տպուած Սամ. Անեցու (վաղարշ. 1893) վերջում եր. 272—277, զժբաղդաբար մի որեւաշատ եւ բովորովին անհնամ հրատարակութիւն)։ Յովհաննէս Պատմաբանից յետոյ հայրապետական գահն են բարձրանում Տ. Թէոդորոս, Տէր Եղիսէ եւ Տէր Յովհաննէս Մոկացի, ուրեմն՝ այս հաշուով ուղիղ 53-դ կաթողիկոսը։

թեան հօրն լուսոյ և ամենայն որ ոք տեառն և Աշմարտութեանն իւէ ակնարկութեամբ առաստուածՙ և ամենայն յաջողակի կորովութեամբ ի հանդիսի անցեալ ճակատոյս Նորոյս Իսրայէլի, զի ծանր ազէտ և ահաչնաբորբոք հրդեհք [1] չար հերձուածոց, [որ] ճարակեալ էր յերկրի, հնոցացան ի մէջ աստուածատունկ դարաստանի հոգեծաղիկ ուղղափառութեան հաւատոյս, զի թէպէտ և զանազան [բ] որոմնացանութիւնք հերձուածոց ճարակեալ էր [յ]երկրի, սակայն ամենայն եկեղեցական պետութիւնք ըստ իւրաքանչիւր կայի բարձրութեան [2] պատշաճեալ մնայր, իսկ այս դաժան և չարագիւտ կորստական խմացմունք զամենայն գլխաւորութիւնս եկեղեցւոյ միանգամայն տապալել ունի և բառնալ առաջնորդական հաստատութեան [3] և սահմանի, որպէս և իւրաքանչիւր առանձին լինել քրմի և տուն, և հասարակաց չարագիւտութիւն։ Այլ զմեզ փրկեսցէ Քրիստոս յոյն մեր ի չարէ՝ աղօթիւք սրբոցն։

Դ.

ՆՈՐԻՆ

ՏԵԱՒԻՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Բայց [4] արդ սակաւուք և վասն ասացեալոցս ի մէնջ եկեսցեն բանք· որ ասէ՝ Ո՛չ ասի աշխարհի եպիսկոպոսի, այլ աթոռ միայն։

Նախ ի Դիոնէսիոսէ պատմի յԱռաջին Գրոցըն մեկնութենէ [յ]երրորդ [5] Ճառին. Իսկ զխոնարհագոյնն, ասէ, դաս զնոյն մերոցն առաջնորդացն և զաշխարհի գերակայսն ևս վերագոյնս առնեն խորհրդազգած· [6] Նորին յՅերկրորդ Գրոցն ի վերջին Ճառին. Եւ աստուածատեսակապոյն աշխարհնօք ասացելովք հզել առ գեբարգոյնն Ճառագայթ· յՅերրորդ Գրոցն Նորին. Եւ թէ որպէս աշխարհնք են առաջինք և միջինք և վերջինք այսոցիկ երկնաւորացն են կարգաւորութիւնք։ [1]

Իսկ եկեղեցականիս առաջնորդութեանն, որ ասին աշխարհնք ի Պատ[Ա]մութեանցն Եկեղեցւոյ յերրորդ [2] գլխութենէն. Եւ յայսմ ժամանակի, ասէ, գայն վայր կղեմէնտոս առաջնորդէր եկեղեցւոյն Հռոմայեցւոց, զի և նա զերկրորդ աշխարհն [բ 133b] ունէր զեպիսկոպոսութեան, որ եղեն անդ յետ Պետրոսի և Պաւղոսի։

Նորին յերեսներորդ [3] [երրորդ] Ճառին. Եպինոս [=Պլինիոս] Սեկունդոս դատաւոր աշխարհին պարտաւորեաց զոմանս ի քրիստոնէից անտի և ելոյծ զնոսա յաշխարհնացն իւրեանց։ [4]

Այլ՝ յԼԷ Ճառէն. Զի և նոքա երևելիք էին յաւուրսն յայնոսիկ, որ ունէին զաշխարհն զառաջին կարգին, որ յառաքելոց անտի։ [5]

Ի Հինգերորդ գլխութենէն ի վեցերորդ Ճառէն. Եւ յետ սորա կալաւ երկոտասաներորդ զկնի առաքելոցն Ալեքսերոս· ի նմին աշխարհնի են և ի նմին ուսման գնացին և ի տուչութիւն, զոր ընկալաւ յեկեղեցի յառաքելոց անտի։ [6]

Նորին [ի] ԻԸ· Ճառէն. Բաղում արտասուօք առ ոտս (նորա) Զեփիրինոսի եպիսկոպոսի Հռոմայ։ Եւ ընկենոյր զանձն իւր առաջի ամենայն մարդոյ, ոչ միայն առաջի այնոցիկ միայն որ էին յաշխարհնի յեկեղեցւոյն։ [7]

Ցոթերորդ գլխութենէն, յութերորդ [=ինններորդ] Ճառէն. Եւ Փելիաս Թեմայիս քաղաքէ, այր որ փառաւորեցաւ [8] յաշխարհնան պատուոյ։ [9]

ՑԱգաթանգեղոս· Եւ զոմանս յորդւոցն [10] քրմացն առեալ իւր զյառաջասուն [11] առնէր, որ յաշխարհնի եպիսկոպոսութեան արժանի լինէին, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ։

1· Բ հրդեք·
2· Ա կայ ի բարձրութեան Բ կա ի բարձրութեան·
3· Ա տատարութեան· 4· Բ այց·
5· Ա ե՛րդ Բ երդ՛՛· 6· Ա խնդ զազգ Բ խնդազազգ· Տես Հյհ· Բառ· «խորհրդազգած առնել»·

4· Դիոնեսիոսի հատուածները դաւթի Հիւպատի եւ Ստեփանոս Սիւնեցու թարգմանութիւնից են առնուած· որ մենք դժբազդաբար հնարաւորութիւն չունեցանք համեմատելու· ձեռքի տակ չունենալով պէտք եղած ձեռագիրը (տես եւ Զարբ· Հայկ· Թարգ· 381)·

2 ԱՈ յերկրորդ· Տես եւսեբ· Պատմ· եկեղ· (հին թարգմանութիւն· վեն· 1877· եր· 179 եւլն) Գլխութիւն երրորդ գլ· ժե· 3· Ա յերեսներորդի·

4· եւս· Դպ· Գ· գլ· ԼԳ· եր· 216· 5· եւս· Դպ· Գ· գլ· Լ՚Է՛ եր· 223· 6· եւս· Դպ· Է· գլ· Զ՚՛՛ եր· 355· 7· եւս· Դպ· Է· գլ· ԻՀ՛ եր· 408· 8· Ա փր՛՛ւթցաւ· 9 եւս· Դպ· Ը· գլ· Թ· եր· 636· 10· Բ յորդոցն·

11· Ագաթ· «իւր զաւագասունս ձեռնասունս առնէր»·

Նորին.* Եւ որ յաշխիճան յեպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ աւելի քան զ·ԻՃ։[1] Եւ վասն վրթանէսի ասէ. Որ և նա յաշխիճան պաշտամանն ևկաց յերիցութեան։

Եւ յայտնի է ամենայն ուրեք, զի ոչ երևի յատուկ երիցութեամբ կացեալ[2] մեծին վրթանայ, այլ ի հայրենականն աթոռ, զի [Բ] ոչինչ է խոխր[3] ասատւածային գրոց ամենայն բարձրագունից երէց անուանել[4] և քահանայ, որպէս զՄովսէս և զՀարոն իրիցունս կոչել և կենարարին՝ քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի,[5] թէպէտև բազում ուրեք քահանայապետ[6] անուանի։ Եւ զարձեալ ասէ. Իսկ սա առանց անցանելոյ ունի զքահանայութիւն առ ի կատող լինելոյ՝ այլովքն [հանդերձ], և քահանայ մեծ ի վերայ տանն աստուծոյ.[7]—և սուրբ Հուսաւորչին և սրբոյն Սահակայ, յաճախս կարդայ որպէս առաքին զտէր։[8]—[Ա 210b] Յաճախս կարդայցեալ լինի քահանայպ անուն, զոր գիտողացն թողաք։

Արդ միթէ ոչ անուանի աշխիճան եպիսկոպոսաց, մանաւանդ եթէ առաքելոյն ասի ի Տեառնէ ի ժամ ամբառնալոյն շնորհել աշխիճան,[9] որ կարի բարձրագոյն է իմանալ քան զքահանայակարգ, որ յայսմ ժամուս ընկալան, որպէս Դիոնէսիոսի Թուեցւոյ եթէ ինքն Տէրն մեր ի քահանայապետական աճեալով կոչումն զսրբազանան[10] գիւր պաշակերտան, սակայն զկատարելութիւն ի սրբազանն Հայր և ի Հոգին սուրբ վերադգէր[11] ասելով նոցա՝ Մի՛ մեկնել յԵրուսաղեմ մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց։[12] Որ և նոյն Դիոն[եսիոս]. Որպէս ասացաք եթէ երկնաւորացն աշխիճան առաջինս և միջինս և վերջինս ամենայն երկնաւորացն զարդուց։

Այսչափ ինչ բաւականասցի յաղագս աշխիճանաց բարձրագոյն աթոռոյն, որում և երանելի տէր Կոմիտաս գինքեանէ[1] և զայլոց յաշխիճան հայրապետութեան ասէ կացեալ։

Արդ և ի սակս քահանայից որ ասի ի Խոստովայ ոչ աթոռ ունել այլ աշխիճան միայն իբր ճանապարհորդաց [Բ 134a] և ոչ կայանաւորաց՝ ասի ի Նիկիայ սուրբ ժողովոյն մեծասան[2] գլուխն. Որք իրիցունք լինին և այլոց ժողովրդեանն ցանկայ[3] յափշտակել՝ զայնպիսին ընկեցցեն[4] ի բաց յաթոռոյն և ի կարգէ քահանայութեան և բնաւ իսկ ի պաշտամանէն ի բաց մերժեսցեն։

Նեոյ-Կեսարիայն,[5] որ և այն Նիկիա[յ] անուանի. Վասն երիցանց, որ ի բռնութենէ հեթանոսաց նախ քան զամանջանս զոհեցին և ճշմարտութեամբ դարձան, զպատիւ յաթոռոյն կալցին, այլ ի թարգմանութիւն նստել[6] կամ պատարագ մատուցանել կամ աւետարան կարդալ ոչ ունի իշխանութիւն։[7]

. . .[8] Կարճառոտի կանոնաց, որ և այն կոչի Նիկիայի, ՃԱ. գլխոյն. Պարտ է, ասէ, զիրիցունս որ զոհեցին և ապա դարձան և խոստովան եղեն ոչ ամենևին լուծանել, աթոռոյն միայն արժանի լինել, այլ ոչ պատարագ մատուցանել և ի վարդապետութեան կալ։[9]

---

* ԱՒ ի նմանէ նորին.

1. Ա. զմ. չ. Ա՞ կցել. 3. Ա խոխր ՆԱՒ անուանն՛լ.
3. Ա Սալմ. ճԹ. 4. 6. ԱՒ քՀ՛պ.
7. Ա. Եբր. Ե. 7. (Լ. 24)։
8. Թուեցի է ընդմիջարկութիւն կամ աղճատուած։
9. Ա. Գործ. Ա. 4. Գ·ուխ. ԻԴ. (49)։
10. Ա զսրբզնն Բ զսրբազնն.
11. Ա վ՛ր ձգոյն էր Բ վերաձգիչէր. „յն՛՛ տառերը ջնջման նշանով։
12. Ա. Գործ. Ա. 4. Գ·ուխ. ԻԴ. (49)։

1. Բ կ՛՛միտաս գյինքենէ.

2. Տես կանոնք Նիկիայ Ս. Ժողովոյն, գլ. ԻԵ։ ...եւ որք երիցունք լինին եւ այլոց քաղաքի եւ ժողովրդեանն ցանկան յափշտակել...զի զայնպիսիսն ընկեցցէ ի բաց յաթոռոյ եւ ի կարգէ քահանայութեան եւ բնաւ իսկ ի բաց մերժեսցին ի պաշտամանէն. (Ջեւ. Թ. 736—2. եր. 36)։

3. Բ ցանկա. 4. Ա ընկեսցին.
5. Ա մերժեսցեն Նեոկեսարիայն.
Բ մերժեսցեն Նէոյ կեսարեայն.
6. ԱԲ ի թարգմանութեանն ստեալ.

7. Տես կանոնք Անկիւրեայ, գլ. Ա. «վասն երիցանց, որք ի բռնութենէ հեթանոսաց մինչեւ ի տանջանս ածել ի վերայ եւ մահ սպառնալ, եւ նոքա առ երկիւղի զոհեցին եւ ապա ջանացան նկրտեցան եւ ճշմարտութեամբ դարձան. վասն այսպիսեացս կամ եղեւ, զի զաթոռոյն կարգն կալցին, այլ ի թարգմանութեան նստել կամ պատարագ մատուցանել կամ աւետարան կարդալ ոչ ունի իշխանութիւն» (Ջեւ. 736—2. եր. 44)։

8. ԱԲ Մի կամ երկու բառ պակաս.

9. Տես «կանոնք երկրորդ Նիկիականք, որք եւքն «ՅԺ. եպիսկոպոսունքն կրկնաբանելով կարճ է կարճոյ գլուխքս «ՃԺԹ.—գլ. ԻԱ. «Պարտ է զերիցունս, որ զոհեցին եւ ապա դարձան եւ խոստովան եղեն ոչ ամենեւին լուծանել, աթոռոյն միայն արժանի առնել, այլ ոչ պատարագ մատուցանել եւ ոչ ի խօսոն կալ եւ ոչ այլ պաշտօն պաշտել քահանայութեանն» (Ջ. եր. 207)։

[Ա] Բարսղի երիքատան գլխին· վասն երիցանց, որ անպատեհ և անարժան յամուսնութիւնս անկան՝ աթոռակցութեան[1] արժանաւորս առնել միայն ընդ յայլսն, բայց յայլմէ պաշտամանէ ի բաց հրաժարել և իւրոց յանցանացն հոգ տանել։[2]

Շահապիվանից։[3] Որ ազգականացն պըսակ աւրհնեացէ՝ յաթոռոյն և ի քահանայութենէն անկցի, եթէ երէց է և եթէ եպիսկոպոս, այլոքն հանդերձ։[4]

Բայց զի մի՛ զամենայն ժամանակս ի յաճախութիւն վկայութեան յաճախեսցուք՝ թողեալ լիցի մեզ որդւոցդ [Բ] բանիցս իմացողաց և մեք դարձցուք զյառվք ասացուածովքն խոտորնակօք։

Զի ասի ի Գրի անդ նորին հակառակողի, թէ Առանց ·Բ· կամ ·Գ· եպիսկոպոսաց .... անհնարին է[5] ումեք ձեռ[նադրել] եպիսկոպոս, վասն զի ոչինչ աւելի բերելով [հայր]ապետին քան այլ եպիսկոպոս[աց՝ կ]արի յոյժ դառնի սխալեալ ի մտաց [սրբա]զան տառից· զի ոչ զայս ամենայն եպիսկոպոսաց երևի յատկութենէ առաքելական եկեղեցւոյ ասել։ Վասն զի միայն հայրապետին, կամ որ ինչ վերագոյն քան զեպիսկոպոսութեան հասանէ կոչիլ վիճակ՝ անդանօր և եթ պիտանացու են հարկաւորութեանցս այսոցիկ սահմանք։ Վասն զի ուր կաթողիկէական[6] լինի կոչումն, որպէս նահապետութեան[7] սուրբ տեղեացն Երուսաղէմի, հարկաւոր է ժողովոյն միաբանականի զայսոսիկ վճարել, որպունակ ասի վասն Յակոբայ եղբօր Տեառն ի Պատմութեանց Եկեղերւոյ յերկրորդումն գլխոյ, անդ ասելով ի բանից Կղեմենտեայ, եթէ Յակոբոս զայր արդար ընտրեցին նոքա յեպիսկոպոսութիւն Երուսաղէմի, և այս յանուանէ զերիս միայն յիշատակ զառաքեալս, այսինքն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, զորս ի Փրկչէն մերմէ, ասէ, ընկալեալ պշնորհս գիտութեան և ոչ կարօտ յումեքէ վառաց իրիք, և որ ի կարդին է։[1] և յետ այլոց ասէ, Իբրև անկան նոքա ի խորհրդոց անտի, զոր ունէին վասն առաքելոյն[2] Պետրոսի, ապա դարձան ի վերայ Յակովբայ եղբօր Տեառն, այն որ ընկալաւ յառաքելոյ անտի զաթոռ եպիսկոպոսութեան[3] [Բ 134b] ... և[4] յայլում վայրի, ուր սակս [վաղեմի][5] աթոռոյն [Ա 210a] Յակոբայ ասէ պահիլ մինչև ցայն ժամանակս, նոյնպէս յառաքելոյն առաջին ասէ առնուլ զաթոռ եպիսկոպոսութեանն Երուսաղէմի։[6]

Այլ և զՊօղոսէ և զԲառնաբայ ասէ Ղուկաս յերից անտի առնուլ զկոչումն կատարեալ պատրիարգութեան և ոչ եթէ այլ ինչ նուաստութեան կարգի· զի թէպէտ և ասէ ի նոյն Պատմութեանն Եկեղեցւոյ, եթէ Պօղոս վասն բարբառոյն Տեառն, որ եղև յերկնից ի վերայ նորա,[7] կոչեցաւ և եղև առաքեալ, ոչ ի մարդոյ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։[8] սակայն ի ժողովէն յԱնգիոք, ուր էին ըստ եկեղեցւոյն մարգարէք և վարդապետք, Բառնաբաս՝ և Շմաւոն կոչեցեալն Նիւգէր[9] և Ղուկիոս Կիւրենացի և Մանայէն դայեակորդի[10] Հերովդէի և Սողոս,[11] մինչդեռ ի պաշտամանն կային ասէ Հոգին սուրբ, որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍողոս ի գործ, յոր կո-

---

1· Ա աթոռակէ՛՛ս Բ աթոռակցէ՛՛։

2· Տես կանոնք Բարսղի գլ· ԺԹ· — վասն երիցանց, որ անարժան եւ յանպատեհ ամուսնութիւնս անկեալ են ....աթոռակցութեան արժանաւորս առնել ընդ այլսն միայն, եւ յայլմէ պաշտամանն ի բաց հրաժարել .... եւ իւրոց յանցանացն հոգ տանել։ (Հ· եր· 116)։

3· ԱԲ Շահապի վանից։

4· Տես կանոնք Շահապիվանի գլ· ԺԹ· — ... եթէ ոք այնպիսեացն պսակ օրհնեսցէ ·· յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկեալ եղիցին։ (Հ· եր· 153)։

5· ԱԲ չիք է·

6· Ա կ՛՛ողէկ՛՛ն Բ կ՛՛ողեակ՛՛ն·=կաթողիկոսական· ?

7· Ա նախատմ՛՛են Բ ն՛՛խապատմե՛՛ն = նախապատմութեանն։

1· Տես նշանաբ· Պատմ· Եկ· եր· 74։

·· ԱԲ առաքելոցն·

3։ Տես նշանաբ· Պատմ· Եկ· եր· 125—6։

4· Բ չիք՝ եւ

5· Ա վսե՛՛մ Բ այս բառի տեղը բաց· = վսեմի ?·

6· Տես նշանաբ· Պատմ· Եկ· եր· 242։

7· Ա Գործ· Թ· 4·

8· Ա Գաղատ· Ա· 1·

9· Բ իւգէր·

10· ԱԲ դայեակ· որդի·

11· Բ Սաղուոս·

չեցեալ է իմ զդուստ, և նոյն ժամայն պահեալ և ապօթեալ եդին ի վերայ նորա [1] ձեռս, և նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ իջին ի Սելևկիա. ուր և ի Պամիոս յետ կոչմանն փոխեալ [2] լինի անուն Սօղոսի Պօղոս, զոր ոչ ունէր յայն վայր: Այլ և ինքն Պօղոս վասն Ղուկայ ասէ. Ոչ այսչափ միայն, այլ և ձեռնադրեալ ևս յեկեղեցւոյն Նշդեհակիոյ մեր եղև. այլովքն հանդերձ: [3]

Ցեսանեմ որպէս յայտնի է որ աւետարանչի ամենուն [ընդդէմ] միաբանութիւն եկեղեցւոյ առ ի ձեռնադրութիւն, որգու[ր]նաին յետ եղբօրն Ցեառն ասի ի Պատմութեան [4] Եկեղեցւոյ վասն Շմաւոնի Կղէովպեանց, եթէ Ժողովեցան առաքեալքն, որք ինացեալք էին յայնմ ժամանակի, և միաբան ընտրեցին Շմաւոն ի ունել զաթոռն Յակոբայ:

Այլ և յաղագս մայրաքաղաքացւոյն, այսինքն Թադէոսականին Հռովմայ, ասել՝ Ինոսին ունել յառաքելոց անուն վեպիսկոպոսութիւն. և վասն Փիլիանոսի եպիսկոպոսի Հռովմայ [5] ասէ՝ Ժողովել բազմաց առ ի ձեռնադրութիւն, և ապա տեսին ազանի ի վերուստ իջեալ ի վերայ Փիլիանոսի, [6] զոր առժամայն նստուցին [Ա] յաթոռն եպիսկոպոսութեան:

Ընդ մի [7] կարի վեհեղեալ գայթագ յայսմ ի տեղւոջ ամենայն ուսմունք. յայտնի է ի ժամանակս առաքելոցն և յետոյ ի սուրբ Հարանցն, զի յաղագս պատուիրանի հարկաւորաբար գտանին ժողովեալ, որպէս ի Կոստանդնուպօլիս և վասն Նեքտարեայ [8] և Ցովհաննու Ոսկեբերանի և Պրոկղի և բազում եպիսկոպոսաց հրամայեալ վճռարանական ժամն խորհրդածութեանն կատարել ի վերայ Պրոկղի և նստուցանել յաթոռ հանդերձ մայրաքաղաքացւոյն Թխտովք Հռովմայ և Աղէքսանդրի և Անտիոքայ, որպէս պատմի ի Սոկրատայ [9] մատենագրէ ըստ կանոնական հրամանի, որպէս ասէ՝ Ժողովեալ եպիսկոպոսաց հանդերձ մայրաքաղաքացո[ւ]ոյն հրամանաւ:

Որ գտանի և ի մերոյ Լուսաւորչին կոչմանն՝ հանդերձ մայրաքաղաքայ[ւ]ոյն Ղևոնդիւ ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց, զի ձեռնադրեսցեն զսուրբն, աւանդելով ի նա զպատիւ քահանայապետութեանն խոնարհութեանն Քրիստոսի և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանցն Աստուծոյ, սրբով աւետարանովն [1] [Բ 135a] եդին ի վերայ նորա զձեռս ժողով եպիսկոպոսացն և զլուսաւորն Ղևոնդիոս:

Ահա կրկին պատիւ խոնարհութեանն Քրիստոսի և բարձրութեանն Աստուծոյ պատիւ մեծ, ուստի կարող է ուսանել իւրաքանչիւր ոք, եթէ ոչ եպիսկոպոս լոկ, այլ և արքեպիսկոպոս և մետրապոլիտ և կաթողիկոս, որպէս ասէ զՂևոնդէ, նոյնպէս և զսուրբ հօր[է]ն մերոյ, այլ և վասն [Շւ]սեբեայ [2] Հռովմայեցւոյ. և ի սուրբ Կաթուղիկէն՝ [3] ասէ՝ն այսպիսիքս են կարօտ ժողովոյ առ ի ձեռնադրութիւն:

Իսկ լոկ եպիսկոպոսացն ոչինչ հարկ անհընարին ի վերայ կայ. [4] որպէս ասի յԵկեղեցւոյ Պատմութեան վասն Ցովհաննու աւետարանչի երթալ ի գաւառս հեթանոսաց՝ էր ուր եպիսկոպոս ձեռնադրել, էր ուր եկեղեցիս հինել, և էր որ այլ ինչ ի կարգաց եկեղեցւոյ: [5]

Նա և Պօղոս ասէ արծարծել Տիմոթէի զշնորհսն, ասէ, զոր ընկալար ի [Ա 210b] ձեռնադրութենէ իմմէ, [6] որ է միաւորական և ոչ բազմաւորական. [7] այլ և առ Տիտոս գրէ, զի կարգեսցես ըստ քաղաքաց երիցունս. [8] և ի նոյն յարէ՝ թէ պարտ իցէ եպիսկոպոսին անարատ լինել որպէս և [9] աստուածոյ անտեսի. [10] յայտ է թէ, Պօղոս իբր պերազանցեալ ամենայն [11]

---

1. ԱՒ առա՛ք՝նդն.
2. Ա այլեւ սեբեա Բ այլ եւ վասն սեբիա
3. ԱՒ կ՛ղկսէն
4. Բ կա.
5. Տես Եւս. Պատմ. Եկ. Գլ. Գ. դէ. իԳ.
6. Ա Տիմոթ. Ա.ա Գ. 14. Տիմոթ. երկ. Ա. 6.
7. Ա զգբամէ՛՛ք՝ն. Բ զբազմաւորական.
8. Ա ըստ քաղաքաց քաղաքաց իրիցունս.
9. Ա չէք՝ եւ.
10. Բ ... ի: Ա. Տիտոս Ա. 5.
11. ԱՒ յամենայն.

կարգօք ոչ միայն եպիսկոպոս կարգել անձամբ,[1] այլ և ի վեր քան զեպիսկոպոս կարգէ զՏիտոս· որով հրաման տայ[2] նմա եպիսկոպոս կարգել[3] անձամբ և ոչ բազմօք յասելն[4] Թէ կացուսցես և ոչ Թէ կացուսջիք:

Արդ եԹէ աշակերտն Պօղոսի այնպիսի ունէր կարգ, որ և[5] ինքնիշխան եպիսկոպոս[6] կոչել կարողանայր, ուրեմն անպիտանաս դու Հայրապետին[7] անկարանալ առանց ընկերաց այսոսիկ· [Բ] քանզի ի ձեռնադրութիւնս մեծին Բարսղի և առ ի քէն իսկ զրեցաւ Հաւատակ քոյին իմաստիդ· վասն զի Հայր Աստուածաբանին բռնադատեալ[8] զկարուԹիւնն իւր առ ի լրումն հարկաւոր Թուոյն[9] կանոնականի, քանզի ի վեր քան զեպիսկոպոս ունէին ձեռնադրել· այլ և վասն նորին Աստուածաբանի ոչ այսպէս գտանի, միայն եպիսկոպոս գոլով· և մերն երջանիկ ծնօղն առանց եպիսկոպոսաց պատմի միայնակ ինքնիշխան բազում ձեռնադրել եպիսկոպոսունս [ուս]տի և սակս որդւոցն քրմացն ասի, Թէ ընկալան ինամանէ ձեռնադրութիւն· և [ոչ] եԹէ ինոցանէ, որպէս ի բազմաց: Նմանապէս և յաղագս չորեքհարիւրոցն[10] ձեռնադրիլ յաշակերտանս միաւորական ասի Թուով և ոչ բազմաւ[որական]· որպէս և զՌոստակիսէ ասէ, ձեռնադրեաց[11] և տացէ նոցա, և ոչ Թէ տացեն, զոր և, ասէ, ձեռնադրեաց և ետ առանձնակի իշխանութեամբ· և Թէ ոչ ունէր աւելի աշխճան քան զեպիսկոպոսաց, անկատար, ըստ քեզ, գտանին դործեցեալքն:

Ո՞ւր ապա տանիս զասացեալսն վասն սուրբ առաքելոցն իւրաքանչիւր ումեք: Ընկալաւ, ասէ, այս անուն աշխարհ ձեռնադրութիւն յայս անուն առաքելոյ,* և առ հասարակ միաւորականօք վարին Թուով ասացեալքն· կամ ո՞ւր գտանի, որպէս ասացաք, ի պատմոդաց [Նւ]Սեբեա[յ] կամ Սոկրատայ քան զ·Դ· աԹոռոց միայն կարգաբանութիւն եպիսկոպոսաց՝ Նրուսադէմի և Հռովմայ [Ա], Անտիոքայ և Ակէքսանդրի· միԹէ ընդ ամենայն աշխարհս չորս[1] միայն բաւէին եպիսկոպոսք, օ՛ն ա՛նդր, այլ զոր ի վեր քան զեպիսկոպոսքն էին պատմէ, և զայլն գիտողայ [Թողու][2] իմանալ· ուր ապա յետոյ ի բազմանալ քարոզութեանն՝ սուրբ Ժողովն Կոստանդնուպօլսի [Բ 135b] վասն խնայելոյ ի հեռաւորացն կարիս զչորեսին[3] գլխաւոր աԹոռս յ·Լ· զարձեալ աձեցուցին աԹոռս, զի մի [յանհասութենէն][4] զրկիցին, և մի՛ զարձեալ արտաքոյ կարգելոցդ ինքնիշխանականօք խաղակե[ս]ցին[5] անկարգութեամբ:

Ա՛յս են հանգամանք ·Բ· և ·Դ· եպիսկոպոսաց այլոցն[6] համաձայնութեամբ և ընծայական ԹղԹով[7] մայրաքաղաքացւոյն ձեռնադրել պատրիարգ և ոչ լոկ եպիսկոպոս:

Ուսի՛ր, ոչ որպէս քեզ Թուի, Հայրապետն վասն Աւան քաղաքին կամ արքայական դրան եպիսկոպոս դոլով այսքանօք միայն առաւելուլ զահեղիցութեամբ,[8] ապա Թէ ոչ պարտ էր ի տեսլեանն[9] սուրբ Հուսաւորչին զմիապետութիւնն ի վերայ Ալբիանոսի տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու արքայական դրան բանակին, որում և ըստ քեզ աւելորդ էր քան զԱլբիանոս այլում կարօտանալ եպիսկոպոսի, այսինքն Ռոստակիսի[10] կամ այլ ումեք·[11] իսկ ապա Նրուսադէմի և Ակէքսանդրի և Անտիոքա[յ] եպիսկոպոսքն յոյժ կրաներագոյնք են, վասն ոչ զոք[12] ունել Թագաւոր, ի ձեռն որոյ զահափառեալ բարձրանային քան զընկերսն:[13]

1· Բ չիք՝ կարգել անձամբ·
2· Բ տա· 3· Ա կարգել եւ՚՚ս·
4· Ա յաւելն
5· Բ չիք՝ եւ·
6· Ա հայրապէն
7· Ա բռնադ՚՚տիլ·
8· ԱՒ Թուոցն·
9· Ա չորեք հարիւրոցն Բ դնքծոցն·
10· Բ ձեռնադրեց·
* «Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան եբուսադէմ · · ·
— Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան Ակէքսանդրիայ մեծ · · եւն· Տես կանոնք Առաքելոց· (Յ· 736—2 եր· 14)·

4· Ա չոր· 2· ԱՒ Թուով·
3· Ա զ·դ·ան· Բ զ·դ·ն·
4· ԱՒ յանհաւատութենէն ?·
5· ԱՒ Խաղրակեցին = խաղրակեսցին կամ խաղրակիցին· Բայական այս՝ անուշադիր մնացած՝ միջին ձեւը (եցին=եսցին, իցին) բաւական յաճախ է երկաթագիր դրութեանց մէջ, տես մանաւանդ տաճարեցոյց դարի ձեռագրում՝ թ· 102 Գէորգ· Յուցակի·
6· Ա այլոց·
7· Բ Թխտով· 8· Բ գահիրիցութեամբ·
9· Ա ի տեսլեան·
10· Ա ոստակիսի· 11· ԱՒ այլումք=այլում ումք·
12· Ո վ՚՚ս ոք զոք· 13· Բ զնկերսն·

Ընդէր ոչ կամիս հաւանիլ օրինական առաջադրոցն, որ ի միաբանականութիւնն կրթել միշտ հանդիսանայր։ Երիցս [4] անգամ ի տարւոջն յանդիման լինել օրինադրէ բոլոր Իսրայէլի եկանել ի տեղին, զոր ընտրեսցէ Տէր և դայն՝ ոչ գատարկաձեռն. այլ դիտեմ զի պարսաւ առ ի քէն" ոչ գատարկաձեռնդ" յիշատակել, որ ասես՝ Ո՞վ կացոյց զիս կապալատէր կաթողիկոսի, և զայն ոչ ածես զմտաւ, [Բ] եթէ զբոլոր ձեռամբ անկեալքս քոյով ոմ [2] կացոյց քեզ պարտապան և անողորմապէս [3] գանձել տոկոսաւորուն զօշաքաղութեամբ, ոմ զերաշանցեալդ քան զՊօղոս և ի յերրորդն ժամանեալ յերկին [4] և զևան անձառականն լուեալ, անվաւեր քեզ համարեալ Պօղոսի միաձայնութիւնն առ ի ժողովել զպատուն երբեմն ի կողմանս Ասո[ւ]ոյ, փութալով ինքն և Բառնաբաս [5] եկանել յԵրուսաղէմ առ ի [Ա 211a] պաշտել զսուրբսն, և երբեմն ի կողմանս Աքայեցւոց և Թեսաղոնիկեցւոց, [6] բազում նախանձայորդոր հնարիւք վաղվաղել ի պաշտօն սրբոցն, որ յԵրուսաղէմ:

Այլ դու Արամին աշակերտեալ անցուցեր գնովաւ, զի նա Թերևս զպատուղ երախայրեացն միայն արդելուլ բաջաղէր, այլ դու բնաւին զՀայրապետականս բառնալ զաթոռն ձեռնարկեցեր, զիանհոգ [յ]ընծայաբերութենէ սատասցիս կեանս: Բայց առ [7] այժմ թողցուք՝ որ ինչ [ղ]պղտաբերութենէ իւրում ժամանակի, եթէ տացէ Տէր: [8]

Բայց ապա Թերևս ասասանօր պատճառես [9] քոյին հանապազասուտ պատճառաւորութեամբդ, իբր Թէ ի հնուանն էր այն օրինադրութիւն ի մի միայն ժողովել նուիրական տեղի և քահանայութեան, յաղագս կարճելոյ զրազմաստուածութիւնն [10] և ոչ այժմ. ուր և Պօղոս ընդ ամենայն տեղիս ամբառնալով զձեռս առանց երկմտութեան. բայց լուր՝ որպէս ի նախնումն ասէ յՕբէդեան, [11] Եթէ բան ինչ դատաստանի վրիպեսցի ի քէն՝ ելցես ի տեղին զոր ընտրեսցէ Տէր, և յայտնեսցես այնոցիկ [Բ 136a], որ ի տեղւոջն իցեն [1] զոր ընտրեսցէ տէր. և զոր միանդամ ասիցեն քեզ որ ի տեղւոջն իցեն քահանայ կամ [ղևտացի] [2] բան, և եթէ ոչ արասցէ իրս . . . [հըպար]տութեամբ [3] սրտի առ ի յոչ հնազանդ [լինելոյ] [4] այնոցիկ որ ի տեղւոջն իցեն զոր ընտրեսց[է Տէր] [5] սատակեսցի անձն [6] այն յԻսրայէլէ և բարձէք զչարն ի միջոյ ձերմէ, և այլոցն տեսեալ երկիցեն: [7]

Բայց ոչ յայնժամ և եթէ, այլ և առաքեալքն ըստ ամենայն խնդրոյ ելանէին յԵրուսաղէմ և անդ կատարէին զընտրութիւն իրացն առաջի Տեառն, [8] թէպէտ և զիաէին զասառած ամենայն [9] ուրեք:

Եւ արդ մեթէ ոչ յամենայն յամի հրամայեցաւ ժողովել երիցս ի տարւոջն, այլ ոչ ունիս ասել՝ ոչ յառաքելոցն ատացեալ կամ զործեցեալ [10] և ոչ զկնի նոցա հարանցն սրբոց, ընդ որս և մերն սուրբն Սահակ, թէպէտ և ոչ այլ իւիք, այլ ի պատճառս լուսաւորութեան իւղոյն հրաւիրէ զդաշն առաջի [հայրապետականին] [11] ամառոյ և անընդունելի ասէ դանցեալ տարւոյն զօձման [Ա] իւղ, [12] զի Թերևս այնու կարասցէ ձգել առ ի միաբանութիւնն. բայց ոչ օտար է սաղդ իմացողացդ, զի որպէս յայնժամ ազգ մի և եթ զոլով ժողովուրդ Տեառն, այսինքն Իսրայէլ, և ի նոսայն [13] օրինադրէր ժողովել յասառածարնակն տեղի և քահանայապետս: Նմանապէս և առաքեալքն՝ ընդ որ անցանէին ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ աւանդէին նոցա պահել զկրամանս պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն [14] որ յԵրուսաղէմ. և այն զի

---

1. ԱՒ գ. 2. Ա քոյով. Բ քո ով.
3. ԱՒ անողոմ"պ. 4. Ա կորնթ. երկ. ԺԳ. 2.
5. Ա Գործ. ԺԱ. 29 եւլն.
6. Ա Փիլիպ. Գ. 16. 7. Ա չիք՝ առ.
8. Ա տէր տացէ:
9. ԱՒ պատճառէս.
10. Ա զբազա՛ծուի"ն.
11. երկ. Օր. ԺԷ. 8—13.

1. Բ ըլլեն
2. Երկու օրինակն էլ պակասերով, որ լրացնում ենք մեսրոպատառէս, հետեւելով ս. Գրքին:
3. Ա խստութեամբ.
4. Ա լինել.
5. Ա ընտրեաց տր. ած.=տէր աստուած:
6. Ա անձն այնձն.
7. երկ. Օր. ԺԳ. 20. 8. Գործ. ԺԷ. 2.
9. ԱՒ յամենայն.
10. Ա գործեցեալ կամ ասացեալ.
11. Ա Տրկնին Բ հայրակնին=հայրապետին.
12. Տես կանոնք Ս. Սահակայ, գլ. Ի. (Շ. եր. 128). նահե Սոփ. Հայկ. Բ. եր. 92:
13. Ան ի նցայն. 14. Ա յերիցանց.

Պօղոս՝ որ բաւական էր կշտամբել զՊետրոն [առաքելոց] [1] և զայլսն ևս [2] [Բ] համայն ոչ արհամարհեալ խրոխտացեալ զմիաբանութիւն պատուոյ անդրանիկ տեղւոյն, ցորքան մերձակայութեամբ վարէր՝ տարածումն քարոզէր: Իսկ ի լինել չորեքգերեան աշխարհի աւետարանաւն, թէպէտ նեղեցին զհարկն Նրուսաղէմի, այլ ամենայն ազգաց առ մերձակայն և հաւանելիան ոչ թողացուցին քակել ի [միաբանականէն] [3] պատուոյ:

Եւ փոխանակ սրբոյ քաղաքին յիւրաքանչիւր ի պատշաճն վայրի գաղափարեցին զաթոռն Երուսաղէմի, ըստ ամենայն մասանց աշխարհացն և յանձնիւրոցն գլխաւորագունիցն տեղեաց և վերակացուաց անճողոպրելի սահմանեցին լինել զպայման հարկին: Ուր և մեծն Ղևոնդիոս առ սուրբն Գրիգոր կարևոր քան զբնաւան խրատականս նորահաւատիցն զ՝անդն - երթևեկութեան ամբողջ պահել զհաստատութիւն պայմանաւորէ: Եւ ամենայն ազգ հաւատացելոց ի Քրիստոս անհնարին քան զամենայն ինչ զայս վարկանին՝ իւրաքանչիւր առաջնորդաց հաստացանել պաշտօն, այլ դու քանզի համապատիւ զքեզ կարդաս հաստատակացն հօր [4]...

Ոչ գիտեմ ո՞ւստի այսոքիկ ընձիւղեցան մահածին բողբոջք ըստ օրինակի վաղենաիանոսացն, որ ՀԴ· յաւիտեանս ի վեր քան զարարիչն ասեն, և զարարիչն անտեղեակ ասեն այնմ [5] յաւիտեանց, և զինքեանս յարարչէն ասեն եղեալս, բայց գիտութեամբ զինքեանս աւելի քան զարարիչն ասեն ճանաչել զ ՀԴ· յաւիտեանսն· զի արարիչն, ասեն, [Ա 211a] շնչական է, վասն այնորիկ ոչ գիտէ, իսկ մեք ամենեքեան, քանզի ունիմ [ք] սերմ [Բ 136b] յԱքամոթայ, վասն այնորիկ հոգևորք եմք և գիտունք քան զարարիչն [6] մեր· * ըստ որոց և քոյդ նմանին արկուածք:

Բայց ապէ [7] ասա՛ թէ այսօր կենդանի էր սուրբ Լուսաւորիչն՝ ասէիր զքեզ հաւատալ նմա և բնաւ ոչի՞նչ ունել նմա աւելի: Եւ եթէ ասես, եթէ Ոչ ես դու նման նման, ապա և ոչ դու սրբոյն Գրիգորի:

Բայց որ երիս միայն կարդաս [1] ասես յիկեղեցին և այլ ոչ ևս, ուստի՞ տուաւ քեզ այդպիսի գիտութիւն· գիտեմ զի զԴիոնէսիոս պատճառես, բայց զի՞նչ ասէ, ո՞չ առաքէն լինն մանկանաւնութեամբ զատուցանէ զնոսա և ըստ իւրաքանչիւր անուանցն էութիւնս և զօրութիւնս և ներգործութիւնս ասէ ունել· և զմերս քահանայութիւն նմանատիպս զոլ նոցայն [2] ասէ զարդուց, կատարողական սրբոբաղնադործութիւն երկնայնոցն քահանայապետութեանց զերազարդ նմանութեամբ արժանաւորեալս [3] և զատացեալն աննիւթ քահանայապետութիւնս նիւթական ձեռօք և կերպաւորականօք շարադրութեամբք զանազանել աւանդեաց· և այլո՞ւր ասէ, Որ այժմ օրհնի [4] քահանայապետութիւն դմի և գնոյն ունի զօրութիւն· և այլո՞ւր ասէ, Ոչ կատարեալ խորհրդածութիւն աստուածաբանութիւնն զմեր քահանայապետութիւնս ասէ, կատարումն զսա կոչելով նմա և սրբազան յանկումն, և ՀԵ երկնաւորին և օրինականին հաստատ կաթող միջնորդութեամբ զծայրիցն բուռն հարկանելով, ուրեմն հաղորդ լինելով իմանալեացն աստուածութեանց, իսկ ուրեմն զի և ինձանակօք զգալեօք զանազանի, զի միջին է երկնաւորին և օրինականին մերս [Բ] քահանայութիւն:

Արդ՝ եթէ ոչ թուով աշխարհանացն լինելոյ որոշմամբք ունի նմանութիւն մերս կարգաւորութիւն [5] իբր արդիօք զօրէ նմանիլ նոցայ, միթէ անմահութեանմ՞ կամ զօրութեանմ՞ կամ պարգեւութեամբ· և ո՛չ երբեք: Կամ ընդէր բնաւ աշխատեր ձառել զմիւս նոցա և ի նոյն [Ա] յարել զմերս, որ անմահիցն անկարելի է առանց իննակի թուոյ չափաւորեալ զընծրկս գերազունին և ապա առնել համարեալ մարդկայնոցս տուանցն պարգև· զի՞րդ հոգիդ՞նքս ի ձեռն սահմանուց միջնորդաց զօրին [6] մերձաւորիլ մեզանչականք զորով, ուր և լերինն Մ՛ովսէս միայն բաւականանայր հպիլ առ աստուած մտանելով ի յամպն: * Եւ Յեսու Յէ-

1· ԱՒ պակաս· 2· Ա· Գործ· ԺԱ· 41·
3· ԱՒ ի միաբանականէն = ի միաբանականէն ?·
4· Ինձ թուում է պակաս·
5· Բ այնմն· 6· Ա ք՛նզի զարըչն·
7· Ա ասէ· * Երեւի եպիտանիոյ·

1· Ա կարգս միայն·
2· կամ՝ նոցայոցն 3· Ա արժանաւորեալք·
4· Բ ա՛նի· 5· Ա — ս 6· ԱՒ զօրէն·
* Ա· Ելից ԻԳ· 13· Թուոց ԺԱ· 24·

պէտ և առաւել քան զայլսն գտանիւր, այլ ոչ հաւասար Մովսիսի, և ծերքն ի նոյն հոգւոյն [1] առեալ յայլսն կացեալ խոնարհագոյն աշխատանի, և Ելդադ [և Մովդադ [2]] հրաւիրեալք ի նոյն թիւ, [և տեսութեան աստուածա]շնականի արժանացեալ շնորհի, [4] բայց ի նոյն մատուցեալ տեղի, այլ քան զայլսն նոքա հպագոյն լինել ժողովրդեանն։

Եւ ահա յայտ եղև լինն որոշմունք չափոյն և կայենից. ա [5] Մովսէս, բ Ցեսու, գ ծերքն, դ ի բանակին մնացեալքն, ե ապա քահանայն մեծ և ղկնի [ը]քահանայքն և ապա [է. ը. ը.] Ղևտացիքն յերիս որոշեալ պաշտամունս, որով լինն պարտնակի թիւ դասու և կայնի։

Դարձեալ ըստ այլ օրինակի զատանին Ղևտացիքն ի լինն որոշմունս. նախ Մովսէս և Ահարոն ի տունն, զոր առանձինն զատուցեալ սրբէ հրամանն [Ք 137a] և ապա գունդքն Դեթսոմիի, [Ղորխնի և Սեմէի ։Ք. գասք և Կահաթու ։Դ. լինին գունդք. [6] Սահատ, Ամբրամ, Քեբրոնի և Ողիել. և ապա Մերարեայ ։Ք. գասք, Մոողի* և Մուսի, որ են առանց ամենայն հակառակութեան լինն գունդք իւրաքանչիւր զատուցեալք։

Որ ի յետինս ի Ցեառնէ, ասացաւ՝ նրբտեալ յաթոռն Մովսիսի գպիրք և փարիսեցիք [7] և ծերք ժողովրդեանն և օրինականքն և ապա քահանայապետք և Ղևտացիք ։Գ. ցեղք, Դեթսոմիի, Կահաթ և Մերարի։

Նաև թագաւորականին բերէ զնոյն տիպս կարգեալ ի Մովսիսէ. նախ թագաւոր և ապա զատաւոր, զրեթէ հաւասար նմին, իշխանք և աշխարհահամարք, [8] գպիրք որ ի բանակին [Ա 212a] օրինադրէին, և զօրավարք զօրացն և հազարապետք և հարիւրապետք, յինանապետք, տասնապետք, [9] որ են թուով լինն։

Նախ զառաքեալս ասէ Պօղոս, և որ ի կարգին է։ Եւ թէ ուսմամբ [1] ի հոգւոյն տուեալ է այլովքն զնոյն ընդ թիւ, բայց ոչ ժամանակս բաւէ որ լինչ յաղագս իննակի գաղափարացն [2] իսկզբանէ ձեռնադրէ զնոսա իւրք և բանք։ Որով ոչինչ է [3] օտար և կարգ եկեղեցւոյ. ա. պատրիարգք, բ. արքեպիսկոպոսք, [գ.] մետրապոլիտք, [դ.] եպիսկոպոս, [ե.] քորեպիսկոպոս, [զ.] քահանայ, [է.] սարկաւագ, [ը.] կէս սարկաւագի, [ը.] գպիրք, որով վարի եկեղեցի։ [4]

Այլ գիտեմ որ զձեռնադրութիւնս կարգացն որ ի Դիոնէսիոս կայ [5] ընդդէմ բերես, բայց արդ ո՞ւր գտանի յայն գիրս ժողովել եպիսկոպոս և ձեռնադրել զայլ ոք եպիսկոպոս. վասն զի և այն [ի] եթէ զզուշացայի ոք՝ ըզնոյն միապետական յայտնէ [իրակերտութիւն]. [6] քանզի ասէ՝ Քահանայապետն ի կատարումն մատուցեալ ։Ի. ոտիւք ծունր եդեալ առաջի ատենաձայնին սեղանոյ, ի վերայ գլխոյն ունելով զատենաձայնն ասացեալս և զքահանայապետականն ձեռնադիրէ քահանայապետականն [7] ասացյ ձեռս [8] իւր բազմաց, եթէ ձեռն՝ որ զմիոյ նշանակէ. նմանապէս և ի քահանայապետականսն կատարմունն զնոյն ասէ, ի վերայ գլխոյն ունելով զքահանայապետականն աջ, որ է միոյ. նոյնպէս և սարկաւագաց։

Արդ՝ եթէ ոչ լինքնիշխան կարգաւ կատարեալ գտանի կատարողն ի վեր քան զքահանայապետս, թէպէտ և համանուանակի ասի, այլ չէ, ինչ փոյթ գրոց վասն այդպիսեաց. որպէս յամենայն տեղիս գտանի եպիսկոպոս ասել և վերագունեցին քան զքահանայապետ. բայց որ ։Գ. միայն կոչմամբք բաւականանալ ասես եկեղեցւոյ, ո՛չ բնաւ յիրաւի։ Թէպէտ և ասի ի կանոնս Նիկիայ՝ եպիսկոպոս, քահանայ և սարկաւագ, [9] բայց տե՛ս, զի զհրամայողին [10] անկի

---

1. Ա հոգւոյ. 2. Ա պակաս՝ եւ Մովդադ
3. Ա պակաս՝ եւ տեսութեան աստուած.
4. Ա շնորհի արժանացեալ.
5. Ա ա, բ-ի փոխանակ 1, 2, 3… .
6. Ա դասք.
7. Ա Մատթ. ԻԳ. 2.
8. Ա ձանմրք Ա ձհանամարք. * ԱՌ Մրոզի.
9. ԱՌ ոպք, ճապք, ժապետք.

4. Ա ուրեմն. 5. Ա գրփեցն. 6. Ա չիք՝ է.
4. Ա 1 պատրիարգք, 2 արգ ե՞պսք, 3 մետրապոլիտք, 4 ե՞պսք. 5 քորե՞պսք. 6 քհնայք. 7 սկզբ. 8 կէս սր՞կդի. 9 գպիրք. որով վարի եկեղեցի.
5. Ա կա 6. ԱՌ Իրաշխ՞րտութիւն, տես ,իրակերտութիւն՞՞ բառը Հայկ. Բառ.
7. Ա քննչակ՞ց. 8. ԱՌ ծեռն.
9. Տես կան. կդեմայ. ,,Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ՞՞ եւ այլն (Ջ. եր. 18—28)։
10. Ա զհրամ՞ղէն.

անմարթ է նուագել, մի՞ ով է որ ասէ՝ն՝[1] լուծցի և որշեսցի, եթէ ոչ վհատցին քան զ .Գ. ասացեալսն, որ են .Գ.: Եւ է ուրեք ի նոյն [Ա] Կանոնս կղեմէայ, մի ասէ. Եպիսկոպոս, քահանայ և սարկաւագ կամ դրակարգաց կամ սաղմոսերգող՝ պէտք[2] և զուրբաթ և զսուրբ քառասունսն[3] ոչ պահեսցէ.[4] և դարձեալ՝ Որք եկեալ են ի վիճակ չէ ամուսնացեալքն և կամիցին ամուսնանալ՝ հրամայեմք զդրակարգացս և զսաղմոսօղս միայն:[5]

Նաև Առաքելական Կանոնքն բնաւ ոչ յիշատակէ այլ ինչ, բայց երիցունս և սարկաւագունս և կէս սարկաւագի [Բ 137b], այլ ոչ եպիսկոպոս երբէք.[6] արդ՝ միթէ չէ՞ պիտանացու եպիսկոպոս, որով[հետև][7] առաքեալքն ոչ յիշատակեն—քա՛ւ լիցի, մի այս սովորութիւն է զրոց, է՛ ինչ որ պատմեն և է՛ ինչ որ ի միտս ընթերցողին ապաստան առնեն:

Բայց և Դիոնէսիոս, յոր դուն յուսացեալ ես, թերևս յայլում վայրի ոչ շատանայ երիւքդ[8] միայն, այլ աւելի քան զեօթն[9] շարադասէ, յորում առ Դիմոփիլոս գրէ մեղադրականս, որ էր կիսատարկաւագ:[10] Եւ արդ՝ դու, ասէ, բանիւ որ ըստ արժանաւորութեան են որշէ, այսինքն զնուաստագոյնսըն քան զքեզ, իսկ քեզ աստուածայինքն պաշտօնեայք եղիցին խրատիչք, որ են սարկաւագունք, և նոյա քահանայքն, և քահանայիցն քահանայապետք և քահանայապետիցըն առաքեալքն.[11] և որ ի նոցանէ սխալեսցէ՝ ի համակարգիչն կանոնեսցի, և ոչ դարձցի կարգ ի կարգի վերայ: Ահա՛ ոչ զադարեաց յերիսն և եթ, այլ ըստ ժամանակին ձառէ զպիտանացուսն, ուստի ճանաչել արժան է, մի յոյժ պիտանացու է իննապատիկ աշխիճանն[12] ի մէջ եկեղեցւոյ, ուր և առաքեալքն կարօտացան ինն անգամ առնուլ հրաման և կոչումն և այն մի ի Քրիստոսէ, որ միոմն բաւական էր զբնաւսն կատարել, բայց ոչ կամեցաւ անցանել զկարգաւն զոր տալոց էր եկեղեցւոյ[2] իւրում:

Քանզի նախ ընտրեաց զերկոտասանսն և ետ իշխանութիւն նոցա նշան[ս առնել և եդ][3] անուանս յառաջադոյն, որ է առաջին աշխիճան. երկրորդ՝[4] յորժամ առաքեաց և ետ պատուէր և իշխանութիւն [Ա 212b].[5] երրորդ՝ յորժամ ի [Բ] կոչմանս Փիլիպպեայ կեսարու տայ իշխանութիւն կապել և արձակել. դարձեալ՝ ի հարցանելն Պետրոսի՝ նոաքիք, ասէ, յերկոտասան[6] յաթոռս.[7] և ի վերնատանն սուրբ պատարագին տայ հրաման.[8] և յետ յարութեանն փչէ ի նոսա, ասէ, առէք Հոգի սուրբ, եթէ ումիք թողուք զմեզս թողեալ լիցի. և ի Գալիլեայ մկրտութեան տայ հրաման.[9] և [ի] համբառնալն չնորհէ աստիճան քահանայութեան.[10] և գալստեամբ Հոգւոյն[11] սրբոյ զկատարեալն տայ զպարգևաբաշխական զօրութիւն:[12]

Արդ՝ միթէ այսք ամենայն լուծի՞ք և զնին միանգամ ըստ քում ասացելոցդ: Նաև բազում ի հայրապետաց Հայոց յեպիսկոպոսութենէ կոչեցան, բայց ոչ են ըստ մեզ լուծեալք, այլ առաւել աստուածատեսակեալք: Այլ քեզ ըստ քոյդ եղիցի հաւատոյ և մեզ ըստ մերոյ. և յամենայնի աստուած փառաւորեսցի, այժմ և յաւիտեան յաւիտենից ամե՛ն[13] և յամենայն ժամ:

ՎԵՐՋ

2 յուլիս 1897.

---

1. ԱՒ ասեն.
2. ԱՒ զղջք.
3. ԱՒ խան.
4. կան. կղ. գլ. կԹ:
5. կան. կղ. գլ. ԻԹ:
6. կան. Ա՛ռ. գլ. Զ:
7. = որովհետեւ.
8. Ա երիւք.
9. Ա զ է՛ն, Բ զ է՛.
10. Տես Դիոն. Արիսոլ. «Առ Դիմոփիլոս ապաստասր», եւլն. Զարք. Թարգ. եր. 386–7:
11. Ա առքե՛ք.
11. Ա աշտիճան.

2. ԱՒ յեկեղեցւոյ.
3. ԱՒ պակաս. լրացնում ենք մատուռրատէս: Ա Մարկ. Գ. 13.
4. Ա Ղուկ. Թ. 2. 5. Ա Մատթ. ԺԶ. 18.
6. ԱՒ բժան.
7. Ա Ղուկ. ԻԲ. 30. 8. Ա Յովհ. Ի. 22.
9. Ա Մատթ. ԻԸ. 19. 10. Ա Ղուկ. ԻԴ. 49.
11. Ա գոգւոյն.
12. Ա Գործ. Բ. 4.
13. ԱՒ այսպէս. ինձ համար անհասկանալի:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ·

Ցանուն Մ. Ց. Էմինի *բարձրագոյն հաստատուած* ազգագրական ֆոնդը հրատարակել է Ռուսաց լեզուով բազմավաստակ հայագիտի երկերի երրորդ հատորը՝ *переводы и статьи Н. О. Эмина* վերնագրով—«Մ. Ց. Էմինի թարգմանութիւնները և յօդուածները»·

Այս հատորը Հայոց հոգևոր մատենագրութեան է նուիրուած և յօդուածների մեծ մասը (վկայաբանութիւններ) յընթացս 1859-1882 թուականների տպագրուած են *Православное обозрѣніе, Русскій архивъ* և այլ պարբերական ռուսաց մամուլի մէջ կամ Էմինի հրատարակութեանց ծանօթութիւններն են կազմել, նորութիւն են հետևեալ գլուխները՝

VI Տեսիլ Աստուածածնին Մարիամու, զոր հետս տանջանք (!) մեղաւորաց·

VII Պատմութիւն երանելւոյն Զոսիմոսի, յորժամ զմտաւ ածէր գնալ յերկիրն երանելեաց·

VIII Պատմութիւն Յովսէփայ և կնոջ նորին Ասենէթի· (այս թարգմանութեան վերջին երեք երեսը պակաս է եղել ձեռագրի մէջ, որը լրացրել է պ· Գրիգոր Խալաթեանը իւր թարգմանութեամբ)·

Շատ նշանաւոր է մեր հայագիտի նամակը առ Լազարեան ճեմարանի հոգաբարձու Խաչատուր Լազարեան, որով քննում է Տէր Գաբրիէլ վ· Այվազովսկու «Մի քանի վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, տպագրեալ Հրամանաւ Տ· Յակովբայ աստուածընտիր պատրիարքին Կ· Պոլսոյ ի պետս ազգային ուսումնարանաց, Փարիզ, 1858»·

Էմինը իւր նամակի մէջ խիստ քննադատութեան է ենթարկում յիշեալ դասագիրքը և ցոյց տալով նորա կաթոլիկական ոգով լինելը, շատ-գով և նախանձախնդիր է հանդիսանում Հայոց եկեղեցւոյ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան· «Նայեցէք, ասում է Էմինը վերջաբանի մէջ, նամակիս վերայ ոչ իբրև մի մասնաւոր գրութեան, այլ իբրև մի բողոքի Հայոց եկեղեցւոյ զաւակների մինի կողմից, որ ի դէմս իւր հայրենակիցների խոր խոցուած է Հ· վարդապետի (Այվազովսկու) անարգական վերաբերութեամբ դէպի մեր ազգի սրբազնագոյն աւանդը, այն է՝ դէպի նորա եկեղեցւոյ վարդապետութիւնը»· Ի վերջոյ խնդրում է միջոցներ ձեռք առնել ժամանակին չարիքի տարածուելու առաջն առնելու համար, որ շատ տխուր հետևանքներ կարող է ունենալ Ռուսաստանում բնակուող հայերի համար·

Պ· Խալաթեանը ծանօթութեան մէջ շատ իրաւացի նկատում է, որ Հ· Գաբրիէլը, (յետոյ արքեպիսկոպոս) վերջը փոխել է իւր հայեացքը կաթոլիկ եկեղեցւոյ մասին· Ապացոյց սորան նա բերում է Հ· Այվազեանի թարգմանական հրատարակութիւնը՝ «Ցանուսի յաղագս պապին» գիրքը, որ ուղղած է պապի անսխալականութեան վարդապետութեան դէմ·

Այս հատորի մէջ աչքի է ընկնում նաև մի փոքր յօդուած, որ հանած է *Русс. Вѣд.* լրագրի 1879 թուականի 49 համարից և մի ընդդիմախօսութիւն է նոյն տարուայ *Моск. Вѣд.* 30 համարում լոյս տեսած մի թղթակցութեան Կարսից, որի մէջ յօդուածագիրը ապացուցանել էր ճգնում, թէ Կարսի Առաքելոց եկեղեցին՝ Գումբէթ-Ջամին, Ցունաց եկեղեցի է եղել·

Էմինը Ստեփաննոս Տարոնացւոյ և Վարդան Մեծի պատմութիւններից վկայութիւններ առաջ բերելով հաստատում է, որ այդ եկեղեցին շինել է Աբաս Հայոց թագաւորը և օծել է տուել Հայոց եկեղեցւոյ ծիսով՝ հակառակ Արիստակիայի Բեր իշխանի խրոխտ ցանկութեան օծելու նորան Ցունաց ծիսով· Ցայտնի է, որ Աբասը յաղթեց Բերին և կուրացրեց նորան, իսկ Առաքելոց եկեղեցին օծուեցաւ Հայոց եկեղեցւոյ ծիսով·

Գրքի վերջում զետեղուած է Հայոց պարականոն գրքերի ցուցակը, որ առած է Թիֆլիզում 1863 թուին հրատարակուած ս· Էջմիածնի մատենադարանի ձեռագիրների ժողովածուից·

Գիրքը բաղկացած է 367 երեսից և տպագրուած է Մոսկուայում· Գինն է 2 ռ··

Ցառաջաբանը I — XXI գրել է պ· Գրիգոր Խալաթեանը·

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ·

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետևեալ գրքերը·

1· Переводы и статьи Н. О. Эмина, 3-й вып. Москва, գինն է 2 ռ··

2· Հռո կինը, Ա· Ահարոնեան· Նիւթեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար· Թիֆլիզ, գինն է 40 կ··

3· Նեռլէօն և Պատրաշը, Ուիդա· Թիֆլիզ, գինն է 10 կ··

4· Armenische Grammatik von H. Hübschmann, Leipzig. 1897·

Ծայտնում եմ իգիտութիւն

ՄԵԾ. ԵՐԵՑՓՈՒՄԱՆՑ

որ պատրաստում եմ ԵԿԵՂԵՑԻՆԵՐի համար ընտիր ԻՒՂԱՆԵՐԿ·ՆԿԱՐՆԵՐ ԿՏԱԻի ՎՐԱՅ, արժան եւ ձեռնտու գնով. պատուէր տուողները պէտք է յայտնեն ցանկացած նկարի մեծութիւնը: Ցանկացողները թող բարեհաճին դիմել ինձ հետեւեալ հասցէով՝

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Նկարիչ՝ Ա. ՍԱԳԻՆԵԱՆ.

ՏՊԱՐԱՆ

ՄԱՅՐ ԱՔՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱՄՆԻ

Վաճառում են

ՀԵՏԵԻԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ·

		Ռ.	Կ.
1·	Վկայաբանութիւն ԳՈՐԻԱ և ՇՄՈՆԻ· (Ագաթանգեղոսի աղբիւրներից)՝ —գրեց Գ. ՏԷՐ—ՄԿՐՏՉԵԱՆ	—	50
2·	ՊԱՐԶ [illegible]ՆԵՐ· (Գ· գրքույկ) —գրեց Ա.Հ. ՆԱՋԱՐԵԱՆՑ	—	20
	[illegible]ՄՈՒԹԻԻՆ ՀԻՆ, ՈՒԽՏԻ· Ամերիայում Վ· ԳԱԼՑԱՑԵԱՆՑԻ . . .	1	—
4·	ՆՈՑՆ, ՆՈՐ ՈՒԽՏԻ (Պատկերազարդ) ·	—	50
5·	ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱ-ԾՈՒԹԻԻՆՆԵՐ, թարգմանեց Գերմա-ներէնից ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ Ա—Ժ· գիրք, իւրաքանչիւր գիրքը .	—	20
6·	ՍՈԿՐԱՏԱՑ ՍՓՈՂԱՏՈՒԻԿՈՍԻ եկեղ· պատմ· Աշխատ· ՄԵՍՐՈՊ Վ· Տ· ՄՈՎՍԻՍԵԱՆ	2	—
7·	ՍՈԿՐԱՏԱՑ (փոքր) պատմ եկեղ· Մ·Վ·Տ·Մ·	—	60
8·	ՏԷՐ—ՊԵՏՐՈՍ Ա·ԳԵՏԱԴԱՐՁ· Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ—	—	10
9·	ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, Դ· գրքույկ· . . .	—	20

Շուտով լոյս կը տեսնէ

1· Դաստիարակութիւն եւ ժառանգականութիւն Մ· Գիւյօ-ի, թարգմանեց Ս. Մ.

Մատուցի տակ է

1· Հայաստանեայց եկեղեցւոյ Ս· կարգը, Արշակ Տէր Միքելեանի·

Գնահատով ձեռնհասներին 20% զեղչ·

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒՐՉԻՆ

ՉԱՆԳԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԻՆԺԵՆԵՐՆԵՐ

ԵԱՐԱԼԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

ՏՓԽԻՍՈՒՄ

ՁՈՒԼՈՒՄ Է ՆՈՐԵՐԸ ԵՒ ՎԵՐԱՁՈՒԼՈՒՄ Է ՀՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

(*մինչև* 1000 *փութ կշռով*).

Գործարանում ձուլուած զանգակները յայտնի են իւրեանց գեղարուեստական ձևերով և հիանալի ձայնով· զանգակի վերայ նկարուում են սրբերի պատկերներ համաձայն պատուէրը տուողների ընտրութեան: Մանրամասնութիւնների՝ ամեն լեզուներով՝ խնդրում են պատուէրները ուղղել՝ Въ контору чугунно—литейнаго, машино—строительнаго и колокольнаго заводовъ инженеровъ Яралова и Алиханова, Тифлисъ, Александровская ул., собственный домъ, вблизи вокзала.